Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ, Ն. ՏՈՂԱՆՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

5-րդ դասարանի դասագիրք

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ

ՄԱՆՄԱՐ MANMAR

2013

ՀՏԴ 373.167.1: 908(479.25) (075.3)
ԳՄԴ 26.891 (2Հ) g72
Հ 872

Խմբագրությամբ՝ պրոֆեսոր Պ. Հ. Հովհաննիսյանի և Վ. Ս. Ղանդիլյանի

Հովսեփյան Ա.
Հայրենագիտություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 5-րդ
Հ 872 դասարանի համար /Ա. Հովսեփյան, Ա. Գյուլբուդաղյան,
Ն. Տողանյան. -Եր.: ՄԱՆՄԱՐ, 2013. -160 էջ:

ՀՏԴ 373.167.1: 908(479.25) (075.3)
ԳՄԴ 26.891 (2Հ) g72

ISBN 978-9939-62-099-2

© Ա. Հովսեփյան Ա., 2013
© Գյուլբուդաղյան Ա., 2013
© Տողանյան Ն., 2013
© ՄԱՆՄԱՐ, 2013
© Դասագրքերի շրջանառու հիմնադրամ, 2013

ԴԱՍ 1

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է

Հայաստանը հայերի հայրենիքն է: Դա նշանակում է, որ մենք այստեղ ենք ծնվել ու մեծացել: Այստեղ են ծնվել նաև մեր նախնիները, մեր ծնողները, հարազատները, ընկերներն ու բարեկամները, շատ ու շատ ուրիշ մարդիկ: Հայաստանը հայրենիքն է նաև միլիոնավոր հայերի, որոնք ապրում են հայրենիքից հեռու:

Մեծ և Փոքր Մասիսները՝ տիեզերքից

Հայաստանն իրենց երկիրն են համարում նաև այստեղ ապրող այլ ազգերի մարդիկ՝ եզդիներ, ռուսներ, ասորիներ, հույներ և ուրիշներ:

Հայաստանը մեր երկիրն է, մեր ընդհանուր տունը, և մենք սիրում, պաշտում ու հպարտանում ենք նրանով: Այդ սերն ու նվիրվածությունը մենք արտահայտում ենք ոչ միայն խոսքով, այլև գործով:

Հայրենիքի համար շատերն են հերոսական գործեր կատարել, հարկ եղած դեպքում՝ իրենց կյանքը զոհել:

Սիրել հայրենիքը նշանակում է ճանաչել այն, գիտենալ նրա անցյալը, գնահատել մեր նախնիների ստեղծած ու մեզ փոխանցված անգնահատելի ժառանգությունը: «Հայրենասիրությունը սկսվում է հայրենագիտությունից»,– սա հայ մեծ գրող Ռաֆֆու խոսքն է:

Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես,
Դու սրտիս մեջ ես, ոչ լեզվիս վրա,
Իմ սրտի միջից՝ թե սիրտս ճեղքեա՝
Դրոշիդ բոցը պիտի հուրհրա:

Հովհաննես Շիրազ

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գիտեք Հայաստանի մասին:
2. Ինչո՞ւ Հայաստանը համարվում է նաև այն միլիոնավոր հայերի հայրենիքը, որոնք ապրում են այլ երկրներում:
3. Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս է արտահայտվում հայրենասիրությունը՝ հայրենիքի մասին գեղեցիկ խոսքեր ասելո՞վ, բանաստեղծություններ գրելո՞վ, երգեր երգելո՞վ, թե՞…
   Քննարկե՛ք և փորձե՛ք պատասխանել այս հարցին:

ԳԼՈՒԽ 1
ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

ԴԱՍ 2
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

Ասում են, որ շատ դարեր առաջ հայոց լեռները հաղթանդամ ու հսկա եղբայրներ են եղել: Առավոտյան արթնանալով՝ նրանք սովորություն են ունեցել նախ կապելու իրենց գոտիները, հետո միայն բարևելու իրար: Բայց երբ եղբայրները ծերանում են, էլ չեն կարողանում վաղ արթնանալ: Մի օր էլ, ուշ արթնանալով, նրանք մոռանում են կապել գոտիները և, հակառակ սովորության, իրար բարևում են առանց գոտիները կապելու: Աստված, տեսնելով դա, պատժում է եղբայրներին. նրանք քարանում են և դառնում լեռներ, նրանց գոտիները դառնում են կանաչ դաշտեր, իսկ արցունքները՝ անմահական աղբյուրներ:

Սև և Կասպից ծովերի միջև, Կովկասյան լեռներից հարավ, կա մի «լեռնային կղզի», որն անվանում են Հայկական լեռնաշխարհ: Այն մեր պատմական հայրենիքն է: Շրջակա մյուս տարածքներից Հայկական լեռնաշխարհը տարբերվում է իր բարձր դիրքով: Ծովի մակարդակից լեռնաշխարհի

միջին բարձրությունը 1700 մ է: Հայկական լեռնաշխարհից հարավ-արևելք ընկած է Իրանական բարձրավանդակը, իսկ հարավ՝ Միջագետքի հարթավայրը:

Հայկական լեռնաշխարհի ամենահայտնի և ամենաբարձր լեռը Արարատն է՝ 5165 մ բարձրությամբ. այն անվանում են նաև Մեծ Մասիս: Երբ Արարատյան դաշտից նայում ենք Արարատին, նրանից արևմուտք, հորիզոնում, նշմարվում է կնոջ վարսերի պես ձգվող Հայկական Պար լեռնաշղթան:

Հայոց աշխարհի մեծ պարոնը...

Կոստան Զարյան

***

– Համայն աշխարհում
Այդ քանի՞ երկիր Արարատ ունի...

Պարույր Սևակ

***

Նայի՛ր, որդիս, Արարատին,
Մեր նախահայր Հայկն է հավեր...

Հովհաննես Շիրազ

Վերևից նայելիս Հայկական լեռնաշխարհը հիշեցնում է հզոր պարսպով շրջապատված միջնաբերդ[1]: Հյուսիսային պարիսպը Արևելապոնտական լեռներն են, որոնց զառիթափ ու անտառապատ լանջերը մխրճվում են Սև ծովի ջրերի մեջ: Հարավային պարիսպը Հայկական (Արևելյան) Տավրոսի լեռներն են, որոնց

1. **Միջնաբերդ** – 1. Պաշտպանական ամրացված կառույց քաղաքի կամ ամրոցի մեջ: 2. Փոխաբերաբար՝ անմատչելի, անառիկ տեղ, երկիր:

Հայոց ազատագրական պայքարի խորհրդանիշ լեռներից է Մարութա սարը:

Միջնաշխարհը հարուստ է երփներանգ ծաղիկներով պատված մարգագետիններով:

բարձրադիր գագաթներն ու ժայռերը արթուն պահակի պես դարեր շարունակ պաշտպանել են մեր սահմանները: Այստեղ են նաև Սասնա լեռները, որոնք հայտնի են որպես հայոց ազատագրական պայքարի խորհրդանիշներ: Այդպիսի նշանավոր խորհրդանիշ լեռներից են Մարութա սարը, Ծովասարը:

Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասը անվանում են **Հայկական բարձրավանդակ** կամ **միջնաշխարհ,** որն ունի հեքիաթային գեղեցկություն: Ասում են, թե Աստվածաշնչում նկարագրված դրախտը հենց այստեղ է եղել: Միջնաշխարհը հարուստ է արգավանդ դաշտերով, երփներանգ ծաղիկներով պատված մարգագետիններով ու սառնորակ աղբյուրներով:

Այստեղ է նաև Վանա լիճը, որը հայերը ծովակ են անվանում: Վանա լճից ոչ հեռու Նեմրութ ու Սիփան լեռներն են, որոնք լճի հայելու մեջ ամեն օր իրենց պատկերն են տեսնում:

Լեռնաշխարհն ունի նաև մեծ ու փոքր այլ լճեր: Դրանց մեջ իր գեղեցկությամբ առանձնանում է քաղցրահամ ջուր ունեցող Սևանը: Այն լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասում է:

Ձինջ է Սևանը անամպ օրերին: Նայողին այնպես է թվում, թե երկնի լազուրից մի կտոր է պոկվել ընկել այդ լեռների գոգը՝ նրանց խիստ տեսքը մեղմելու համար: Իսկ լիճը շրջապատող լեռները կարծես հեքիաթային հսկաներ լինեն, որ ուս ուսի շուրջպար են բռնել ու հենց պարի ժամանակ էլ քարացել են:

Վ. Անանյան



Մ. Սարյան, «Սևանա լիճը»

Վանա լճի հայելու մեջ ամեն օր իր պատկերն է տեսնում Սիփան լեռը:

Իր գեղեցկությամբ և քաղցրահամ ջրի արժեքավոր պաշարով Սևանը հայոց լեռնաշխարհի մարգարիտն է:

Բացառիկ գեղեցկության համար Հայաստանի լճերը համեմատվում են զմրուխտի, փիրուզի, մարգարտի և բնության այլ հրաշալի ստեղծագործությունների հետ:

Բազմազան ու հիասքանչ է Հայկական լեռնաշխարհի բնությունը: Այստեղ կան անդնդախոր կիրճեր, որոնց հատակով հոսում են արագահոս գետեր: Բյուրակն լեռների կարկաչուն աղբյուրներից սկիզբ է առնում հայոց մայր գետը՝ Արաքսը: Արաքսի միջին հոսանքում տարածվում է Արարատյան դաշտը: Այն Հայաստանի բերք ու բարիքի շտեմարանն է: Այստեղ են կառուցվել Հայաստանի մայրաքաղաքներից վեցը, այդ թվում՝ Երևանը: Հայոց աշխարհի մեկ այլ հայտնի գետ՝ Արածանին (Արևելյան Եփրատ), ծնունդ է առնում Ծաղկանց լեռներից: Ըստ ավանդության՝ ամեն առավոտ

Հայոց աշխարհի մեկ այլ հայտնի գետ՝ Արածանին

այստեղ էր լողանում հեթանոս հայերի գեղեցկության աստ-վածուհին՝ Աստղիկը:

Աստղիկը՝ Տարոնի դիցուհին, շրջապատված իր նաժիշտներով, իջնում էր լեռներից՝ Արածանիի արծաթափայլ ալիքների մեջ լողանալու: Այդ պահին հայոց երիտասարդ դյուցազունները թաքնվում էին անտառի մթին ծառաստանի մեջ՝ գեղեցիկ աստ-վածուհուն հեռվից տեսնելու համար: Բայց Աստղիկը Մշո ամբողջ դաշտը վարագուրում էր մառախլապատ մշուշով և անտեսանելի դառնում:

Ըստ Ռաֆֆու

Արածանի գետի հովտում շատ են գեղատեսիլ դաշտերը: Դրանցից մեկն էլ հանրահայտ Մշո դաշտն է, որի միջով հոսում է Մեղրագետը: Հայ ժողովուրդը բազում երգեր է հյուսել Մշո դաշտի մասին՝ ցույց տալով իր սերը Հայկական լեռնաշխարհի այդ գողտրիկ անկյան նկատմամբ.

Հայոց լեռների հողմակողմ լանջերին շատ են անտառները:

Մշո դաշտը մշուշ է,
Ուր հողն ու ջուրն անուշ է,
Մեղրագե՛տ, էդ ո՞ւր կերթաս,
Էդ դաշտով նախշուն ու խաս[1]:

Ժողովրդական

1. **Խաս** – ընտիր, լավ:

Քարտեզը կազմեց՝ Վ. Գ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Թբիլիսի
Գանձակ
(Գյանջա)
Կարս
Երևան
Ստեփանակերտ
Նախիջևան
(Նախիջևան)
Վան
Թրիալեթի լճ.
Ղազախի լեռներ
Ջավախքի լճ.
Վիրահայոց լճ.
Բազումի լճ.
Գուգարաց լճ.
Թամբակի լճ.
Սևանի լեռներ
Սևանա լ.
Գեղամա լճ.
Արարատյան դաշտ
Արարատի լեռներ
Կարսի սարահարթ
Շիրակի դաշտ
Ծաղկաձոր լեռներ
Վանաձորամերձի (Կոտայքի) լճ.
Մեծ Սևանի լեռներ
Գեղարքունիքի լեռներ
Գեղամա լեռներ
Ղարաբաղի լեռներ
Յայկական (Դաղստանի) լեռներ
Գեղարքունիքի բարձրավանդակ
Մինգեչաուրի ջրամբ.
Սարատովի ջրամբ.
Սարիգամիշ լ.
Ուրմիա (Ուրմիու) լ.
Սոոհունդ լ.
Սիփան լ.
Ռոնդոնակ լ.
Մ. Արարատ լ.
Փ. Արարատ լ.
Արագած լ.
Գոշգարաբ լ.
Ամանոս լ.
Ռոնդոնակ լ.
Ռոնդոնակ լ.
Ռոնդոնակ

Հարուստ է նաև Հայաստանի բուսական և կենդանական աշխարհը: Բարձր լեռների ժայռոտ քարափներում ցատկոտում են քարայծը, վայրի ոչխարը: Այդ լեռների հողմակողմ լանջերը տեղ-տեղ պատված են անտառներով, որոնց բնակիչներից հայտնի են եղնիկը, գորշ արջը, գայլը և այլ կենդանիներ: Այդ անտառների տարածված ծառատեսակներից են կաղնին, թխկին, հաճարենին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ է գտնվում Հայկական լեռնաշխարհը:
2. Նայեք քարտեզին և պատկերացրեք, թե ինչի հետ կարելի է համեմատել Հայկական Պար լեռնաշղթան:
3. Որտեղ է գտնվում Հայկական բարձրավանդակը: Նկարագրեք այն:
4. Թվարկեք լեռնաշխարհի լճերը: Ինչի՞ հետ են դրանք համեմատվում:
5. Ի՞նչ կենդանիներով է հարուստ Հայկական լեռնաշխարհը:
6. Կարո՞ղ եք մտաբերել որևէ երգ Սասունի կամ Մշո դաշտի մասին:
7. Ի՞նչ գիտեք Հայկական լեռնաշխարհի մասին. տետրում լրացրեք աղյուսակը:

Դիրքը, հարևան տարածքները	
Նշանավոր լեռնագագաթները	
Նշանավոր դաշտերը	
Գետեր, լճեր	
Բույսեր, կենդանիներ	

ԴԱՍ 3
ՀԱՅՈՑ ԲՆՕՐՐԱՆԸ

Վերհիշեք նախորդ դասից ձեզ արդեն ծանոթ Հայկական լեռնաշխարհի ընդհանուր բնութագիրը:

Ձեր կարծիքով՝ ի՞նչ են նշանակում օրրան, բնօրրան: Մանկությունից ձեզ ծանոթ ո՞ր բառին են նման:

Ազգերը, ինչպես մարդիկ, ունեն իրենց բնօրրանը կամ հայրենիքը:

Դուք արդեն ծանոթ եք Հայկական լեռնաշխարհին: Այն հայ ազգի բնօրրանն է՝ նրա հայրենիքը: Հայոց հայրենիքի ձևավորման ուղին շատ գեղեցիկ է ներկայացրել Մովսես Խորենացին՝ մեր Պատմահայրը: Նա գրում է, որ բռնակալ Բելին հաղթելուց հետո Հայկ Նահապետի որդիներն ու թոռները բնակություն հաստատեցին Հայկական լեռնաշխարհի տարբեր վայրերում: Նրանք հիմնեցին բնակավայրեր և դարձան գերդաստանների նահապետներ:

Այնուհետև Հայկից սերած նահապետները ժամանակի ընթացքում միավորվեցին և ստեղծեցին միասնական Հայկական թագավորություն:

– Ո՞րն է, բաբո, մեր հայրենիք.
– Էն, որ ունի բարձր երկինք,
Էն, որ ունի ամպ ու արև՝
Յուր թագարժան գլխու վերև.
Էն, որ ունի լեռն Արագած՝
Հայ թագուհու զմրուխտ հագած,
Որ կապասե իր արքային...

Հովհաննես Շիրազ

Ապրելով իրենց հայրենիքում՝ հայ ժողովրդի զավակները մշտապես շենացրել ու ծաղկեցրել են հայրենի երկիրը, պաշտպանել թշնամիներից: Նրանք այդ հողի վրա կառուցել են ամրոցներ, տաճարներ, պալատներ, եկեղեցիներ, խաչքարեր և այլ հուշարձաններ: Սերնդեսերունդ նրանք հայրենի հողում են ամփոփել իրենց պապերի և հարազատների աճյունները: Նախնիների շիրիմները, հայրենիքի տարբեր վայրերում կառուցված հազարավոր եկեղեցիները, տաճարներն ու մյուս սրբավայրերը մի զարմանալի հոգևոր կապի միջոց են դառնում սերունդների և հայրենի հողի միջև: Այդ ամենի շնորհիվ Հայկական լեռնաշխարհի ամբողջ տարածքը յուրաքանչյուր հայի, այդ թվում նաև Հայաստանից դուրս ապրող հայի կողմից ընդունվում է որպես սեփական տուն, հարազատ երկիր:

Հայոց աշխարհը այնքան գեղեցիկ է ու հարուստ, որ շատերին է հրապուրել. բազմաթիվ օտար նվաճողներ տարբեր ժամանակաշրջաններում ձգտել են նվաճել Հայոց երկիրը: Շատ անգամ, երբ Հայոց թագավորությունը միասնական ու հզոր է եղել, կարողացել է հետ մղել այդ հարձակումները և պաշտպանել հայրենիքը: Երկրի տերերը՝ հայոց արքաները, իշխաններն ու զորավարները, ամեն ինչ արել են հայրենիքի սահմանները անխախտ պահելու համար: Խոսելով Հայկի հաջորդներից Արամի մասին՝ Խորենացին գրում է. «Սա, աշխատասեր ու հայրենասեր մարդ լինելով, լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները, և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»: Հայոց հզոր արքաներից մեկի՝ Տիգրան Մեծի մասին Պատմահայրն ասում է, որ նա մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը:

Ցավոք, միշտ չէ, որ Հայոց թագավորությունը կարողացել է հակահարված տալ թշնամուն:

Երբեմն ուժերն անհավասար են եղել, և հաճախ մեր ժողովուրդը հայտնվել է ծանր իրավիճակում:

Ամենածանր հարվածը հայ ժողովուրդը ստացավ 1915-1916 թվականներին: Արևմտյան Հայաստանում այդ ժամանակ Օսմանյան Թուրքիայի իրականացրած ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը զրկվեց իր հայրենիքի մեծագույն մասից: Դա տեղի ունեցավ այն պատճառով, որ հայ ժողովուրդը չուներ իր սեփական պետությունը, բանակը:

Չնայած այդ մեծ կորստին՝ ժողովուրդը չի մոռացել իր բնօրրանը, իր պատմական հայրենիքը: Այսօր էլ Հայաստան, հայրենիք ասելով մենք հասկանում ենք ոչ միայն Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքը, այլև Հայկական լեռնաշխարհն ամբողջությամբ: Խոսելով Հայկական լեռնաշխարհի մասին՝ մենք օգտագործում ենք նաև **Պատմական Հայաստան** արտահայտությունը:

Պատմական Հայաստանը իր տարածքով գրեթե համընկնում է **Հայկական լեռնաշխարհի** հետ: Երբ ասում ենք Հայաստան, պետք է հասկանանք նաև Հայկական լեռնաշխարհի այն հատվածները, որոնք այսօր այլ երկրների պետական սահմաններում են: Դրանք կրկին հայրենիքի անբաժան մաս դարձնելու համար անհրաժեշտ են համայն հայության միասնական կամքն ու վճռականությունը: Այդպես եղավ 1992-1994թթ., երբ հայ ժողովուրդը կարողացավ ազատագրել իր պատմական հայրենիքի արևելյան տարածքներից Արցախը:

Այսպիսով, հայության բնօրրանը կամ հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է, որովհետև այստեղ ձևավորվել և իր հարատև ճանապարհն է անցնում հայ ժողովուրդը:

Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն,
Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:
Բաբելոնն է եղել մեր ախոյանը՝ տե՛ս –
Անհետ կորել, անցել է – չար մշուշի պես:
Բարբարոսներ շատ կրգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կըմնա հավետ:

Վահան Տերյան

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է նշանակում ժողովրդի բնօրրան:
2. Ինչո՞ւ ենք Հայկական լեռնաշխարհն անվանում հայոց բնօրրան և պատմական հայրենիք:
3. Ի՞նչ իրադարձությունների հետևանքով հայ ժողովուրդը զրկվեց իր հայրենիքի մեծագույն մասից:
4. Պատմական Հայաստանի մեծագույն մասը այլ երկրների սահմաններում է. նշելով այս փաստը՝ արդյոք նշանակո՞ւմ է, որ մենք մեկընդմիշտ հրաժարվում ենք մեր պատմական հայրենիքից:
5. Պատմական Հայաստանի տարածքում ի՞նչ նշանավոր բնակավայրերի կամ կոթողների անուններ գիտեք: Հարցին պատասխանելու համար օգտվե՛ք լրացուցիչ նյութերից:

ԴԱՍ 4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայոց պատմական հայրենիքի մի հատվածում է Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Հանրապետությունը կրճատ անվանում են Հայաստան:

Գտեք Հայաստանի Հանրապետության և նրա հարևան երկրների տեղը քարտեզի վրա:

Չորս հսկա զանգերի է նման քառագագաթ Արագածը:

Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան բարձրադիր մասը: Այստեղ նույնպես, ինչպես Հայկական լեռնաշխարհի մյուս հատվածներում, շատ են բարձր լեռները և արագահոս լեռնային գետերը: Անտառապատ լեռնալանջերի բարձրադիր մասերում տարածվում են ծաղկազարդ ալպյան մարգագետինները, իսկ ցածրադիր հարթավայրերում մեծ տարածքներ են զբաղեցնում արգավանդ հողերով խոտածածկ տափաստանները: Երկնքից կախված չորս հսկա զանգերի է նման քառագագաթ Արագածը՝ Հայաստանի Հանրապետության ամենաբարձր լեռը (4090 մ): Արագածի լանջերը, դեպի հարավ իջնելով, աստիճանաբար ձուլվում են Արարատյան դաշտին:

Դու, Արագա՛ծ, ալմաստ վահան
Կայծակեղեն թրերի,
Գագաթներդ՝ բյուրեղ վրան
Թափառական ամպերի:

Մեգ ժայռերդ՝ արծվի բույն,
Լճակներդ՝ լույս-փերուզ.
Առուներդ՝ մեջքիդ փայլուն
Պերճ գոտիներ ոսկեհյուս:

Ավետիք Իսահակյան

Հյուսիսային և հյուսիսարևելյան կողմերից հանրապետությունը պարուրված է Վիրահայոց, Փամբակի և Սևանի լեռների երկարաձիգ շարքերով, իսկ հարավում վեր են խոյանում Զանգեզուրի լեռները: Դրանց միջև հոսում են Հրազդան, Որոտան, Դեբեդ և այլ մեծ ու փոքր գետեր:

Արարատյան դաշտը

Հայաստանի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով: Դեռ անհիշելի ժամանակներից Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում զբաղվել են մետաղաձուլությամբ: Գիտնականներից շատերը համարում են, որ Հայաստանում են առաջին անգամ ձուլել բրոնզ[1] և երկաթ: Հատկապես նշանավոր են Երևանի տարածքի Շենգավիթ և Արմավիրից ոչ հեռու գտնվող Մեծամոր հնավայրերում հայտնաբերված ձուլարանները, որտեղ շուրջ 5000 տարի առաջ զբաղվել են բրոնզի, ոսկու, հետագայում՝ երկաթի ձուլմամբ: Այժմ Հայաստանում շահագործվում են պղնձի, ոսկու, մոլիբդենի և այլ մետաղների մի քանի հանքավայրեր:

Վարդագույն քաղաք Երևանը

Մեր երկիրը հարուստ է նաև շինանյութերով: Արժեքավոր են բազմերանգ տուֆի, բազալտի, գրանիտի, մարմարի հանքավայրերը: Տուֆակերտ են Հայաստանի բնակավայրերի, այդ թվում՝ Երևանի բազմաթիվ շինություններ: Հենց այդ պատճառով էլ Երևանն անվանում են վարդագույն քաղաք:

1. **Բրոնզ** – պղնձի, անագի և այլ մետաղների համաձուլվածք:

Մեր ազգային հարստություններից են հանքային ջրերի մեծ պաշարները: Դրանք հայտնի են ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս. Ջերմուկի, Բջնիի, Դիլիջանի, Արզնու առողջարար հանքային ջրերը արտահանվում են շատ երկրներ:

Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է: Ուրիշ երկրում ապրող յուրաքանչյուր հայ այսօր կարող է միաժամանակ Հայաստանի քաղաքացի դառնալ և, համախմբվելով մայր հայրենիքում, շենացնել ու հզորացնել մեր նախնի Հայկ Նահապետի հիմնած տունը: Ինչպես գիտենք, Հայաստանում, հայերից բացի, ապրում են նաև այլազգիներ՝ եզդիներ, ասորիներ, ռուսներ, հույներ և այլք:

Գյումրի. հատված հին քաղաքից

Հայաստանի բնակչության շուրջ մեկ երրորդը բնակվում է մայրաքաղաք Երևանում: Իր մեծությամբ հանրապետության երկրորդ քաղաքը Գյումրին է: Այն Հայաստանի հին քաղաքներից է, որտեղ պահպանվել են պատմաճարտարապետական արժեք ունեցող բազմաթիվ կառույցներ: Գյումրին նշանավոր է իր յուրօրինակ հումորով:

Փամբակ գետի անտառապատ հովտում է մեծությամբ հանրապետության երրորդ քաղաքը՝ Լոռու մարզկենտրոն Վանաձորը:

Հայաստանը հարուստ է բնական պաշարներով, որակյալ աշխատուժով, որոնք տնտեսական զարգացման համար խիստ կարևոր են: Տնտեսության մեջ իր ծանրակշիռ տեղն ունի հանքարդյունաբերությունը:

Այս ամենը անշուշտ կհանգեցնի մեր հայրենիքի հետագա հզորացմանը և յուրաքանչյուրիս համար ցանկալի, ապահով ու բարգավաճ երկրի ստեղծմանը: Յուրաքանչյուր հայ մարդու համար նվիրական գործ պետք է դառնա հայրենիքը շենացնելը:

Քարտեզը կազմեց՝ Վ. Գ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
(վարչական քարտեզ)
Շամբորի ջրմբ.
Կուր
Միսգեչաուրի ջրամբար
Գյանջա
(Գանձակ)
Շամբոր
Ա Դ Ր Բ Ե Ջ Ա Ն
Գոմշասար լ.
3724
Դադիվանք
Թարթառ
Մարտակերտ
Մարսանգի ջրմբ.
Գանձասարի վանք
Քարվաճառ
3522
Ասկերան
Ստեփանակերտ
Մարտունի
Կեչուտի ջրմբ.
Սպանդարյանի
ջրմբ.
Շուշի
Ս. Ամենափրկիչ
Ամարասի վանք
Բերձոր
3550
Մեծ Իշխանասար լ.
Հադրութ
Տաթևի վանք
Ինգաբաղ
Ինգաբաղի
Ինգաբա
Նախիջևան
3904
Կապուտջուղ լ.
Կապան
Արաքս
Մասշտաբ 1:1 250 000

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ է գտնվում Հայաստանի Հանրապետությունը:
2. Ո՞ր լեռն է գտնվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, քանի՞ մետր է նրա բարձրությունը:
3. Ի՞նչ նշանավոր լեռներ կան Հայաստանի Հանրապետությունում:
4. Թվարկե՛ք մեր երկրով հոսող գետերը:
5. Ի՞նչ օգտակար հանածոներով է հարուստ Հայաստանի ընդերքը:
6. Ի՞նչ գիտեք Հայաստանի շինանյութերի մասին:
7. Ինչո՞ւ են Երևանն անվանում վարդագույն քաղաք:
8. Ինչո՞վ են հայտնի Ջերմուկը, Բջնին, Դիլիջանը, Արզնին:
9. Ներկայացրե՛ք Հայաստանի Հանրապետության բնակչությունը:
10. Թվարկե՛ք Հայաստանի խոշոր քաղաքները, դրանց բնորոշ ի՞նչ առանձնահատկություններ կարող եք նշել:
11. Ձեր կարծիքով՝ ի՞նչը կարող է նպաստել մեր հայրենիքի հետագա հզորացմանը:

ԴԱՍ 5
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունից բացի՝ այսօր գոյություն ունի նաև հայոց երկրորդ պետությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ): Այն ստեղծվել է 1991թ. սեպտեմբերի 2-ին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը պաշտոնապես կոչվում է նաև Արցախի Հանրապետություն: Լեռնային Ղարաբաղի տարածքը հիմնականում ընդգրկում է հայոց պատմական Արցախ աշխարհը, որը դարեր շարունակ անկախության համար մղած պայքարի օրինակ է եղել:

Ղարաբաղը Հայկական լեռնաշխարհին բնորոշ երկնասլաց լեռներով, խոր կիրճերով ու գետահովիտներով մասնատված մակերևույթ ունի: Լեռնային Ղարաբաղի գրեթե կենտրոնական մասով հյուսիսից հարավ ձգվում է Արցախի (Ղարաբաղի) լեռնաշղթան: Այս լեռներից են սկիզբ առնում Թարթառը, Խաչենագետը, որոնց գեղատեսիլ հովիտներում ծվարել են բազմաթիվ գյուղեր, քաղաքներ, պատմաճարտարապետական կոթողներ: Արցախյան հուշարձաններից իրենց վեհությամբ առանձնանում են Գանձասարի և Ամարասի վանքերը, Քարվաճառի ժայռափոր բերդապարիսպները, խաչքարերը և այլն: Արցախ աշխարհը հայտնի է իր բացառիկ գեղեցկությամբ հյուսված գորգերով, հատկապես վիշապագորգերով:

Արցախյան բնապատկեր

Հանրապետության տարածքի հյուսիսում ձգվում են անտառներով պատված Մռավսարի լեռները, որոնց հյուսիսային լանջերին ընկած է Շահումյանի շրջանը:

Այս շրջանի ազատագրման մարտերին մասնակցեցին և հայոց պատմության մեջ ոսկե տառերով գրվեցին բազմաթիվ քաջարի հայորդիներ, որոնցից են ազգային հերոսներ Շահեն Մեղրյանը, Թաթուլ Կրպեյանը և ուրիշներ:

1920-ական թվականների սկզբին խորհրդային իշխանությունները անարդարացիորեն Լեռնային Ղարաբաղը հանձնեցին Ադրբեջանին և նրա տարածքի մի մասում ձևավորեցին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ): Այնպես արվեց, որ ԼՂԻՄ-ը ուղղակի սահման չունենա Հայաստանի հետ: Հայաստանի և Ղարաբաղի միջև առաջացավ մի քանի տասնյակ կիլոմետր լայնությամբ միջանցք:

Նայեք ՀՀ և ԼՂՀ քարտեզին: Ցո՛ւյց տվեք ԼՂՀ սահմանները և նրան սահմանակից պետությունները:

Ադրբեջանի կողմից արցախահայության նկատմամբ ճնշումները և բռնությունները բերեցին Լեռնային Ղարաբաղում անկախության համար ազատագրական պայքարի, որը սկիզբ առավ 1988 թվականին: Այն պսակվեց ոչ միայն հայոց պատմական Արցախի անկախությամբ, այլև Լեռնային Ղարաբաղին հարակից հայկական տարածքների ազատագրմամբ: Արցախյան պատերազմում հերոսացան բազմաթիվ հայ երիտասարդներ, որոնք իրենց կյանքը չխնայեցին հայոց հողի այս փոքր հատվածի ազատագրության համար:

Հիշե՛ք Արցախյան ազատամարտում հերոսացած ազատամարտիկների անուններ:

Արցախի ազատագրմամբ հայ ժողովուրդը կրկին ապացուցեց, որ պայքարելու է իր զավթված պատմական հայրենիքի վերադարձի համար: Այս պայքարին զինվորագրվելը յուրաքանչյուր

հայ մարդու սրբազան պարտքն է, քանի որ հայոց հայրենիքի արևմտյան հսկայածավալ հատվածը դեռ սպասում է մեր Նահապետ Հայկի զավակներին:

Արցախի լեռներից ճյուղավորված բարձրադիր բնական հարթության վրա է գտնվում արցախյան հաղթանակների խորհրդանիշ Շուշին: Շուշին հայոց պատմության մեջ հայտնի է որպես կրթության, մշակույթի՝ իր ժամանակի եզակի կենտրոններից մեկը: Շուշիում են ծնվել հայ անվանի գրող Մուրացանը, նշանավոր պատմաբան Լեոն, մեծանուն դերասան Վաղարշ Վաղարշյանը, տաղանդավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը և շատ այլ մտավորականներ:

Ղազանչեցոց եկեղեցին Շուշիում

Շուշիից ընդամենը 10 կմ հյուսիս, ցածրադիր հարթավայրում է գտնվում ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտը: Այստեղ են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի, կառավարության և Ազգային ժողովի նստավայրերը:

Արցախը բազմապիսի բնական հարստություններ ունի: Արգավանդ դաշտերը, արագահոս գետերը, հարուստ ընդերքը, մեղմ եղանակը երկրի զարգացման համար բարենպաստ պայմաններ են ստեղծում:

Այժմ Հայաստանի և համայն աշխարհի հայության նյութական աջակցությամբ վերակառուցվում են Արցախի ճանապարհները, դպրոցները, գործարկվում են գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ձեռնարկությունները և այլն: Իսկ Արցախի բանակը, որն ամենամարտունակն է համարվում ողջ Հարավային Կովկասում, պատրաստ է ամեն վայրկյան արժանի

հակահարված հասցնել իր անկախությանը սպառնացող ամեն մի թշնամու:

Ներկայումս Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունների ջանքերը ուղղված են ոչ միայն Արցախ աշխարհի վերականգնմանն ու զարգացմանը, այլև Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է ստեղծվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Պատմական Հայաստանի ո՞ր տարածքն է այն ընդգրկում:
2. Ի՞նչ գիտեք ԼՂԻՄ-ի մասին: Ինչի՞ց սկիզբ առավ 1988 թվականի ազատագրական պայքարը:
3. Պատմական ի՞նչ կոթողներ կան Արցախում:
4. Արցախյան ազատամարտի ի՞նչ հերոսների գիտեք:
5. Երբևէ եղե՞լ եք Արցախում: Եթե այո՝ համառոտ պատմե՛ք այդ մասին:

Տատիկի ու պապիկի այս հուշարձանը դարձել է Արցախ աշխարհի յուրօրինակ խորհրդանիշը:

ԴԱՍ 6

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՈՔՐ ԱՆԿՅՈՒՆԸ

«Ծագումով որտեղի՞ց ես»: Այս հարցը հաճախ կարելի է լսել, երբ ծանոթանում են նույն ազգությանը պատկանող երկու մարդ: Դրանով հարց տվողը կարծես ցանկանում է ավելի լավ ճանաչել զրուցակցին: Օրինակ, եթե մարդը ծագումով գյումրեցի է, ապա նա պետք է որ կատակասեր լինի, լոռեցիները հայտնի են որպես միամիտ մարդիկ, գավառցիները սիրում են օղի խմել, վանեցիների մասին ասում են, թե իբր նրանք ժլատ են, և այլն: Բոլոր այս հատկանիշները մի քիչ չափազանցված են և ներողամիտ հումորով են նշվում: Այդ կարգի զվարճապատումները, ուրախ զրույցները, կատակները ասվում են սիրով և բարի ժպիտով: Բայց պետք է միշտ հիշել, որ այս ամենը բարի կատակի սահմաններից չպետք է անցնի: Չմոռանանք, որ ծաղրանքն ու նվաստացուցիչ արտահայտություններն այդ դեպքում կարող են վիրավորել քո ազգակցին:



Աղվես, նապաստակ, գել, եղնիկ բըռնեց,
Հավաքեց, բերավ, գառներին խառնեց...

Մեր ժողովուրդը իր շատ սիրելի հերոսներին՝ Սասնա դյուցազուններին «ծուռ» է անվանում, որը նշանակում է խենթ: Բայց դա չի նշանակում, թե այդ բառի մեջ վիրավորանք կա: Ընդհակառակը, «ծուռ» բառի մեջ հայ ժողովուրդը դրել է իր դրական վերաբերմունքը՝ նկատի ունենալով էպոսի հերոսների ծայրահեղ ազնվությունը, չափազանց միամտությունը: Այդ

միամտության ու պարզության պատճառով հերոսները երբեմն հայտնվում են շատ ծիծաղելի իրավիճակներում: Օրինակ, երբ պատանի Դավթին գառնարած են դարձնում, նա երեկոյան հավաքում ու գառների հետ քաղաք է բերում նաև անտառի կենդանիներին:

Քշեց գառները մեր հովիվ հրսկան,
Ելավ Սասունի սարերն աննրման.

.....

Որ կանչեց, նրրա ձենից ահավոր
Դրողորդ-դրմբդրմբոցն ընկավ սար ու ձոր,
Վայրի գազաններ բրներից փախան,

.....

Դավիթը ընկավ նրրանց ետևից,
Որին մի սարից, որին մի ձորից –
Աղվես, նապաստակ, գել, եղնիկ բրոնեց,
Հավաքեց, բերավ, գառներին խառնեց,
Իրիկվան քշեց ողջ Սասմա քաղաք:

.....

Քաղքրցիք հանկարծ մին էլ էն տեսան՝
Գալիս են հրրես անհամար գազան.
«Վա՛յ, հարա՛յ, փախեք...»:
Մեծեր, երեխեք
Սրրտաճաք եղած,
Գործները թողած,
Որը տուն ընկավ, որը՝ ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:

Հովհաննես Թումանյան

Մեզանից յուրաքանչյուրը հպարտությամբ է խոսում իր ծննդավայրի՝ իր փոքրիկ հայրենիքի մասին: Դա այն բնակավայրն է՝ գյուղը, քաղաքը, որտեղ մարդը ծնվել և մեծացել է: Մեր հպարտությունը բնական ու հասկանալի է. չէ՞ որ մեր ծննդավայրի ամեն մի փողոց, շենք, ծառ ու թուփ մեզ լավ ծանոթ են: Մեզ հարազատ ու հասկանալի են նաև այն խոսվածքը (բարբառը), կենցաղն ու սովորությունները, որ ունեն մեր ծննդավայրի մարդիկ:

Հաճախ այնպես է պատահում, որ մարդիկ հեռանում են իրենց ծննդավայրից, ասենք՝ գնում են գյուղից քաղաք կամ մեկնում են այլ երկիր: Բայց նույնիսկ այն դեպքում, երբ մարդը փոխում է իր բնակավայրը, իրեն համարում է «այնտեղացի», որտեղ ինքը ծնվել է: Կարելի է հանդիպել նաև շատ մարդկանց, որոնք ծնվել, մեծացել են Երևանում, սակայն իրենց համարում են վանեցի, մշեցի, գյումրեցի, սյունեցի հենց միայն նրա համար, որ իրենց նախնիները (պապերը) ծագումով այնտեղից են:

Մ. Սարյան, «Թումանյանի լեռներում»

Հարազատ բնակավայրի հիշողությունը ամբողջ կյանքում ուղեկցել է հայ գրականության մեծերին: Օրինակ, երբ մենք լսում ենք «Մեծ լոռեցի» արտահայտությունը, անմիջապես հասկանում ենք, որ խոսքը Հովհաննես Թումանյանի մասին է: Եղիշե Չարենցի համար հայրենիքի հիշողությունը կապված էր Կարսի հետ, Գուրգեն Մահարունը՝ Վանի, Վահան Տերյանինը՝ Ջավախքի, Ակսել Բակունցինը՝ Գորիսի, Համո Սահյանինը՝ Սիսիանի հետ, և այլն:

Լոռին նահապետական մի ինքնամփոփ աշխարհ է. հեքիաթի, առասպելի մի վիպաշխարհ, դյուցազնական աշխարհ. նրա ամեն մի անկյունը՝ ավանդավեպ, ամեն մի քարը՝ խոսող հերոսական անցյալից:

Օհաննեսն[1] իր բոլոր հոգով, իր հոգու բոլոր կրքով ու կրակով սիրում էր Լոռին:

...Լոռին Օհաննեսի անհուն ներշնչարանն էր:

Ավետիք Իսահակյան

1. Հեղինակը նկատի ունի Հովհաննես Թումանյանին:

Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինված անտաշ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով...
.....
Ես կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:

Եղիշե Չարենց

Ինձ կանչողն էլի Սյունյաց լեռներն են –
Իմ ակունքներն ու խաղընկերներն են –
Ժամապահներն են իմ պատանության:
Ինձ կանչողն էլի Սյունյաց լեռներն են,
Հավիտենության առաքյալներն են –
Մարգարեներն են հավիտենության:

Համո Սահյան

ԶՐՈՒՅՑՆԵՐ ԻՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ

Հետաքրքրական են նաև այն պատմությունները, որոնք մեր բնակավայրերի մասին են: Այդպիսի պատմությունները պարզում են, բացատրում, թե ինչի հետ է կապված մեր բնակավայրի անունը կամ որևէ այլ նշանավոր տեղանվան ծագումը՝ ժայռի, աղբյուրի, ձորի և այլն: Նման պատմություններն անվանում են ավանդություններ, զրույցներ: Ավանդությունները ոչ միայն բացատրում են տեղանունների, անձնանունների ծագումը, այլև պատմում են մեր ժողովրդի կյանքում տեղի ունեցած տարբեր ու հետաքրքրական դեպքերի մասին:

Օրինակ՝ Զանգեզուրում գտնվող Մթնաձոր վայրի մասին ավանդությունը մեզ տեղեկություն է տալիս, թե ինչպես է առաջացել այդ տեղանունը:

Մթնաձոր

Ժամանակին մի գեղեցիկ աղջիկ է եղել: Ասում են, որ երբ նա ծիծաղել է՝ չորս կողմը վարդեր ու ծաղիկներ են բացվել, իսկ երբ լաց է եղել՝ անձրև է եկել: Դևերը գողացել են նրան ու տարել ձորի ամենամութ տեղը, ուր երբեք արևի լույս չի ընկնում և չկա ոչ մի կենդանի շունչ: Աղջիկը սկսել է լաց լինել: Ասում են նաև, թե մինչև հիմա էլ կա այդ աղջիկը: Նա միշտ լաց է լինում, դրա համար էլ Մթնաձորում շարունակ թուխպ ու անձրև է լինում: Մեկ-մեկ էլ, երբ եղանակը պարզվում է, ասում են, թե աղջիկը քնի մեջ ծիծաղում է:

Ապարան

Ավանդությունը պատմում է, որ Արագածի չորս գագաթներին առանց պարանի (անպարան) կախված է Գրիգոր Լուսավորչի արտասուքներով լի կանթեղը:

Այդ կանթեղը մշտավառ է, երբեք չի հանգչում, սակայն տեսանելի է միայն ազնիվ ու արդար մարդկանց: Անպարան կանթեղի անունով էլ այդ բնակավայրը կոչվել է Անպարան, որ աստիճանաբար դարձել է Ապարան:

Զանգեզուրի դարպասը

Զանգեզուր

Որոտանի ձորում շատ գյուղեր են եղել, ամեն գյուղում էլ՝ մեկ-երկու եկեղեցի: Ամեն առավոտ, երբ հնչել են եկեղեցիների զանգերը, ձորը լցվել է նրանց ձայնով: Լսողներն ասել են. «Զանգի ձո՛ր է, զանգի ձո՛ր է»: Դրանից հետո բնակավայրի անունը դրել են Զանգեձոր, որն էլ հետագայում դարձել է Զանգեզուր:

Արզնի

Ասում են, որ ներկայիս Արզնիի տարածքում շատ դարեր առաջ ճակատամարտ է տեղի ունեցել հայոց թագավոր Արա Գեղեցիկի և Ասորեստանի թագուհի Շամիրամի միջև: Այդ ճակատամարտում Արան զոհվում է:

Շամիրամը հրամայում է իր զինվորներին՝ գտնել Արայի դիակը: Քանի որ, բացի Շամիրամից, ոչ ոք չէր ճանաչում Արային, զինվորներն իրենց գտած դիակները բերում են, որ նա զննի: Ամեն անգամ նրանք ասում են իրենց թագուհուն. «Ա՛ռ, զննի»: Դրանից հետո այդ վայրը սկսեցին կոչել Արզնի:

Վանա կատու

Կատուների հազվագյուտ և եզակի ցեղ են Վանա կատուները, որոնք տարածված են Վանա լճի շրջակայքում (որտեղից և առաջացել է անվանումը): Դրանք սպիտակ, մետաքսանման փափկամազ կենդանիներ են: Ունեն ձիգ մարմին, զարգացած գլխուղեղ, վագրային քայլվածք, պոչը նման է աղվեսի պոչին, աչքերը տարբեր գույների են: Խելացի են ու ճարպիկ, մաքրասեր, տիրոջը կապված ու նվիրված: Աչքերի գույնով բաժանվում են 3 խմբի. ծովի ալիքի նման վառ երկնագույն աչքերով, սաթագույն (դեղին ու նրա նրբերանգներով) և տարբեր գույների (աջը՝ երկնագույն, ձախը՝ բաց սաթագույն, դեղին ու դեղնականաչ, երբեմն՝ դարչնագույն) աչքերով: Հատկապես արժեքավոր են տարբեր գույների աչքերով կատուները:

Կատուներից միակն են աշխարհում, որ սիրում են ջրում լողալ ու խաղալ: Նրանք առջևի թաթով ստուգում են նաև կերակրի ջերմաստիճանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գիտեք ձեր բնակավայրի մասին.
   – որտե՞ղ է գտնվում,
   – որքա՞ն բնակչություն ունի,
   – նախկինում ինչպե՞ս է կոչվել:
2. Որտե՞ղ են ծնվել քո ծնողները, պապիկներն ու տատիկները:
3. Ծագումով որտեղի՞ց ես քեզ համարում, ինչո՞ւ:
4. Մտածե՛ք՝ ի՞նչ է նշանակում «փոքր հայրենիք», քննարկե՛ք դասընկերների հետ, միասին կազմե՛ք փոքրիկ շարադրանք և ներկայացրե՛ք դասարանում:
5. Ի՞նչ հետաքրքրական, ուրախ պատմություններ գիտեք ձեր ծննդավայրի կամ հարևան բնակավայրերի մարդկանց մասին:
6. Գիտե՞ք արդյոք ձեր բնակավայրի անվանման հետ կապված որևէ ավանդություն. փորձե՛ք շարադրել:
7. Ո՞ր ավանդությունը ձեզ ամենից շատ դուր եկավ, ինչո՞ւ:
8. Հիշե՛ք որևէ ավանդություն կամ ասացվածք, որը լսել եք մայրիկից, հայրիկից, տատիկից, պապիկից կամ բարեկամներից: Անպայման նշե՛ք, թե ումից եք լսել:

ԳԼՈՒԽ 2
ԻՄ ԼԵԶՈՒՆ, ԻՄ ՀԱՎԱՏԸ, ԻՄ ԵԿԵՂԵՑԻՆ

ԴԱՍ 7–8
ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՀԱՅԵՐԵՆՆ Է

Ուրիշ երկրներում եղե՞լ եք:

Պատկերացնենք, թե մենք որևէ այլ երկրում ենք: Առաջինը, որ կնկատենք, այն է, որ այդ երկրում մարդիկ խոսում են մեզ համար անհասկանալի լեզվով: Դա է պատճառը, որ մենք այդ լեզուն անվանում ենք օտար: Սակայն նույն այդ լեզուն մայրենի է դրանով խոսող մարդկանց կամ այդ երկրի ժողովրդի համար:

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր մայրենի լեզուն, որով նա խոսում է, գրում, հաղորդակցվում: Ամենավաղ մանկությունից, երբ մարդն իր առաջին բառերն է արտասանում, սկսում է խոսել այն լեզվով, որը ավելի ուշ նրա կողմից արդեն գիտակցվում է որպես մայրենի լեզու: Սովորաբար հենց մայրենի լեզվով են մարդիկ մտածում, ստեղծագործում, աղոթում, թերթեր տպագրում, ռադիո-հեռուստատեսային հաղորդումներ վարում և այլն:

Հայերի մայրենի լեզուն հայերենն է: Յուրաքանչյուր ժողովրդի, ազգի գլխավոր հատկանիշը, որով նա տարբերվում է մյուսներից, հենց նրա մայրենի լեզուն է: Հայերենը ոչ միայն մեր մայրենի լեզուն է. հայերենը նաև Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական լեզուն է:



Հայոց լեզուն նույն դերը պետք է կատարի իրեն հայ ճանաչող և հայ մնալ ցանկացող անհատի համար, ինչ դեր որ կատարում է արյունը նրա ֆիզիկական կյանքի համար:

Ստեփանոս Մալխասյանց

Հայոց լեզուն աշխարհի հնագույն և հարուստ լեզուներից է: Այն անցել է զարգացման բազմադարյան ուղի: Մաշտոցյան գրերի գյուտից հետո, այսինքն՝ վերջին 1600 տարվա ընթացքում, գրավոր հայերենն անցել է երեք փուլ՝ գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար: Աշխարհաբար հայերենը շարունակեց զարգանալ երկու ճյուղով, այդ պատճառով մենք այսօր ունենք երկու գրական լեզու՝ արևելահայերեն և արևմտահայերեն:

Ուշադի՛ր կարդացեք այս երկու բանաստեղծությունների հատվածները.

Ինչո՞ւ ապշած ես, Լրճա՛կ,
Ու չեն իայտար քու ալյակք,
Մի՞թե հայլվույդ մեջ անձկավ
Գեղուհի՞ մը նայեցավ:

Պետրոս Դուրյան

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Եղիշե Չարենց

Ի՞նչ նմանություններ և տարբերություններ եք տեսնում:

Երկու բանաստեղծություններն էլ հայերեն են, սակայն դրանցից առաջինը հյուսված է արևմտահայերենով, իսկ երկրորդը՝ արևելահայերենով: Հայոց պատմությունն այնպես է ընթացել, որ մի որոշ ժամանակ մեր հայրենիքը բաժանված է եղել երկու մասի՝ Արևմտյան և Արևելյան: Արևելյան Հայաստանում ձևավորվեց արևելահայերենը, իսկ Արևմտյան Հայաստանում՝ արևմտահայերենը: Այսպիսով, հայոց լեզվի այս երկու տարբերակների գոյությունը պայմանավորված է հայ ժողովրդի պատմական ճակատագրով:

19-րդ դարում, երբ ձևավորվում էր աշխարհաբարն իբրև գրական լեզու, Հայաստանը բաժանված էր Արևելյան և Արևմտյան մասերի: Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի կենտրոնը: Արևելյան Հայաստանում այդպիսի կենտրոն էր Արարատյան դաշտը, արևմտահայերի համար՝ Կոստանդնուպոլիսը: Հիմնականում Արարատյան և Կոստանդնուպոլսի խոսակցական լեզուներն էլ դարձան այն հիմքերը, որոնց վրա զարգացան հայոց լեզվի երկու ճյուղերը:

Մաշտոցի անվան Մատենադարանը



Գիտե՞ք, որ...

- Աշխարհի ժողովուրդները խոսում են ավելի քան 3000 լեզուներով, այդ շարքում հայերենը՝ խոսողների թվով, առաջին հարյուրյակի մեջ է:
- Լեզուներից միայն 13-ով են խոսում 50 միլիոնից ավելի մարդիկ՝ անգլերեն, իսպաներեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, չինարեն, հինդի, ճապոներեն, արաբերեն և այլն: Ով գիտե այդ լեզուները, կարող է հաղորդակցվել աշխարհի բնակչության 2/3-ի հետ:
- Հայերենը այն տասը լեզուներից է, որոնցով ամենից վաղ են տպագրական տառեր ձուլվել, ինչպես օրինակ՝ գերմաներենը, իտալերենը, ֆրանսերենը, ֆլամանդերենը, եբրայերենը, արաբերենը, անգլերենը, սլավոներենը:
- Առաջին հայ տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրք» բժշկարանը, լույս է տեսել Վենետիկում (Իտալիա) 1512 թվականին, տպագրության գյուտից 57 տարի հետո: Հայ առաջին տպագրիչը Հակոբ Մեղապարտն է: 2012թ. մեծ շուքով նշվեց հայ գրատպության 500-ամյակը, իսկ Երևանը ճանաչվեց Գրքի համաշխարհային մայրաքաղաք:
- Մատենադարանի հազարավոր ձեռագրերի մեջ ամենամեծը Մշո Ճառընտիրն է, որն ունեցել է հետաքրքրքական ճակատագիր: 1204 թվականին թուրքսելջուկները սպանում են այս ձեռագրի տիրոջը և կողոպտում նրա ունեցվածքը: Հայերը դրամ են հավաքում, հետ են գնում ձեռագիրը և պահում Մշո Առաքելոց վանքում: 1915 թվականին եղեռնից հրաշքով փրկված գաղթականներն իրենց հետ տանում են գիրքը, որը կշռում էր ավելի քան 2 փութ (32 կգ): Ձեռագիրը բաժանում են երկու մասի, մի մասը հասցնում են Էջմիածին, մյուսը թաքցնում են Էրզրումի եկեղեցու բակում, հայտնաբերվում է պատահաբար և հետագայում միացվում մյուս կեսին: Գրքի 19 թերթ այժմ պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանում:

Հայերենի բարբառները

Գրական լեզվին զուգընթաց գոյություն են ունեցել և ունեն բարբառներ:

Հայերենի բարբառների թիվը բավականին շատ է՝ մոտ 60, որոնք կոչվում են նույն վայրի անունով, որտեղ խոսվում են: Օրինակ՝ Ղարաբաղի, Շիրակի, Լոռու բարբառներ:

Բարբառները գրական լեզվից առաջին հերթին տարբերվում են իրենց արտասանությամբ: Դրանք կարող են երբեմն դժվարհասկանալի լինել, բայց պետք է գիտակցել, որ բարբառները մեր լեզվի և ազգային մշակույթի արժեքներից են:

Հայերենի տարածման աշխարհագրությունը

Հայերենը՝ աշխարհի հնագույն լեզուներից մեկը, Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս մեծ տարածում չի ստացել: Այսինքն՝ հայերենով խոսել են հայերը և մասամբ՝ լեռնաշխարհում բնակվող այլ ժողովուրդներ: Սակայն հայերենը տարածված է աշխարհով մեկ, որովհետև դժվար է գտնել մոլորակի գոնե մի անկյուն, որտեղ հայ չի ապրել կամ չի ապրում: Մենք արդեն գիտենք, որ մեր ժողովրդի մի խոշոր հատված տարբեր պատճառներով սփռվել է աշխարհով մեկ: Մայր հայրենիքում այսօր ապրում է ընդամենը 3,2 միլիոն հայ, իսկ հայության մեծ մասը, փաստորեն, ապրում է օտար երկրներում:

Մաշտոցի անվան Մատենադարանի նոր մասնաշենքը

Գնալով աշխարհի տարբեր անկյուններ՝ հայն իր հետ տանում և փորձում է պահպանել իր լեզուն: Այդ պատճառով հայերենը աշխարհի ամենատարածված լեզուներից է:

Հարցեր և առաջադրանքներ

1. Փորձեք բացատրել՝ ինչ եք հասկանում մայրենի լեզու և օտար լեզու ասելով:
2. Զարգացման ինչ փուլեր է անցել հայերենը:
3. Ինչ ճյուղեր ունի գրական հայերենը:
4. Ինչով է պայմանավորված երկու գրական լեզուների գոյությունը:
5. Ձեր կարծիքով՝ ինչու է անհրաժեշտ իմանալ օտար լեզուներ. փորձեք վերհիշել որևէ դեպք, երբ ձեզ շատ անհրաժեշտ է եղել լեզվի իմացությունը:

ԴԱՍ 9

ԻՄ ՀԱՎԱՏԸ, ԻՄ ԵԿԵՂԵՑԻՆ

Ձեր բնակավայրում կամ նրա շրջակայքում կա՞ն եկեղեցիներ: Հաճա՞խ ես եկեղեցի գնում: Ի՞նչ զգացողություններ ես ունենում այնտեղ:

Մեր հայրենիքի գյուղերում ու քաղաքներում շատ եկեղեցիներ կան: Հաճախ նրանք գտնվում են գեղատեսիլ և բարձրադիր վայրերում: Այդ կառույցների մի մասը, մանավանդ եթե մարդա-շատ քաղաքներում են կառուցված, մեծ, ընդարձակ տաճարներ են: Կան նաև փոքրիկ կառույցներ, որոնք մատուռ են անվանում: Եկեղեցիները սովորական շենքեր չեն, դրանք հոգևոր իմաստ ունեցող շինություններ են, հետևաբար մարդիկ սիրով ու խնամքով են վերաբերվում դրանց:

Այսպիսով, մենք ունենք մեր երկիրը՝ Հայաստանը, որը բոլոր հայերի հայրենիքն է, ունենք մեր լեզուն՝ հայերենը, ունենք նաև մեր հավատն ու եկեղեցին:

Ավելի քան 1700 տարի է անցել այն օրվանից, երբ հայերը Տրդատ Մեծ թագավորի և Գրիգոր Լուսավորիչ հայրապետի գլխավորությամբ քրիստոնեություն ընդունեցին: Հայերից հետո քրիստոնեություն ընդունեցին շատ ժողովուրդներ: Քրիստոնյաներ են հույները, վրացիները, ռուսները, գերմանացիները, իտալացիները և ուրիշներ: Այժմ աշխարհում ավելի քան մեկ միլիարդ մարդ իրեն քրիստոնյա է համարում: Մենք էլ՝ հայ քրիստոնյաներս, այդ հսկայական հանրության մի մասն ենք: Հայոց եկեղեցին կոչվում է Հայ առաքելական եկեղեցի: Հարյուրամյակներ շա-

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին

ռունակ Հայոց եկեղեցին ազգապահպան մեծ դեր է կատարել, հատկապես երբ հայ ժողովուրդը պատմական հանգամանքների բերումով զրկվել է անկախ պետականությունից: Հայոց եկեղեցին պահպանել ու մեզ է հասցրել մշակութային բազում արժեքներ, ազգային սովորույթներ, ծեսեր և տոներ:

Բացի դրանից՝ մեր հայրենիքի տարբեր անկյուններում եղած բազմաթիվ եկեղեցիները, տաճարները, վանքերը հայ մշակութային ժառանգության և Հայ առաքելական եկեղեցու անբաժան մասն են, անգամ եթե այդ շինություններն այսօր կանգուն չեն կամ Հայաստանի ներկայիս տարածքից դուրս են: Պատահական չէ, որ օտար տիրապետողները հաճախ են քանդել հայկական եկեղեցիները կամ վերածել մզկիթի, պահեստի, գոմի, քանզի հասկացել են, որ եկեղեցին կարևոր դեր ունի ժողովրդի կյանքում:

Եկեղեցիները կարող են վնասվել նաև մեր երկրում, եթե մենք անփույթ ու անխնամ վարվենք նրանց հետ, մեր ուժերի ներածին չափով մասնակից չլինենք նախորդ սերունդների ստեղծած և մեզ ժառանգություն հասած հարստության պահպանմանը: Հետևաբար մենք պետք է սիրենք ու պահպանենք մեր եկեղեցիները, տաճարները, վանքերը, մեր ազգային հոգևոր հարստությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ գիտեք ձեր բնակավայրի եկեղեցու մասին: Համառոտ նկարագրեք. որտեղ է գտնվում, ինչպիսին է նրա դիրքը: Գործու՞մ է, այսինքն՝ այնտեղ քահանա կամ ուրիշ հոգևորական կա՞:
2. Հանրագիտարանից, ուրիշ գրքերից և լրացուցիչ այլ աղբյուրներից փորձեք իմանալ՝ երբ է կառուցվել ձեր բնակավայրի եկեղեցին: Հնարավոր է, որ դուք չիմանաք ստույգ տարեթիվը, կարելի է պարզել գոնե մոտավոր ժամանակը:
3. Ձեր բնակավայրում, նրա շրջակայքում կամ այլ տեղերում եղած ուրիշ ինչ եկեղեցական կառույցներ գիտեք: Ձեր դասընկերներին համառոտ պատմեք այդ մասին: Ինչ ավանդապատումներ կամ համանման պատմություններ գիտեք այդ կառույցների մասին:

ԳԼՈՒԽ 3
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

ԴԱՍ 10
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՍՊԵԼ

Նախորդ դասերին մենք կարծես յուրահատուկ մի ճանապարհորդության մեջ լինեինք: Այդ շրջագայության ընթացքում ծանոթացանք Հայկական լեռնաշխարհին՝ հայոց հայրենիքին, զրուցեցինք հայոց լեզվի, հայերի դավանանքի ու եկեղեցու մասին:

Այժմ մենք մի նոր ճամփորդություն ենք սկսում: Այս անգամ մտովի գնալու ենք դեպի անցյալ և կրկին վերադառնալու ենք մեր ժամանակները: Այս ճանապարհորդությունն իհարկե ավելի դժվար է, հետևաբար մեզ «ժամանակի մեքենայի» պես յուրահատուկ միջոց է պետք:

Մարդը և առյուծը.
Ք. ա. II հազարամյակ

Եթե սովորական ճանապարհորդության ժամանակ մարդիկ օգտվում են ավտոմեքենայից, գնացքից, ինքնաթիռից, ապա ժամանակի խորքը գնալու համար դեռևս այդպիսի մեքենա չեն հայտնագործել: Ժամանակի մեքենա չկա իհարկե, բայց ճանապարհորդության միջոց գոյություն ունի: Դա մարդկանց հիշողության շնորհիվ պահպանվող գիտելիքների ամբողջությունն է, որը փոխանցվում է սերնդեսերունդ: Այն սովորաբար անվանում են պատմություն: Այդ հիշողությունը կարող է փոխանցվել նաև զրույցների, ավանդությունների, առասպելների տեսքով:

Առասպելները ստեղծվել են շատ հին ժամանակներում և սկզբնական շրջանում եղել են բանավոր: Աշխարհի բոլոր ժողովուրդներն ունեն իրենց առասպելները: Հին Հայաստանում ևս

առասպելները շատ սիրված և տարածված են եղել: Առասպելների հերոսները սովորաբար դյուցազուններ են, այսինքն՝ ոչ սովորական քաջությամբ օժտված մարդիկ: Դյուցազուններն իրենց արտաքին տեսքով էլ են տարբերվում սովորական մարդկանցից. նրանք հաղթանդամ են, արտակարգ ուժեղ, բարի և միշտ հերոսական գործեր են կատարում: Առասպելները շատ երևակայական պատմություններ են, որպես օրինակ հիշենք Տորք Անգեղի մասին պատմող առասպելը: Տորքը առասպելում ներկայացված է անհիրական, չափազանց երևակայական արտաքինով և հատկություններով: Մովսես Խորենացին, նկարագրելով Անգեղյա Տորքին, գրում է. «Ո՛հ, չափազանց առասպել է այս, առասպելների առասպել»:

Տորք Անգեղ

Սակայն շատ հաճախ առասպելների մեջ ընդգրկված են պատմական ճշմարիտ իրողություններ:

Հայ ժողովրդական առասպելների զգալի մասը մեզ է հասել Մովսես Խորենացու շնորհիվ:

Առասպելները, պատմելով անցյալի մասին, մեզ նախ և առաջ ինչ-որ բան են բացատրում: Այսպես օրինակ՝ Պատմահայր Մովսես Խորենացին Հայկի և Բելի առասպելը պատմելուց առաջ ներկայացնում է հսկաների սերունդը և նրանցից մեկին՝ Հայկին: Նա մեզ բացատրում է, թե ովքեր էին այդ հսկաները, որտեղից առաջացան նրանք և այլն:

Մեր աշխարհը Հայկ Նահապետի անունով կոչվում է Հայք:

Աստվածներից առաջինները ահեղ էին և երևելի և աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի և բազմամարդության սկիզբ: Սրանցից առաջ եկավ հսկաների սերունդը, անհեթեթ, հաղթանդամ, վիթխարի մարդիկ, որոնք ամբարտավանությամբ հղանալով ծնան աշտարակաշինության ամբարիշտ խորհուրդը, որը և ձեռնարկեցին իրագործելու: Աստվածների ցասումից ինչ-որ ահագին և աստվածային հողմ փչելով կործանում է աշտարակը և մարդկանց յուրաքանչյուրին տալիս է (մյուսներին) անհասկանալի լեզուներ, որով նրանց մեջ աղմուկ և շփոթություն է ընկնում: Սրանցից մեկն էր և Հապետոսության Հայկը, անվանի և քաջ նախարարը, հաստ աղեղով և հզոր նետաձիգ:

Մովսես Խորենացի

Առասպելը նաև ինչ-որ բան հիմնավորում է, պատճառաբանում: Այսպես, պատմելով մեր նախահայր Հայկի մասին, Խորենացին եզրափակում է՝ **իսկ մեր աշխարհը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք:**

Այսպիսով, առասպելները կարևոր նշանակություն ունեն ժողովրդի պատմությունը, հատկապես այդ պատմության շատ հին ժամանակները հասկանալու համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դասի տեքստում ասվում է ժամանակի մեքենայի մասին: Հասկանալի է, որ իրականում այդպիսի մեքենա չկա: Այդ դեպքում ինչի՞ մասին է խոսքը:
2. Ինչ առասպելներ գիտեք, ո՞վ է մեզ հասցրել մեր հնագույն առասպելները:
3. Ինչ տեղեկություններ է մեզ հաղորդում Մովսես Խորենացին Հայկի և Բելի առասպելի միջոցով:
4. Ինչ կարծիք ունի Խորենացին Տորք Անգեղի առասպելի մասին:
5. Ո՞րն է ձեր ամենասիրելի
   – առասպելը,
   – առասպելական հերոսը:

ԴԱՍ 11
ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

Վահագն Վիշապաքաղ

Գիտեք արդյոք՝ ինչու է Ծիր Կաթինը կոչվում Հարդագողի ճանապարհ:

Իսկ ի՞նչ գիտեք Վահագնի մասին. ինչո՞ւ են նրան անվանում Վիշապաքաղ:

Վահագնը հեթանոս հայերի ամենասիրելի աստվածներից մեկն էր: Ժողովուրդը նրան Վիշապաքաղ էր անվանում: Նրա մասին երգը ներկայացնելով՝ Խորենացին գրում է. «Մենք մեր ականջով լսեցինք, թե ինչպես այս ոմանք երգում էին փանդիռներով[1]»: Շնորհիվ Պատմահոր մեզ է հասել Վահագնի մասին պատմող զրույցը: Այդ զրույցից իմանում ենք, որ Վահագնը վառվռուն ու արեգակնափայլ աչքերով, հրեղեն մազերով, բոցավառ մորուքով խարտյաշ պատանի էր:

1. **Փանդիռ** – լարային նվագարան:

Երկնում[1] էր երկինքը, երկնում էր երկիրը,
Երկնում էր և ծովը ծիրանի[2],
Երկունքը բոնել էր ծովում
Նաև կարմրիկ եղեգնիկին:

Եղեգնի փողով ծուխ էր ելնում,
Եղեգնի փողով բոց էր ելնում,
Եվ բոցից դուրս էր վազում
Մի խարտյաշ[3] պարանեկիկ:

Վազում էր խարտյաշ մի պարանեկիկ,
Նա հուր[4] մազեր ուներ,
Բոց մորուք ուներ,
Եվ աչքերն էին արեգակներ:

Հնում մարդիկ պաշտում էին բազմաթիվ աստվածների և դրանցից ամեն մեկին մարմնավորել էին որպես բնության մի երևույթի: Ահա Վահագնը հին հայերի համար մարմնավորում էր ամպրոպն ու կայծակը: Նա նաև քաջության, հերոսության ու ռազմի աստվածն էր: Ասում են, որ հայոց թագավորները նրանից քաջություն և ուժ էին խնդրում և դիմում նրան պատերազմներից առաջ:

Վահագնի մասին մի ավանդություն է ներկայացնում 7-րդ դարի հեղինակ Անանիա Շիրակացին: Պատմում են, թե մի ցուրտ ձմեռային գիշեր Վահագնը ասորիների Բարշամ թագավորից հարդ է գողանում՝ Հայոց երկրի անասուններին կերակրելու համար: Հարդը տանելիս դրա մի մասը թափվում է՝ առաջացնելով սպիտակ հետք՝ «Հարդագողի ճանապարհ»: Այստեղից էլ հայերի մեջ ընդունված է Ծիր Կաթինն անվանել Հարդագողի ճանապարհ: Հին հունական դիցաբանության մեջ Ծիր Կաթինի ծագումը կապում են Հերակլեսի անվան հետ:

1. **Երկնել** – ծնել, ստեղծել:
2. **Ծիրանի** – ծիրանագույն, ոսկեգույն:
3. **Խարտյաշ** – շիկահեր:
4. **Հուր** – կրակ:

Հայոց հին աստվածների արձանախումբը Նեմրութի[1] լեռնալանջին
(Արևմտյան Հայաստան, վերակազմություն)

«Ես միշտ մտածել եմ, որ բոլոր առաքինություններից ինձ առավել բնորոշ է բարեպաշտությունը՝ ամենահեզաբարո հաճույքը մահկանացուների համար, հենց բարեպաշտությունն է կազմում իշխանության երջանկությունը և մղում նախանձախնդրորեն այն օգտագործելուն:

Ես որոշեցի այս վայրը նվիրել բոլոր աստվածների համար միանման գահեր կառուցելուն՝ ոչ միայն կանգնեցնելու համար իմ նախնիների հուշարձանները, որոնք դուք տեսնում եք, այլև որպեսզի բարեպաշտ անձինք, որ նվիրել են իրենց բարձրագույն ոգիներին, իրենց աչքի առաջ մշտապես ունենան այս վայրն իբրև վկա իմ բարեպաշտության, որտեղ իրենք ևս կունենան միևնույն զգացումները:

Ահա թե ինչու ես կանգնեցրի աստվածային կերպարանքով այս արձանները»:

Անտիոքոս Առաջին Կոմմագենացի (Ք. ա. I դար)

1. Այս լեռը Հայկական Տավրոսի լեռնագագաթներից է, չպետք է շփոթել Վանա լճից արևմուտք գտնվող Նեմրութ (Մեծ Նեմրութ) հրաբխային լեռան հետ:

Արամ, Արա Գեղեցիկ

Մենք արդեն գիտենք, որ հայ հնագույն առասպելների զգալի մասը մեզ է հասցրել Մովսես Խորենացին: Պատմահայրը հատկապես շատ է հավանել այն առասպելները, որտեղ ներկայացված են հայոց հերոսական անցյալի դեմքերը և նրանց քաջագործությունները: Դրանցից են Արամի մասին պատմությունները: Պատմահայրը, խոսելով Արամի մասին, գրում է. «Արամի մասին պատմում են, թե շատ քաջ գործեր է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր աշխարհը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ»:

Արամը Խորենացու սիրելի հերոսներից է. նա քաջ է, հայրենասեր: Արամը հայրենիքի համար մեռնելը գերադասում էր հայրենի երկրի ստրկությունը տեսնելուց:

Պաշտպանել, շենացնել երկիրը, իսկ եթե անհրաժեշտ է՝ նաև կյանքը զոհել հանուն հայրենիքի. ահա այն գաղափարները, որոնք յուրաքանչյուր հայ մարդու համար սրբազան պետք է լինեն:

Վ. Սուրենյանց, «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ»

Արամից հետո «հայրենիքի խնամակալ» է դառնում նրա որդին՝ Արան: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Ասորեստանում թագավորում էր Նինոսը: Վերջինիս մահից հետո Ասորեստանը սկսում է կառավարել նրա կինը՝ Շամիրամը, որը հայտնի էր որպես խորամանկ կին: Շամիրամը նենգ նպատակներ ուներ Հայաստանի և Արայի նկատմամբ:

Իր գեղեցկության պատճառով Արան ձեռք էր բերել Գեղեցիկ մականունը: Այդ գեղեցկությունը գրավել էր նաև Շամիրամին: Նա սիրա-

հարվում է և որոշում նվաճել Արային ու նրա երկիրը՝ Հայաստանը: Շամիրամը բազմաթիվ խարդախություններ է բանեցնում, սակայն Արան չի գայթակղվում: Նա հավատարիմ է մնում իր հայրենիքին և ընտանիքին: Այդ ամենի համար, սակայն, հատուցում է սեփական կյանքով:

...Շամիրամը, սաստիկ չարանալով, ...առնում է իր զորքի բազմությունը և շտապում գնալ հասնել Հայոց երկիրը՝ Արայի վրա. բայց որքան դեմքից կարելի էր գուշակել, շտապում էր ոչ այնքան նրան սպանելու կամ հալածելու, որքան նվաճելու կամ իր ձեռքը գցելու, որպեսզի իր ցանկության կամքը կատարի, որովհետև... նա սիրահարվել էր... Փութով գալիս հասնում է Արայի դաշտը, որ նրա անունով կոչվեց Այրարատ:

Ճակատը պատրաստելիս նա իր զորապետներին պատվեր է տալիս ջանալ կենդանի պահել Արային: Կռվի ժամանակ Արայի զորքը ջարդվում է, Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կտրիճներից:

Մովսես Խորենացի

Արագածից արևելք, Քասախ և Հրազդան գետերի միջև ընկած մեղմաթեք սարավանդում միայնակ կանգնած է Արայի լեռը: Լեռան գագաթը հրաբխի ժայթքման հետևանքով վերածվել է օղակաձև խառնարանի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ էր Վահագնը, ի՞նչ գիտեք նրա մասին և որտեղի՞ց:
2. Ո՞վ էր Արամը, ինչպե՞ս է նրան նկարագրում Մովսես Խորենացին:
3. Ովքե՞ր են Խորենացու սիրելի հերոսները:
4. Ի՞նչ պատմություն է պատմում Խորենացին Արայի և Շամիրամի մասին:
5. Նկարագրե՛ք Արային և Շամիրամին մակդիրների օգնությամբ. օրինակ՝

   Արա – *բարի, ազնիվ, քաջ…*

   Շամիրամ – *չար, խորամանկ…*

Արտաշես Առաջին

ԴԱՍ 12

ԲԻԱՅՆԱ ԵՐԿՐԻ ԱՐՔԱՆԵՐ

Ժողովուրդ, արքաներ, հերոսներ

Հայկ Նահապետ, Մենուա, Արգիշտի, Արտաշես, Տիգրան…

Արտաշեսյաններ, Արշակունիներ, Բագրատունիներ, Ռուբինյաններ…

Անունների այս շարքը կարելի է շարունակել: Նրանցից շատերը մեզ ծանոթ են: Այդ անուններով փողոցներ են կոչվում, հրապարակներ, նաև քաղաքներ, օրինակ՝ Արտաշատն ու Վաղարշապատը:

Հայոց արքաների և արքայատոհմերի անունները այսօր էլ շարունակում են ապրել:

Արքաների կամ արքայատոհմի անուններից բացի՝ կարող ենք հիշատակել նաև զորավարների, գործիչների, ազգային շատ հերոսների անուններ:

Ինչո՞ւ ենք մենք, սակայն, միևնույն շարքում նշում արքային ու զինվորին, պետության հիմնադրին ու շարքային ծառայողին: Ի՞նչն է նրանց միավորում, ի՞նչն է ընդհանուր տարբեր ժամանակներում ու տարբեր պայմաններում ապրած այդ մարդկանց համար: Նրանց բոլորին միավորել է մի մեծ նպատակ՝ հայրենի երկիրը շենացնելն ու հզորացնելը և նրան նվիրումով ծառայելը:

Դեպի այդ կարևոր նպատակը տանող ճանապարհին արքաներն ու առաջնորդները ունեցել են բազմաթիվ հետևորդներ և գաղափարակիցներ: Նրանցից շատերի անունները մենք չգիտենք, բայց առանց այդ մարդկանց նվիրումի, անձնազոհության և հավատարմության որևէ իշխան, առաջնորդ կամ ղեկավար չէր կարող հասնել իր նպատակներին: **Նրանց բոլորին՝ ազնվականին, մտավորականին, հոգևորականին, զինվորին ու շինականին միասին, անվանում են ժողովուրդ:** Որպեսզի ժողովուրդը կարողանա միավորվել, կազմակերպվել և հասնել իր նպատակներին, նրան անհրաժեշտ է միավորող ու առաջնորդող ուժ՝ անհատ կամ կազմակերպություն: Ժողովրդին կազմակերպող ու առաջնորդող այդպիսի դեր է կատարում պետությունը: Հայոց

մեծազոր արքաների գլխավոր նպատակը նախ և առաջ պետության ամրապնդումն ու հզորացումն են եղել: Դրա համար էլ նրանք մեկընդմիշտ մնացել են ժողովրդի հիշողության մեջ և օրինակ ծառայել հետագա սերունդների համար:

Մենուա և Արգիշտի Առաջին

Մեր մայրաքաղաքը՝ Երևանը, աշխարհի հնագույն քաղաքներից է: Նրան տարեկից քիչ քաղաքներ կան: Այդպիսին է, օրինակ, Հռոմը, որը Երևանից քիչ ավելի ուշ է հիմնադրվել: Հռոմի հիմնադրման մասին միայն բանավոր ավանդապատումներ կան, իսկ Երևանն ունի քարի վրա փորագրված իր ծննդյան վկայագիրը: Գրվել է քաղաքի հիմնադրի՝ Արգիշտի Ի արքայի հրամանով Ք. ա. 782 թվականին:

Արգիշտի Ի-ը Արարատյան կամ Վանի թագավորության հզոր արքաներից էր:

Վանի միջնաբերդը

Վանի թագավորությունը Հայկական լեռնաշխարհում ստեղծված մեծ պետություն էր, որ կարողացավ միավորել լեռնաշխարհի համարյա ամբողջ տարածքը:

Վանի թագավորությունը նրա հարավային հարևան և գլխավոր հակառակորդ երկրում՝ Ասորեստանում հայտնի էր Ուրարտու անունով: Ուրարտու անվանումը Արարատ անվան փոփոխված տարբերակն է: Արարատ (Այրարատ) անվան հետ է կապվում երկրի Արարատյան թագավորություն անվանումը: Բացի դրանից՝ մեզ հասած ուրարտական արձանագրություններում այն կոչվում է Բիայնիլի, այսինքն՝ Բիայնա երկիր:

Ք. ա. 9-րդ դարի երկրորդ կեսին, այսինքն՝ մեզանից ավելի քան 28 դար առաջ, «Նաիրի երկրի արքա» Սարդուրի Ի-ը հիմնեց Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքը: Այդ մասին թողած արձանագրություններում նա ներկայանում է որպես «մեծ արքա, հզոր արքա, արքաների արքա»: Վանի թագավորության հզորաց-

ման գործում նշանակալի դեր ունեցան Սարդուրի Ի-ի հաջորդ Իշպուինի արքան և հատկապես Մենուան: Սկզբում Մենուան կառավարում էր իր հոր՝ Իշպուինի արքայի հետ: Այսինքն՝ Իշ-պուինին արքայազն Մենուային դարձրել էր իր գահակիցը՝ այդ կերպ սովորեցնելով նրան պետության կառավարման դժվարին գործը: Որոշ ժամանակ հետո արքան իր մյուս որդու հետ սկսեց վարել երկրի կրոնական գործերը, իսկ Մենուան դարձավ Վանի թագավորության միանձնյա գահակալը:

Մենուայի միանձնյա կառավարման ժամանակաշրջանում (Ք. ա. 810-786թթ.) Արարատյան թագավորությունը հզորացավ, կարողացավ իր հսկողության տակ առնել երկրից դեպի հարավ, արևելք ու արևմուտք տանող կարևոր ճանապարհները:

Մենուա արքայի օրոք Տուշպա (Վան) մայրաքաղաքին խմելու և ոռոգելու ջուր մատակարարելու համար կառուցվեց մոտ 72 կմ երկարությամբ ջրանցք, որը մինչև օրս էլ գոյություն ունի:

Մենուայի ջրանցքը



Մենուայի ջրանցքը սկիզբ է առնում Հայոց ձոր գավառում: Ջրանցքը բարդ կառուցվածք ունի: Այն անցկացված է լեռների լանջերին փորված և տեղ-տեղ քարե պատնեշներով ամրացված հունով, ինչպես նաև ձորերի վրա կառուցված կամուրջներով: Ջրանցքի տնտեսական նշանակությունն այնքան մեծ է եղել, որ նրա պահպանման համար ամրոցներ են կառուցվել:

Ջրանցքի կառուցումն ավետող սեպագիր արձանագրության մեջ ասվում է.

«Խալդյան զորությամբ[1] Մենուան, Իշպուինիի որդին, մեծ արքան, հզոր արքան, արքան Բիայնա երկրի և

1. **Խալդի** (Հալդի) – Բիայնա երկրի գլխավոր աստվածը:

տերը Տուշպա քաղաքի, այս ջրանցքը անցկացրեց: Ամունը (ջրանցքի) Մենուայի ջրանցք է»: Վան այցելած ճանապարհորդներին հիացմունք են պատճառել Մենուայի ջրանցքի արտակարգ զուլալ ջուրը և զարմանալի արագ ընթացքը: Իր վիթխարիությամբ և ջրառատությամբ Մենուայի ջրանցքը յուրահատուկ տեղ է գրավում ոչ միայն Վանի թագավորության, այլև ընդհանրապես Հին աշխարհի ոռոգիչ կառույցների շարքում: Մովսես Խորենացին այն պարզապես «գետ» է անվանում:

Խալդի աստծո հարթաքանդակը

Մենուա արքայի ռազմական հաղթանակները, նրա օրոք երկրի բարգավաճումը հիմք դարձան նրա որդու և հաջորդի՝ Արգիշտի Ի-ի աշխարհակալ տերության ստեղծման համար: Արգիշտի Ի-ի կառավարման տարիներին (Ք. ա. 786-764թթ.), Վանի թագավորությունն իր հզորության բարձրակետին հասավ: Էրեբունիից հետո Արգիշտի Ի-ը Արարատյան դաշտում՝ հնամյա Արմավիր քաղաքից ոչ հեռու հիմնեց Արգիշտիխինիլի քաղաքը: Այդ առթիվ փորագրված արձանագրության մեջ ասվում է. *«Խալդյան մեծությամբ Արգիշտի Մենուաորդին ասում է. «Ես կա-*



ռուցեցի փառահեղ բերդաքաղաք, կոչեցի այն Արգիշտիխինիլի: Հողն ամայի էր... Ես գետից չորս ջրանցք հանեցի, խաղողի և պտղատու այգիներ գցեցի, մեծ գործեր կատարեցի այնտեղ»»:

Արգիշտի Ի-ի հմուտ կառավարման շնորհիվ Վանի թագավորությունը դարձավ հզորագույն պետություն: Նրա հզորության հետ ստիպված էին հաշվի նստել շատ երկրներ, այդ թվում՝ Վանի թագավորության գլխավոր հակառակորդ Ասորեստանը: Արգիշտի արքայի մասին խոսելով՝ Ասորեստանի զորքերի ընդհանուր հրամանատարն ասում է. «*Արգիշտիի ուժերը մեծաքանակ են, նրա անունն անգամ ահարկու է որպես ծանր հողմ»:*

Վանի թագավորության ռազմիկ

Արգիշտի Ի-ի հաջորդներն էլ շարունակում էին երկիրն ամուր և ծաղկուն վիճակում պահելու գործը: Նրանցից Ռուսա II-ը կառուցեց Թեյշեբաինի քաղաքը, որն այսօր Երևանի Կարմիր բլուր հնավայրն է:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ և որ արքան է հիմնադրել մայրաքաղաք Երևանը: Որտեղից է դա մեզ հայտնի:
2. Վանի թագավորության ինչ արքաների գիտեք:
3. Ինչ կարող եք պատմել Մենուայի նշանավոր կառույցի մասին:
4. Ո՞ր արքայի օրոք է հիմնադրվել Թեյշեբաինի քաղաքը: Երևանի որ մասում է այդ քաղաքի տարածքը:

ԴԱՍ 13
ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐ

Արտաշեսն ու Տիգրանը հայ ժողովրդի սիրելի արքաներն են, նրա պաշտելի հերոսները:

Նրանց համար ամենակարևորը հայրենիքի հզորացումն ու բարգավաճումն էր: Հայոց քաջարի արքաների մասին ստեղծված զրույցները, ավանդապատումները, առասպելները հարյուրամյակներ են ապրել ու գրի առնվել մեր պատմիչների կողմից:

Այսօր էլ, ավելի քան երկու հազար տարի հետո, հայ մարդիկ իրենց զավակներին կոչում են Արտաշես ու Տիգրան անուններով: Դրանով ժողովուրդը կարծես ցանկանում է վերհիշել իր պետության հզորության փառավոր ժամանակները:

Արտաշես Առաջին (Ք. ա. 189-160թթ.)

Արտաշես Ի-ը Արտաշեսյան արքայատոհմի (Ք. ա. 189-1թթ.) հիմնադիրն է: Ք. ա. 189թ. դառնալով հայոց թագավոր՝ նա հաջորդաբար Մեծ Հայքի սահմանների մեջ վերամիավորեց իրենից առաջ բռնությամբ անջատված հայկական հողերը:

Արտաշես Ի

Արտաշես արքան ստեղծեց հզոր բանակ: Նրա թագավորության ժամանակ մեր երկրում շատ նշանավոր գործեր կատարվեցին: Ամենից առաջ նա շենացրեց ու բազմամարդ դարձրեց երկիրը: Իր գրաված երկրներից տարբեր ազգությունների մարդկանց բերեց և վերաբնակեցրեց Հայաստանի լեռնային վայրերում, դաշտերում ու հովիտներում: Նրա օրոք Հայոց աշխարհում, ըստ Մովսես Խորենացու՝ «անմշակ հող չմնաց»:

Արտաշեսը Հայոց աշխարհի ծովակների և գետերի վրա նավագնացություն է սահմանում, զարգացնում երկրագործությունը, ձկնորսությունը: Նա կարգավորում է հայոց բուն տոմարը, այսինքն՝ տարին տարբեր շրջանների, ամիսների, շաբաթների, օրերի բաժանելու գիտությունը:

Արաքսի ափին հայոց արքան հիմնադրում է նոր մայրաքաղաք, որը նրա անունով կոչվեց Արտաշատ:

Տիգրան II Մեծ (Ք. ա. 95-55թթ.)

Տիգրան Մեծի անունը հայտնի է յուրաքանչյուր հայի: Հասկանալու համար, թե ինչ կարևոր դեր է կատարել Տիգրան II-ը մեր հայրենիքի պատմության մեջ, մենք կանդրադառնանք նրա բազմաթիվ գործերից մի քանիսին:

Գահակալությունը. Ք. ա. 95 թվական

Մահացել էր հայոց արքան: Արքայազն Տիգրանը պատանդության մեջ էր Պարթևստանում: Ինչպես ձեզ հայտնի է, Հայկական լեռնաշխարհից հարավ-արևելք տարածվում է Իրանական բարձրավանդակը: Այստեղ էլ ձևավորվել ու հզորացել էր Պարթևական պետությունը: Մյուս կողմից, արևմուտքում հզորացել էր Հռոմեական հանրապետությունը: Ք. ա. առաջին դարի սկզբներին Հայաստանի համար բավականին վտանգավոր իրավիճակ էր ստեղծվել. Հռոմն ու Պարթևստանը դաշինք էին կնքել և մտադրություն ունեին Հայաստանը թուլացնելու, դարձնելու իրենցից կախված թույլ երկիր:

Տիգրան II Մեծ

Պարթևների մոտ գտնվող Տիգրանը կարողացավ որոշ զիջումների գնով ազատվել և Ք. ա. 95թ. վերադառնալով հայրենիք՝ գահ բարձրանալ: Գահ բարձրանալուց անմիջապես հետո Տիգրանն իր թագավորությանը միացրեց Ծոփքը: Դրանով նա ավարտին հասցրեց հայրենի երկիրը վերամիավորելու իր մեծանուն պապի՝ Արտաշես I արքայի սկսած գործը: Այնուհետև՝ 94թ. նա դաշինք

կնքեց Հռոմի հակառակորդ, Սև ծովի ափին գտնվող Պոնտոսի հզոր թագավորության հետ և էլ ավելի ամրապնդեց իր դիրքերը: Այսպիսով, կառավարման առաջին իսկ տարիներին Տիգրան Մեծն իրեն դրսևորեց որպես խելացի ու հեռատես գործիչ:

Հզորության բարձունքում. Ք. ա. 83 թվական

Ծոփքի գրավումից շատ չանցած՝ Տիգրանը Մեծը կարողացավ հզորացնել հայոց բանակը, հաղթել պարթևներին և վերադարձնել գահի բարձրանալիս նրանց զիջած հողերը: Հայոց թագավորությունն այնքան էր հզորացել, որ Տիգրան Մեծը իրեն հռչակեց արքայից արքա: Հայոց արքայի գերիշխանությունն ընդունում էին բազմաթիվ մանր թագավորություններ, ինչպես նաև Վիրքը (Վրաստանը) և Աղվանքը:

Հունարեն արձանագրություն Տիգրանակերտից

Հայաստանից դեպի հարավ-արևմուտք, Միջերկրական ծովի մոտ էր գտնվում Սելևկյան թագավորությունը, որը հայտնի է նաև Սիրիա անունով: Այդ պետությունը ներքին կռիվների հետևանքով թուլացել էր ու ընկել ծանր դրության մեջ: Ստեղծված վիճակը շտկելու և երկրում կարգուկանոն հաստատելու համար սիրիական վերնախավը Տիգրան Մեծին առաջարկեց դառնալ նաև Ասորիքի թագավոր: Ք. ա. 83թ. Տիգրանը հանդիսավոր կերպով մտավ Միջերկրական ծովի ափին գտնվող Անտիոք մայրաքաղաք: Իրեն ենթարկելով նաև Ասորիքին հարևան երկրները՝ Տիգրան Մեծն ավարտեց իր նվաճումները: Տիգրան Մեծի տերությունը Հին աշխարհի ամենամեծ պետություններից էր, որի սահմանները ձգվում էին Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով:

Ունենալով այդպիսի հզորություն՝ Տիգրան Մեծը, սակայն, ռազմատենչ, պատերազմասեր արքա չէր: «Նա կառավարում էր ամենայն անդորրությամբ»,– գրել է Տիգրանի մասին օտար պատմիչը: Նա պատերազմի մեջ էր մտնում միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում:

Տիգրանակերտ

Ք. ա. 80-ական թթ. Տիգրան Մեծը ձեռնարկեց նոր մայրաքաղաքի՝ Տիգրանակերտի շինարարությունը: Քաղաքը կառուցվեց Արևմտյան Տիգրիսի վտակներից մեկի հովտում (Մեծ Հայքի Աղձնիք նահանգում): Տիգրանակերտը կարճ ժամանակում դարձավ մեծ քաղաք: Քաղաքում շքեղ պալատներ և ապարանքներ էին կառուցվում: Տիգրանակերտն ուներ 25 մետր բարձրությամբ պարիսպներ, որոնց ներսում տարբեր շինություններ կային: Քաղաքի արվարձանում Տիգրանի պալատն էր, որի շուրջը լճեր, զբոսայգիներ և անգամ որսատեղեր կային:

Մեծ Հայքի տարածքում Տիգրանակերտ անունով մեկ տասնյակից ավելի քաղաքներ կային: Դրանցից մեկը Արցախի Տիգրանակերտն է, որտեղ այժմ պեղումներ են ընթանում:

Տիգրանակերտի (Արցախ) միջնաբերդի պեղումները

Արտաշատի պայմանագիրը. Ք. ա. 66 թվական

Հայաստանը լուրջ վտանգի մեջ էր: Հռոմեական բանակը անցել էր սահմանը և շարժվում էր դեպի երկրի սիրտը՝ Արարատյան դաշտ, որտեղ Արտաշես Ի-ի կառուցած Արտաշատ մայրաքաղաքն էր: Մյուս կողմից՝ Արտաշատի պարիսպների տակ կանգնած էր պարթևական զորքը: Տիգրան Մեծին հաղթելու

համար պարթևները պատրաստ էին դաշինք կնքել նույնիսկ իրենց վաղեմի հակառակորդների՝ հռոմեացիների հետ: Պարթևները չէին մոռացել տարիներ առաջ Տիգրանից կրած ծանր պարտությունը:

Երկրի համար այդ դժվարին պահին Տիգրան Մեծը չընկճվեց: Անսպասելի հարձակումով նա կարողացավ պարտության մատնել Արտաշատը պաշարած պարթևական զորքին և դուրս քշել Հայաստանի սահմաններից:

Պարթևներին հաղթելուց հետո Տիգրան Մեծը որոշեց չշարունակել ռազմական գործողությունները հռոմեական գերակշիռ ուժերի դեմ: Պատերազմը շարունակելը կարող էր կորստաբեր լինել Հայաստանի համար, և հայոց արքան որոշեց խուսափել դրանից: Նա հաշտություն առաջարկեց հռոմեացիներին: Նախնական բանակցություններից հետո հռոմեական զորքի հրամանատար Գնեոս Պոմպեոսն ընդունեց առաջարկը:

Ք. ա. 66թ. սեպտեմբերյան այդ օրը Տիգրան Մեծը կարողացավ խաղաղ միջոցներով, չվտանգելով ոչ մի զինվորի կյանք, պահպանել իր հայրենիքի՝ Մեծ Հայքի տարածքները: Միաժամանակ Տիգրան արքան հրաժարվեց երկրից դուրս իր նվաճումների մեծ մասից: Պատկերացնելու համար, թե հանուն իր երկրի անվտանգության ինչ հսկայական տարածքից էր հրաժարվում հայոց արքան, ուշադիր նայենք Տիգրան Մեծի տերության քարտեզին:

Արտաշատի պայմանագրին հաջորդած տասնամյակում էլ Տիգրան II-ը շարունակեց կառավարել երկիրը:

Իր քառասնամյա կառավարման ընթացքում Տիգրան Մեծ արքան ունեցավ շատ հաղթանակներ ու փառահեղ նվաճումներ, հիմնադրեց Տիգրանակերտ մայրաքաղաքն ու այլ քաղաքներ, հովանավորեց տնտեսության ու մշակույթի զարգացումը: Նա տեսավ նաև կորուստներ ու խռովություններ, բայց, ի վերջո, իր Արտաշես պապի և մյուս փառավոր նախնիների նման կարողացավ հաղթահարել բոլոր դժվարությունները և հաջորդներին թողնել ծաղկուն ու զարգացած երկիր:

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ


Նիկոմեդիա
ԲԻԹՈՒԱՆԻԱ
Ամիսոս
Փասիս
Տրապիզոն
Նիկոպոլիս
Սեբաստիա
Կապադոկիա
Տիգրանակերտ
Երվանդաշատ
Արտաշատ
Նախճավան
Վան
Մեծ Հայք
Արկաթիոկերտ (Անգղ)
Եդեսիա
Փինակա
Գանձակ
Արբելա
Ադիաբենե
Ատրպատական
Հռոդոս
Սալամիս
Էմեսա
Պալմիրա (Թադմոր)
Բերիթ
Քաղկիդիկե
Դամասկոս
Երուսաղեմ
Ալեքսանդրիա
Պետրա
Նաբատեացիների թագավորություն
Պարթևական թագավորություն
Տիգրոն
Բաբելոն
Շոշ (Սելևկիա)
Քարակենե
Էլիմայիս
Պերսեպոլիս
Պարս
Հռոմ
Գալատիա
Կապադովկիա
Ասիա
Սիրիա
Հրեաստան (Հուդա)
Ներքին (Միջերկրական) ծով
Սև ծով
Կասպից ծով
Պարսից ծոց (Թարսիսի ծոց)
Սանդարամետ
Տիգրանակերտ
Տիգրանակերտ
Տիգրանակերտ

Հարցեր և առաջադրանքներ

1. Համառոտ ներկայացրեք Արտաշես I-ի կառավարումը:
2. Երբ գահ բարձրացավ Տիգրան II-ը: Ինչի՞ շնորհիվ նա կարողացավ անվտանգ վերադառնալ հայրենիք: Հետագայում նա կարողացա՞վ վերականգնել այդ պահին արված զիջումները:
3. Ինչպիսի՞ իրավիճակում էր այդ տարիներին Հայաստանը, և ինչ քայլեր կատարեց Տիգրան Մեծը դրությունը շտկելու համար:
4. Ինչ նվաճումներ կատարեց Տիգրան Մեծը դրանից հետո: Ինչն էր վկայում Հայաստանի հզորության մասին:
5. Ո՞ր երկրի վերնախավը հրավիրեց Տիգրան II-ին՝ կառավարելու նաև իրենց թագավորությունը: Ինչ սահմաններում էր տարածվում Տիգրան Մեծի պետությունը դրանից հետո:
6. Հայաստանի համար ինչպիսի՞ իրավիճակ էր ստեղծվել Ք. ա. 66 թվականին: Ինչ ձեռնարկեց Տիգրան Մեծը երկրին սպառնացող վտանգը վերացնելու համար:
7. Ինչ պայմանագիր ստորագրեցին Հայաստանը և Հռոմը Ք. ա. 66թ.: Ձեր կարծիքով՝ ճի՞շտ վարվեց արդյոք Տիգրան Մեծը՝ հրաժարվելով իր հիմնական նվաճումներից: Հանուն ինչի՞ նա դիմեց այդ քայլին: Հարցը քննարկելու համար դասարանում կազմակերպեք փոքրիկ բանավեճ:

«Տիգրան Մեծ» շքանշան

«Տիգրան Մեծ» շքանշանը շնորհվում է Հայաստանի Հանրապետությանը մատուցած բացառիկ ծառայությունների համար:

«Տիգրան Մեծ» շքանշանով պարգևատրվում են մեր երկրի պետական գործիչները, զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի զինծառայողները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զորամասերը:

«Տիգրան Մեծ» շքանշանը կրում են կրծքի աջ կողմում, շքանշանների առկայության դեպքում՝ դրանցից առաջ:

ԴԱՍ 14–15

ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐ

Արտաշեսյաններից հետո Հայաստանը կառավարող հաջորդ արքայատոհմը Արշակունիներն էին:

Արշակունյաց արքայատոհմը շատ նշանավոր թագավորներ է տվել. Տրդատ I, Վաղարշակ, Տրդատ III Մեծ, Արշակ II, Պապ, Վռամշապուհ և ուրիշներ: Ժողովուրդը նրանց մասին բազմաթիվ զրույցներ ու առասպելական պատմություններ է ստեղծել: Նրանց հերոսական գործերը չեն մոռացել հետագա սերունդները: Երևանի լայնահուն փողոցներից մեկը, ի պատիվ հայ Արշակունի թագավորների, այդպես էլ կոչվում է՝ Արշակունյաց պողոտա:

Արշակունյաց արքայատոհմի կառավարման ժամանակաշրջանում շատ նշանավոր գործեր են կատարվել: Այսպես, Վաղարշակ թագավորը հիմնադրել է Վաղարշապատ քաղաքը, որն այսօր էլ կա: Տրդատ III Մեծի օրոք Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունվեց որպես պաշտոնական կրոն: Տրդատ Մեծի որդին՝ Խոսրով Կոտակը, Հայաստանի մեկ ուրիշ մայրաքաղաքի՝ Դվինի հիմնադիրը եղավ: Քաղաքն այսօր չկա, բայց այդ անունով ուրիշ բնակավայրեր կան: Նույն արքան է հիմնել նաև Խոսրովի անտառը, որ մինչև օրս էլ կա և պահպանվում է որպես արգելոց:

Գառնիի տաճարը կառուցվել է Տրդատ I Արշակունու օրոք (66-88թթ.): Այն նվիրված էր հայոց հեթանոսական Միհր աստծուն:

Տրդատ Առաջին

Արշակունյաց արքայատոհմի իշխանության հաստատումը Հայաստանում դժվարին եղավ: Մինչ այդ, առաջին դարի առաջին կեսին, Մեծ Հայքի թագավորությունն ավելի շատ Հռոմեական կայսրության ազդեցության տակ էր, և Հայաստանում իշխում էին Հռոմի կամակատարները: Հայաստանի նշանակությունն այնքան մեծ էր այն ժամանակվա աշխարհում, որ Պարթևական թագավորությունը, որտեղ իշխում էին Արշակունիները, ոչ մի կերպ չէր համաձայնում Հայաստանում Հռոմի ազդեցության ուժեղացմանը: Այդ է պատճառը, որ պարթև Արշակունի թագավորի եղբայրը՝ Տրդատը, հայ ավագանու համաձայնությամբ մտավ Հայաստան որպես Մեծ Հայքի թագավոր: Հռոմեական պետության համար դա անընդունելի էր, և շատ չանցած՝ Հռոմի ու Պարթևստանի միջև պատերազմ սկսվեց: Շուրջ տասը տարի տևած պատերազմն ի վերջո ավարտվեց հետևյալ համաձայնությամբ. Տրդատը ճանաչվում է Հռոմի կողմից որպես հայոց թագավոր, բայց թագը նա պետք է ստանար Ներոն կայսեր ձեռքից: Դրան համապատասխան՝ 65թ. Տրդատը մեծ թիկնազորով մեկնեց Հռոմ, թագադրվեց Ներոնի կողմից և 66թ. վերադարձավ Հայաստան: Այդպես Հայաստանում հաստատվեց Տրդատ Ի Արշակունու և հետևաբար՝ Արշակունյաց արքայատոհմի գահակալությունը (66-428թթ.):

Տրդատ Ի-ը վերականգնեց պատերազմի ընթացքում ավերված Արտաշատ մայրաքաղաքը, վերակառուցեց Գառնի ամրոցը: Ամրոցում կառուցվեցին նոր շինություններ, որոնցից առավել նշանավորը հեթանոսական սյունազարդ տաճարն էր:

Տրդատի ուղևորությունը Հռոմ

Տրդատը համաձայնեց թագն ստանալ Ներոնի ձեռքից: Նա ուղևորվեց Հռոմ: Ինն ամիս տևեց Տրդատի ճամփորդությունը դեպի Հռոմ: Նրան ուղեկցում էին երեք հազար հեծյալներ և հռոմեացիների պատվո շքախումբը: Ամենուրեք նրանց շքեղ ընդունելություն էին ցույց տալիս: Քաղաքները, ուր նրանք կանգ էին առնում հանգստանալու, զարդարվում էին: Հռոմեական փոխարքաներն ու աստիճանավորները նրանց դիմավորելու էին դուրս գալիս:



Հին Հռոմի համայնապատկեր

Իտալիայի սահմանին Տրդատը նստեց այն կառքը, որը Ներոնն էր ուղարկել նրան: Իր հյուրին զվարճացնելու համար Ներոնը հրամայում է զանազան ներկայացումներ ու խաղեր կազմակերպել: Գլադիատորական մարտերին փոխարինում էին խրախճանքները, խրախճանքներին՝ որսերը: Վերջապես Ներոնն ու Տրդատը ժամանեցին Հռոմ: Քաղաքը զարդարված էր ջահերով ու ծաղկաշղթաներով: Ժողովուրդը շտապում էր թափանցել ֆորում, որ տեսնի արարողությունը: Մոտիկ տների բոլոր տանիքները լի էին հանդիսականներով: Հենց որ լույսը բացվեց, Ներոնը, սենատորների ուղեկցությամբ, մտավ ֆորում: Բարձրանալով ռոստրա՝ քարե բարձրություն, որտեղից հռետորները դիմում էին ժողովրդին, նա նստեց բազմաթոռին: Դրանից անմիջապես հետո երևաց Տրդատը իր շքախմբով:

«Քեզ հայտարարում եմ Հայաստանի արքա, քանզի և՛ դու հասկացար, և՛ ուրիշները հասկացան, որ ես կարող եմ և՛ խլել, և՛ տալ թագավորություններ»: Ապա Ներոնը Տրդատին առաջարկեց ռոստրա բարձրանալ և նրա գլխին դրեց թագը…

Մեծամասնությունը շատ լավ հասկանում էր, որ չնայած Տրդատի առերևույթ հնազանդությանը՝ նա վերցնում էր այն, ինչ հայ ժողովուրդը արդեն ձեռք էր բերել զենքի ուժով, իսկ Ներոնը շնորհում էր այն, ինչ արդեն իրեն չէր պատկանում:

Ներոնն այլևս չէր կարող երազել Հայաստանն իրեն ենթարկելու մասին: Դրա համար էլ նա ամեն կերպ ջանում էր գոնե շահել նրա համակրանքը: Երբ Տրդատը պատրաստվում էր վերադառնալ, Ներոնը նրա հետ բազմաթիվ հմուտ արհեստավորներ ուղարկեց: Նրանք պիտի օգնեին վերակառուցել Արտաշատը:

«Հին Հռոմ» *(ընթերցանության գիրք)*

Տրդատ III Մեծ

Տրդատ Ի-ի նշանավոր հաջորդներից էր **Տրդատ III Մեծը** (298–330թթ.):

Արշակունյաց արքայազն Տրդատը՝ ապագա Տրդատ III Մեծը, մանուկ հասակից մեծանում ու դաստիարակություն է ստանում Հռոմում: Այստեղ նա ռազմական արվեստ է սովորում, հմտանում զենքի գործածության մեջ: Ֆիզիկական մեծ ուժով ու ճարպկությամբ օժտված Տրդատը հաճախ էր մասնակցում կրկեսային մրցումների և միշտ հաղթանակով ավարտում դրանք: Տրդատը նաև քաջ ռազմիկ էր ու խիզախ պատերազմող:

Տրդատյան դարպասը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում. գործ՝ Վ. Սուրենյանցի

Այնպես պատահեց, որ գերմանական ցեղերի թագավորը մեծ զորքով պատերազմի դուրս եկավ Հռոմի դեմ: Նա հռոմեական կայսրին առաջարկեց՝ որպեսզի զորքերը չտուժեն, իրենք երկուսով դուրս գան մենամարտի: Ով հաղթի, այդ կողմն էլ կհամարվի հաղթանակած:

Նկատի ունենալով Տրդատի քաջագործությունները՝ կայսրը կարգադրեց արքայական թիկնոց հագցնել նրան, զարդարել կայսերական պատվանշաններով: Այդպես, հանդերձավորված իբրև «հռոմեական կայսր», Տրդատը մենամարտի դուրս եկավ գերմանացիների թագավորի դեմ և հաղթեց նրան: Հռոմեական կայսրը մեծ պարգևներ ու թագ շնորհեց Տրդատին և արքայական պատիվներով ու օգնական զորքով ուղարկեց հայրենի երկիր՝ Հայաստան:

Դրանից հետո Տրդատ թագավորը մի շարք հաղթանակներ տարավ պարսից զորքերի դեմ, դուրս քշեց նրանց Հայաստանի սահմաններից և վերադարձրեց հայրենի պետության գահը:

Տրդատ III-ը խոհեմ և հեռատես քաղաքական գործիչ էր: Ճիշտ կողմնորոշվելով ստեղծված իրավիճակում՝ նա կարևոր և վճռական քայլ է կատարում. 301թ.՝ նրա օրոք Հայաստանը պետականորեն ճանաչում է քրիստոնեությունը: Հայոց առաջին կաթողիկոսը Գրիգոր Լուսավորիչն էր:

Տրդատ Մեծի մասին

Հունգարական թագավոր Իշտվան Ի-ի թագը, որը, ըստ ավանդության, պատրաստվել է հայոց Տրդատ Մեծ արքայի թագի նմանությամբ:

Վասնզի իրոք սեգ էր հանդերձանքով և մեծ ուժով, հարստությամբ, ամուր ոսկորներով և հաղթ մարմնով, քաջ էր և կատաղի պատերազմող, բարձր ու լայն հասակով: Իր կյանքի բոլոր տարիներին նա պատերազմել էր և մարտերում հաղթություն ձեռք բերել: Քաջության փառքի մեծ անուն ստացավ և հոյակապ, փառավոր հաղթանակներ տարավ ամբողջ երկրում, թշնամիներին հարվածեց՝ ցանկալով իր հայրերի վրեժը լուծել:

Ագաթանգեղոս, *Հայոց պատմություն*

Արշակ II

Արշակունյաց տոհմի հայտնի արքաներից էր **Արշակ II-ը** (350-368թթ.):

Գահի բարձրանալուց հետո Արշակ թագավորը ձգտում է խաղաղություն և համերաշխություն հաստատել երկրում: Նա ամրապնդում է երկրի իշխանությունը: «Եվ Հայաստան աշխարհի թագավորությունը նորոգվեց ու պայծառացավ»,- գրում է Փավստոս Բուզանդ պատմիչը: Արշակ II-ի օրոք Հայոց կաթողիկոս է դառնում Ներսես Մեծը, որը Գրիգոր Լուսավորչի ժառանգներից էր: Ներսես կաթողիկոսը մեծ բարենորոգումներ է կատարում: Նրա նախաձեռնությամբ գումարված եկեղեցական ժողովում կանոններ են սահմանվում, որոնք կարգավորում էին երկրի և՛ եկեղեցական, և՛ աշխարհիկ գործերը:

Արշակ և Շապուհ: Արշակ թագավորի կառավարման սկզբնական շրջանի խաղաղությունը, սակայն, շուտով ընդհատվում է:

Պարսից բազմաքանակ զորքերը ներխուժում են Հայաստան, բայց չեն կարողանում հաղթել հայոց զորքին: Տեսնելով, որ չի

կարողանում հաղթել պատերազմում, պարսից Շապուհ արքան դիմում է խորամանկության: Նա իր մոտ է կանչում Արշակ թագավորին՝ իբր թե խաղաղություն ու բարեկամություն հաստատելու նպատակով: Արշակ II-ը, խուսափելով հայրենի երկրի հետագա ավերումից, ստիպված է լինում գնալ Պարսկաստան:

Փավստոս Բուզանդի շնորհիվ մեզ է հասել Արշակի մասին մի ուշագրավ, հայրենի հողի ուժը փառաբանող պատմություն:

Պարսից արքան խիստ մտահոգության մեջ էր՝ հայոց Արշակ թագավորը հավատարիմ կմնա՞ իրեն, թե՞ ոչ: Հայոց թագավորին փորձելու համար նա հրամայում է Հայաստանից հող ու ջուր բերել և շաղ տալ պալատական դահլիճի մի մասում, իսկ մյուսը թողնել իր բնական հատակով: Շապուհը Արշակ թագավորի հետ զբոսնում է այդ դահլիճում: Երբ նրանք քայլում են պարսկական հողի վրա, Արշակը խեղճանում է, տկարանում, ընդունում իր մեղավոր լինելը: Հենց որ նրանք կանգնում են հայկական հողի վրա, Արշակը միանգամից կերպարանափոխվում է, ըմբոստանում և սպառնում վրեժխնդիր լինել իր նախնիների համար: Այդպես մի քանի անգամ փորձելով Արշակ թագավորին՝ Շապուհը կարգադրում է փակել նրան հեռավոր Անհուշ բերդում և պահել այնտեղ մինչև կյանքի վերջը:

Պապ

Արշակ II-ի փոխարեն հայոց թագավոր է դառնում նրա որդին՝ **Պապը** (370-374թթ.):

Գահի բարձրանալուց անմիջապես հետո Պապ թագավորը ձեռնամուխ է լինում երկրի անկախության ամրապնդմանը: Դրան մեծ չափով նպաստում է Բագրևանդ գավառի Ձիրավ գյուղի մերձակա դաշտում տեղի ունեցած ճակատամարտում պարսից զորքերի դեմ տարած փայլուն հաղթանակը: Շապուհ II-ը ստիպ-

ված էր հաշտության պայմանագիր կնքել և ճանաչել Մեծ Հայքի անկախությունն ու Պապի գահակալությունը:

Պապ թագավոր

Երկրի ներքին կյանքի կարգավորման ու բանակի հզորացման համար Պապ թագավորը կտրուկ միջոցների է դիմում: Նրա հրամանով եկեղեցուն պատկանող հողերի մեծ մասը առգրավվում և բաժանվում է զինվորականներին: Սահմանափակվում են հոգևոր դասի արտոնությունները, փակվում կուսանոցներն ու մենաստանները: Հայոց երիտասարդ արքայի համարձակ և ինքնուրույն գործողությունների շնորհիվ սկսեց աճել երկրի բնակչությունը, իսկ հայոց բանակի թիվը կարճ ժամանակում հասավ շուրջ 90 հազարի: Սակայն այս ամենը նրա դեմ ուժեղ դժգոհություն առաջացրեց: Նրան մեղադրեցին Ներսես Մեծ կաթողիկոսին թունավորելու, անպարկեշտ վարք ու բարք ունենալու համար: Երկրի անկախության ամրապնդմանն ուղղված Պապի քայլերը դուր չէին գալիս նաև Հռոմեական կայսրությանը: Հռոմը ձգտում էր ամեն կերպ Պապին զրկել գահից: Պապ թագավորին հաջողվում է խուսափել իր դեմ կազմակերպված դավադրությունից: Ի վերջո, 374 թվականին Հայաստանում հռոմեական զորքերի զորավարը, որ կեղծավորաբար բարեկամ էր ձևանում, կայսեր հանձնարարությամբ խնջույքի է հրավիրում Պապին և դավադրաբար սպանում նրան:

Պապ թագավորի կարճատև կառավարումը հայոց պատմության ուշագրավ էջերից է: Պապը, չնայած իր երիտասարդ տարիքին, հեռատես ու տաղանդավոր ղեկավար էր, որն ամենից բարձր դասում էր պետության շահերը: Պետության ամրապնդմանն ուղղված հայոց արքայի ջանքերը անհետևանք չանցան: Հինգերորդ դարի սկզբում Արշակունյաց գահակալներից մեկի՝ Վռամշապուհ արքայի օրոք տեղի ունեցավ հայ ժողովրդի հետագա զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցող մի իրադարձություն՝ մաշտոցյան գրերի գյուտը: Այդ մասին մենք ավելի մանրամասն կիմանանք հետագա դասերին:

Երևանի Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը

Պատերազմի և Արշակ թագավորի մասին

«Իսկ Պարսից Շապուհ թագավորը իր ամբողջ զորքերով գալիս հասնում է պատերազմի տեղը: Երկու ճակատները խառնվում են իրար, և պարսից զորքը պարտություն է կրում: Մանավանդ նիզակավորների գնդերը մոլեգնաբար հարձակվելով, իրենց ձիերի վրայից հարվածելով՝ քաջությամբ գետին էին գլորում իրենց ախոյաններին Պարսից Շապուհ թագավորի դեմուդեմ: Երբ գետին էին գլորում, հայոց բոլոր զորքերը քաջալերական ձայնով աղաղակում էին. «Ա՛ռ, քաջ Արշակ»: Ամեն անգամ, երբ այդ պատերազմում մի ախոյան էին սպանում, նրան իրենց նախկին թագավոր Արշակին էին նվիրում՝ ասելով. «Մեր Արշակ թագավորին մատաղ եղիր»:

Շապուհ թագավորը, երբ հասնում է իր իշխանության երկիրը, զարմանք է հայտնում կռվող գնդի քաջության վրա, ինչ որ ինքը տեսավ: «Զարմացել եմ ես,– ասում է նա,– իմ տեսածի վրա: Մանկությունից ի վեր միշտ կռվի

ու պատերազմի մեջ եմ եղել, շատ տարի է, որ թագավոր եմ դարձել և տարի չեմ անցկացրել առանց կռվի, բայց ջերմ կռիվը սա էր, որին այս անգամ պատահեցի: Որովհետև երբ հայոց նիզակավորները առաջ էին գալիս, այնպես էին հարձակվում, ինչպես մի բարձր լեռ կամ ինչպես մի հզոր և անշարժ աշտարակ: Մի ուրիշ բանի վրա էլ եմ զարմացած՝ Հայկական գնդի միասիրտ հավատարմության և տիրասիրության վրա. որովհետև այսքան տարի է, որ նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, բայց նրանք նրանով էին քաջալերվում պատերազմի ժամանակ, իրենց սիրուց այնպես էին համարում, թե նա իրենց գլուխ է կանգնած իբրև թագավոր կամ իրենց հետ գնդի մեջ է, իբրև պատերազմի գլուխ կանգնած: Այո՛,– ասում էր նա,– երանի՜ նրան, ով Հայոց գնդի տերն է, այնպիսի՜ տիրասեր, միաբան և հավատարիմ զորքի»:

Փավստոս Բուզանդ, *Հայոց պատմություն*

Հարցեր և առաջադրանքներ

1. Արշակունյաց արքայատոհմի ինչ նշանավոր ներկայացուցիչների գիտեք: Երբ է կառավարել այդ արքայատոհմը Հայաստանում:
2. Ներկայիս Հայաստանի ինչ տեղանուններ գիտեք՝ կապված Արշակունյաց արքայատոհմի հետ:
3. Ո՞ր երկրում դաստիարակվեց Տրդատ Մեծը: Համառոտ պատմեք, թե ինչ քաջագործություններ է նա կատարել: Ինչ կարևոր իրադարձություն տեղի ունեցավ նրա կառավարման օրոք, 4-րդ դարի սկզբին:
4. Արշակունյաց ո՞ր արքան է հիմնել Խոսրովի անտառը: Հայոց ո՞ր մայրաքաղաքն է նա հիմնադրել:
5. Ինչ կարևոր քայլեր կատարեց Արշակ II-ը երկրի կյանքը կարգավորելու և պետությունը ամրապնդելու համար: Ո՞վ դարձավ Հայոց կաթողիկոս այդ ժամանակ:
6. Մի անգամ էլ կարդացեք Արշակի ու Շապուհի մասին պատմությունը: Դրանով ինչ է ցանկանում ասել մեզ պատմիչը:
7. Ինչո՞ւ Հռոմեական կայսրությունը Պապ թագավորի նկատմամբ թշնամական դիրք բռնեց, ինչո՞վ ավարտվեց դա:

ԴԱՍ 16
ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐ

Բագրատունյաց պողոտա,
Արշակունյաց պողոտա

Սանահինի վանքը

Ուշադիր նայեք Երևանի հատակագծից այստեղ բերված հատվածին: Տեսնում ենք, որ Բագրատունյաց և Արշակունյաց պողոտաները հատվում են: Դա կարծես խորհրդանշում է մեզանից ավելի քան 1125 տարի առաջ տեղի ունեցած պատմական կարևոր մի իրադարձություն՝ Աշոտ I Բագրատունու գահակալությամբ Հայոց անկախ թագավորության վերականգնումը:

Բագրատունյաց արքայատոհմի կառավարման ժամանակ Հայաստանը մեծ վերելք ապրեց: Բագրատունիների օրոք է Անին հռչակվել մայրաքաղաք և դարձել ժամանակի խոշոր քաղաքներից մեկը: Կառուցապատվել ու ընդարձակվել են Կարսը և տասնյակ այլ քաղաքներ: Հիմնադրվել են այնպիսի նշանավոր վանքեր, ինչպիսիք են Հաղպատը, Սանահինը, Տաթևը: Այսօր էլ, շրջելով Լոռու, Շիրակի, Սյունիքի և Հայաստանի այլ մարզերում, մենք կարող ենք տեսնել Բագրատունիների օրոք կառուցված շատ եկեղեցիներ, կամուրջներ և բազմաթիվ ուրիշ կառույցներ:

Անկախության վերականգնումը

7-րդ դարի առաջին կեսին արաբական ցեղերը միավորվեցին ու ստեղծեցին Արաբական խալիֆայությունը: Կարճ ժամանակում արաբները հսկայական նվաճումներ կատարեցին:

7-րդ դարի վերջին Արաբական խալիֆայությունը կարողացավ իրեն ենթարկել նաև Հայաստանը: Դրանից հետո շուրջ մեկուկես հարյուրամյակ հայ ժողովուրդը պայքարում էր օտար տիրապետությունից ազատվելու համար: Այդ ընթացքում բազմաթիվ ապստամբություններ եղան, որոնք գլխավորում էին Մամիկոնյանները, Բագրատունիները և իշխանական այլ տոհմերի ներկայացուցիչներ:

Անկախ պետականության հաստատման համար պայքարը լիովին հասավ իր նպատակին միայն 9-րդ դարի վերջերին, երբ Արաբական խալիֆայությունը ճանաչեց Աշոտ Բագրատունու թագավորական իշխանությունը:

Այդ բաղձալի օրը իրականություն դարձավ, որովհետև դրան հասնելու համար իրենց ջանքերը միավորեցին հայ իշխաններն ու հոգևորականները, արհեստավորներն ու գյուղացիները, մի խոսքով՝ բոլորը:

Բայց այդ պայքարը հաջողությամբ չէր ավարտվի, եթե չլիներ Բագրատունի իշխանների և հատկապես Աշոտ Բագրատունու հմուտ կառավարումը:

855թ. երիտասարդ Աշոտ Բագրատունին դարձավ հայոց իշխան: Կարճ ժամանակում, հմտորեն օգտագործելով իրեն տրված իրավունքները, նա կարողացավ հասնել Հայաստանից խալիֆայությանը տրվող հարկերի նվազեցմանը: Հայոց բանակի թիվը հասավ 40 հազարի:

Աշոտ Բագրատունին կարողացավ նաև բարեկամություն հաստատել ժամանակի հզոր պետություններից մեկի՝ Բյուզանդական կայսրության հետ:

Աշոտ Բագրատունու 30-ամյա կառավարման արդյունքը փառավոր էր. 885 թվականին խալիֆայությունը թագ ուղարկեց Աշոտ Բագրատունուն՝ դրանով իսկ ճանաչելով Հայոց անկախ պետության գոյությունը:

Աշոտ I Բագրատունին (885-890թթ.) դարձավ Բագրատունյաց հայոց թագավորության և Բագրատունիների արքայատոհմի հիմնադիրը:

Անկախ պետության վերականգնումը դժվարին ու երկարատև գործ էր: Ոչ պակաս դժվարին ու մեծ ջանքեր պահանջող խնդիր էր նաև ձեռք բերված անկախությունը պահպանելը: Աշոտ Ի-ը ամրապնդեց երկրի պաշտպանությունը և բարեկամացավ հարևան երկրների հետ:

Աշոտ Ի Բագրատունին կարողացավ միավորել հայկական հողերի մեծագույն մասը: Նրա օրոք Հայոց երկրում կարգուկանոն էր տիրում:

Աշոտ Ի-ին հաջորդեց նրա որդին՝ Սմբատ Ի-ը, որը շարունակեց հոր քաղաքականությունը: Սմբատ Ի-ի օրոք գրեթե ամբողջ Մեծ Հայքը մտավ Բագրատունյաց թագավորության մեջ: Հայոց երկրի հզորացումը, սակայն, հանգիստ չէր տալիս Արաբական խալիֆայությանը, որը ցանկանում էր վերականգնել Հայաստանի նկատմամբ ունեցած իր գերիշխող դիրքը: Սկսվեց կռիվների ու ավերածությունների երկարատև մի ժամանակաշրջան, որն ավարտվեց Սմբատ Ի-ի զորքերի պարտությամբ:

Աշոտ II Երկաթ և հաջորդներ

10-րդ դարի սկզբին արաբների դեմ պայքարի գլուխ կանգնեց թագաժառանգ Աշոտը, որը հայտնի է Աշոտ Երկաթ անունով: **Աշոտ II**-ի օրոք (914-928թթ.) Հայաստանը լիակատար անկախության հասավ: Բաղդադի խալիֆը Աշոտ II-ին ճանաչեց **շահնշահ**՝ արքայից արքա:

Սուրբ Խաչ նշանավոր եկեղեցին կառուցվել է 10-րդ դարի սկզբներին՝ Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու օրոք, Վանա լճի Աղթամար կղզում:

Աշոտ Երկաթի թագավորության օրոք տեղի ունեցած իրադարձությունները հիմք են դարձել հայ նշանավոր գրող Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» հայտնի պատմավեպի համար:

Աշոտ II Երկաթ

Աշոտ Երկաթից հետո շուրջ հարյուր տարի Հայոց թագավորությունը կայունության և բարգավաճման շրջան էր ապրում: Այդ ընթացքում Բագրատունիների մայրաքաղաք հռչակվեց **Կարսը**, որը կարճ ժամանակում կառուցապատվեց ու դարձավ նշանավոր քաղաք:

Աբասի որդին՝ **Աշոտ III Ողորմածը**, հզորացրեց բանակը և ամրապնդեց երկրի պաշտպանությունը: Աշոտ III-ի օրոք տեղի ունեցած ամենակարևոր իրադարձությունը նոր մայրաքաղաքի հիմնադրումն էր: 961թ. նա արքունիքը Կարսից տեղափոխեց **Անի**, որը հռչակեց Հայաստանի մայրաքաղաք: Անին ընդարձակվեց, կառուցապատվեց, պարսպապատվեց և դարձավ հռչակավոր քաղաք:

Այսօր էլ Անիի պարիսպները տեսանելի են Ախուրյանի աջ ափին՝ միջնադարյան Հայաստանի երբեմնի ծաղկուն մայրաքաղաքի տարածքում:

Գագիկ Առաջին

Բագրատունյաց Հայաստանն իր առավելագույն հզորությանը հասավ **Գագիկ I**-ի օրոք (990-1020թթ.): Գագիկ I-ը վերակառուցեց երկրի ռազմական ուժերը, զորքի թվաքանակը հասցրեց 100 հազարի: Բանակի հրամանատարությունը հանձնվեց տաղանդավոր զորավար Վահրամ Պահլավունուն:

Գագիկ թագավորի օրոք կառուցվեցին բազմաթիվ եկեղեցիներ, տաճարներ, պալատական և այլ շինություններ: Դրանցից նշանավոր էին Անիի Կաթողիկե և Գագկաշեն եկեղեցիները՝ հայտնի ճարտարապետ Տրդատի նախագծով, Մարմաշենի Վահրամաշեն եկեղեցին, այլ տաճարներ, պալատներ, ամրոցներ: Այսպիսով, 10-րդ դարի երկրորդ կեսին և 11-րդ դարի սկզբին

Վահրամաշեն եկեղեցին (Ամբերդ)

Բագրատունյաց Հայաստանը հզորության ու վերելքի շրջան էր ապրում:

Գագիկ I-ից հետո, սակայն, այդ վերելքն ընդհատվեց. գահի համար պայքար սկսվեց նրա որդիների միջև, խախտվեց երկրի կայունությունը:

Երկրի ներքին անկայունության և արտաքին հարձակումների հետևանքով 1045թ. բյուզանդական բանակը գրավեց Անին: Անիի Բագրատունիների թագավորությունը անկում ապրեց:

Չնայած դրան՝ իրենց գոյությունը պահպանեցին **Սյունիքի, Լոռու և այլ փոքր թագավորություններն ու հայկական իշխանական տները**: Բացի դրանից՝ ընդամենը մի քանի տասնամյակ հետո՝ 11-րդ դարի վերջերին հայ ժողովրդին հաջողվեց ստեղծել պետականության նոր կենտրոն Միջերկրական ծովի ափին՝ հեռավոր Կիլիկիայում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր պետության դեմ պայքարում 9-րդ դարի վերջերին վերահաստատվեց անկախ պետականությունը Հայաստանում:
2. Ի՞նչ նպաստավոր պայմաններ կային երկրի ներսում անկախության վերահաստատման համար:
3. Հայոց ո՞ր իշխանական տունը, ո՞ր իշխանը գլխավորեցին անկախության համար տարվող համազգային պայքարը:
4. Ի՞նչ դժվարություններ առաջացան Աշոտ I-ից հետո, և ո՞ւմ գլխավորությամբ վերականգնվեց երկրի կայուն վիճակը:
5. Ինչպիսի՞ն էր իրավիճակը Հայաստանում Աշոտ II-ի հաջորդների օրոք:
6. Ի՞նչ իրադարձություններ կատարվեցին երկրում Գագիկ I-ից հետո, ի՞նչ հետևանքներ ունեցան դրանք:

Դաս 17

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց հզոր արքա Տիգրան Մեծի օրոք Կիլիկիան նրա պետության մի մասն էր: Այն ժամանակ Կիլիկիայում բազմաթիվ հայեր բնակվեցին: Հայերն այստեղ պահպանում էին մայրենի լեզուն ու մշակույթը:

Բյուզանդական կայսրերի օրոք հայերի թիվը Կիլիկիայում շատացավ: Պատճառներից մեկն էլ այն էր, որ, ցանկանալով թուլացնել Հայաստանը, բյուզանդացիները հայ իշխաններին այստեղ տեղափոխվելու համար առաջարկում էին քաղաքներ, բերդեր, կալվածքներ: Այդպես վարվեց կայսրությունը նաև Բագրատունյաց վերջին թագավորի հետ: Գագիկ II թագավորին կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիս հրավիրելով՝ կայսրը ստիպեց նրան հրաժարվել իշխանությունից և թագավորության փոխարեն Կիլիկիայից ոչ հեռու գտնվող ընդամենը երկու քաղաք առաջարկեց: Որոշ ժամանակ անց Գագիկ II թագավորը սպանվեց բյուզանդացիների կողմից: Գագիկ թագավորի մերձավորներից մեկը՝ **Ռուբեն** իշխանը, ի պատասխան իր արքայի սպանության, **1080թ.** ապստամբեց բյուզանդացիների դեմ և Կիլիկիայում, Տավրոսի լեռներում գրավեց Բարձրբերդ ամրոցը: Ռուբեն իշխանին և նրա ժառանգներին հաջողվեց ոչ միայն պահպանել ձեռք բերածը, այլև ընդլայնել հայկական իշխանության տիրույթները: **Այսպես, հայրենի բնօրրանից հեռու ստեղծվեց հայկական նոր պետություն:**

Կիլիկիայի հայոց թագավորությունը

Կիլիկիայի հայոց պետությունը թագավորություն դարձավ Լևոն II-ի օրոք, որը պատմության մեջ հայտնի է նաև **Լևոն Մեծագործ** անունով: Խոհեմ և հեռատես քաղաքականության շնորհիվ Լևոն II-ը կարողացավ բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես Բյուզանդական կայսրության, այնպես էլ շրջակա

մահմեդական և խաչակրաց[1] պետությունների հետ: Լևոն II-ին հաջողվեց բարեկամական հարաբերություններ հաստատել նաև գերմանական կայսեր և Հռոմի պապի հետ, որոնք պատրաստ էին արքայական թագ ուղարկել նրան: Լևոն II-ի իշխանությունը ճանաչեց և նրան թագ ուղարկեց նաև Բյուզանդիայի կայսրը: Այնքան բարձր էր Լևոն II-ի հեղինակությունը, որ բյուզանդական կայսրը հորդորում էր նրան՝ չվերցնել Հռոմի պապի և գերմանական կայսեր ուղարկած թագը, այլ ընդունել միայն իրենը:

Լևոն II արքայի ոսկե կնիքը

1198թ. հունվարի 6-ին Տարսոն քաղաքի Մայր տաճարում **Լևոն II-ը** թագադրվեց որպես **թագավոր ամենայն հայոց և Կիլիկիայի**: Այդ թագադրությունը ժամանակակիցները գնահատեցին որպես Հայոց թագավորության վերականգնում: Լևոն II Մեծագործը և նրա հաջորդներն իրենց անվանում էին ամենայն հայոց թագավոր՝ դրանով իսկ շեշտելով, որ իրենք ներկայացնում են ոչ միայն Կիլիկիայի, այլև Մեծ Հայքում և նրանից դուրս ապրող ողջ հայության շահերը:

Ամրոց Կիլիկիայում

Լևոն II-ի օրոք Կիլիկիայի հայոց պետության սահմանները արևելքում հասնում էին մինչև Եփրատ, հյուսիսում՝ Տավրոսի լեռներ: Ավելի քան 500 կմ երկարություն ունեին թագավորության ծովային սահմանները: Թագավորության մայրաքաղաքը **Սիսն** էր, իսկ Այասը, Տար-

1. Խաչակրաց շարժումը սկսվել է 11-րդ դարի վերջում՝ Հռոմի պապի նախաձեռնությամբ: Շարժման մասնակից եվրոպացի խաչակիր ասպետները Արևելքում հիմնադրեցին մի շարք պետություններ, որոնցից էին Երուսաղեմի և Կիպրոսի թագավորությունները, Կիլիկիային սահմանակից Անտիոքի դքսությունը:

սոնը և ծովափնյա մյուս քաղաքները միջազգային առևտրի կենտրոններ էին: Այստեղ առևտուր էին անում տասնյակ երկրներից եկած տարբեր ազգերի մարդիկ՝ հույներ, իտալացիներ, ասորիներ, հրեաներ:

Կիլիկիայի հայոց թագավորության պետական լեզուն հայերենն էր: Կիլիկիայի հայերը միաժամանակ հաղորդակցվում էին նաև ֆրանսերեն, հունարեն և այլ լեզուներով: Քաղաքների բնակիչներն անգամ հագուստով ու սովորույթներով սկսել էին նմանվել եվրոպացիներին: Զգտումը դեպի Եվրոպա, դեպի Արևմուտք շատերին էր հրապուրում, բայց քիչ չէին նաև դրա հակառակորդները:

Թորոս Ռոսլին

Թորոս Ռոսլին, «Ավետում»

Միջերկրական ծովի ափին գտնվող Հայկական Կիլիկիայում բազմաթիվ մանրանկարիչներ են եղել, բայց նրանց մեջ ամենանշանավորը Թորոս Ռոսլինն էր: Նա գրքեր էր ընդօրինակում և դրանք պատկերազարդում նրբին արվեստով: Նրա զարդարած մագաղաթյա ձեռագրերը ապշեցնում ու հիացնում էին դիտողին: Ռոսլինի մասին ասում էին, թե յուրաքանչյուր էջի վրա մի տաճար է մանրակերտում:

Ձեռագրեր զարդարելու խնդրանքով Թորոս Ռոսլինին էին դիմում Կիլիկյան Հայաստանի նշանավոր շատ իշխաններ: Նրան դիմել է նաև կաթողիկոս Կոստանդինը, որը Լևոն թագավորի դաստիարակն էր և համայն Կիլիկիայում արվեստի մեծ հովանավորի անուն էր վաստակել: 1250թ. Թորոս Ռոսլինը նկարել էր արքայազն Լևոնին, որն այն ժամանակ 14 տարեկան էր: Նրան պատվերներ էին տալիս նաև Հայկական Կիլիկիայի հարևան երկրների երևելի մարդիկ:

Բազմաթիվ գրքեր է պատկերազարդել Թորոս Ռոսլինը, բայց դրանցից մեզ հասած յոթի վրա կա նրա ստորագրությունը: Այդ յոթից միայն մեկն է պահվում Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Մյուսները Երուսաղեմում են, Ստամբուլում (Կոստանդնուպոլիս) և այլ քաղաքներում:

Հեթումյաններ

Լևոն II-ից հետո գահը ժառանգեց նրա դեռատի դուստրը՝ **Զաբելը**: 1226թ. Զաբելն ամուսնացավ Կիլիկիայի ազդեցիկ տոհմերից մեկի ներկայացուցիչ, պատանի **Հեթում** իշխանի հետ: Դրանից հետո, Կիլիկիայի հայ իշխանների համաձայնությամբ, Հեթումը հռչակվեց հայոց թագավոր: Հեթում I-ը դարձավ Կիլիկյան Հայաստանի **Հեթումյան արքայատոհմի** հիմնադիրը:

Հեթում I-ի և նրան հաջորդած որդու՝ Լևոն III-ի օրոք Կիլիկյան Հայաստանը խաղաղ և բարգավաճ կյանքով էր ապրում: Սակայն նրանց ժառանգների օրոք, 13-րդ դարի վերջերից, երկիրը պարբերաբար ենթարկվում էր Եգիպտոսի սուլթանության և այլ պետությունների հարձակումներին: Մինչև 14-րդ դարի վերջերը Կիլիկիան կարողանում էր դիմագրավել այդ հարձակումներին:

Կոստանդին II-ը՝ բազմած գահին.
Նկարիչ՝ Հենրի Դելապորտ, 1844թ.

1375թ., այնուամենայնիվ, հզորացած Եգիպտոսի սուլթանության և շրջակա մահմեդական պետությունների զորքերին հաջողվեց գրավել Սիս մայրաքաղաքը: Կիլիկիայի հայությունը, սակայն, շարունակեց պայքարը: Այդ պայքարի գլուխ կանգնեց Կիլիկիայի վերջին թագավորներից մեկի թոռը՝ Կոստանդին զո-

ռավարը: Նա շուրջ հիսուն տարի փորձում էր վերականգնել Հայոց թագավորությունը: Այնուհետև մի շարք իշխանական տներ ամրացան Զեյթուն, Հաճըն, Մարաշ և այլ բերդաքաղաքներում և իրենց կիսանկախ գոյությունը կարողացան պահպանել մինչև 19-րդ դարը:

Սմբատ Սպարապետ

Սմբատ Սպարապետը՝ արքայի առջև

Դեռ շատ երիտասարդ տարիքում դառնալով կիլիկյան զորքի հրամանատար՝ Սմբատ Սպարապետը (Գունդստաբլ) մինչև կյանքի վերջը գլխավորեց հայոց զորաբանակը: Իր երկրում խաղաղությունը տևական դարձնելու համար շատ անգամ ստիպված է եղել հեռավոր ճամփորդությունների ելնել՝ բանակցություններ վարելու այլ երկրների տիրակալների հետ: Իր հաղթանակներով հռչակված զորապետին, դիվանագետին, պատմագրին, իրավագետին, բանաստեղծին, մի քանի լեզուներ տիրապետողին բարձր էին գնահատում թե՛ եվրոպացիները, թե՛ մոնղոլները:

Սմբատ Սպարապետը հայտնի էր որպես արվեստների երկրպագու, հայտնի է նաև, որ նա պատվիրել է սքանչելի նկարազարդված ավետարաններ: Սմբատ Գունդստաբլը հաճախ իր մոտ էր հրավիրում մտավորական և շնորհալի մարդկանց՝ բանաստեղծների, փիլիսոփաների, նկարիչների, բժիշկների, ճարտարապետների, տիեզերագետների, ճարտասանների: Շատերն այստեղ էին գալիս իրենց գիտական աշխատություններով, բանաստեղծություններով կամ գրքերի նկարազարդումներով: Այստեղ կարելի էր հանդիպել գիտնականների և արվեստագետների, դեսպանորդների և վաճառականների, գեղանկարչության գիտակների, համբավ վայելող ճարտասանների:

Նա, ով ինչ-որ բան էր պատմում կամ առարկում մյուսներին, բարձրանում էր ամբիոն՝ շարքերով դրված

բազկաթոռների դիմաց: Ամբիոնի երկու կողմերում թիկնաթոռներ կային՝ տանտիրոջ և ամենաերևելի հյուրերի համար: Շատ հաճախ այնտեղ էր նստում ինքը՝ Հեթում արքան:

Սմբատ Սպարապետը զոհվեց 68 տարեկան հասակում, եգիպտական բանակի հետ մարտի ժամանակ: Նա արժանապատիվ կյանք ապրեց ու զոհվեց իսկական տղամարդու պես:

Ըստ Թելման Զուրաբյանի «Թորոս Ռոսլին» գրքի

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ և ո՞ւմ կողմից հիմնադրվեց Կիլիկիայի հայոց պետությունը:
2. Երբ և ո՞ր քաղաքում տեղի ունեցավ Լևոն II-ի թագադրությունը:
3. Համառոտ ներկայացրե՛ք Կիլիկյան Հայաստանը Լևոն II-ի օրոք:
4. Ի՞նչ իրավիճակում էր Կիլիկիան Լևոն III-ից հետո:
5. Երբ անկում ապրեց Կիլիկիայի հայոց թագավորությունը: Ո՞վ գլխավորեց Կիլիկիայի հայության պայքարը դրանից հետո:

«Կիլիկիա» առագաստանավը

ԴԱՍ 18
ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ



Նախորդ դասերին մենք ծանոթացանք հայոց պետականության անցած ճանապարհին: Մենք իմացանք, որ հայերը շատ վաղ ժամանակներում ստեղծեցին իրենց պետականությունը: Եղել են նաև ժամանակներ, երբ պետություն չենք ունեցել: Չնայած դրան՝ ժողովուրդը երբեք չի կորցրել հույսը և ամեն ինչ արել է անկախ պետականության վերականգնման համար: Այդ ջանքերը զուր չանցան և 20-րդ դարի սկզբներին վերջապես հաջողությամբ պսակվեցին: **1918թ. մայիսին, ավելի քան 500-ամյա ընդմիջումից հետո, կրկին վերականգնվեց հայոց անկախ պետականությունը**:

Վերհիշեք, թե երբ հիմնադրվեց Կիլիկիայի հայոց պետությունը, երբ հասավ թագավորության աստիճանի և մինչև երբ գոյատևեց:

1918 թվականից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանում Հայաստանը երեք հանրապետություն է ունեցել. Հայաստանի առաջին հանրապետությունը (1918-1920թթ.), Խորհրդային Հայաստանը (1920-1991թթ.) և, 1991թ. սկսած, Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանի առաջին հանրապետությունը (1918-1920թթ.)

1918թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո սկսվեց իշխանության մարմինների ստեղծումը: Ձևավորվեց հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ **Հայաստանի խորհուրդը**:

Հայաստանի նորանկախ հանրապետության կառավարությունը կազմված էր վեց նախարարից, որոնց թվում էր Հայաստա-

նի առաջին հանրապետության հիմնադիր և նշանավոր պետական գործիչ **Արամ Մանուկյանը:** Կառավարության առաջին նախագահը (վարչապետը) **Հովհաննես Քաջազնունին** էր:



Արամ Մանուկյան

Հայոց պետականության ամրապնդման ճանապարհին կարևոր քայլ էր անկախ և միացյալ Հայաստանի հռչակումը: 1919թ. մայիսի 28-ին Հայաստանի խորհրդի հանդիսավոր նիստում հանրապետության կառավարությունը հայտարարեց անկախ և միացյալ Հայաստանի հռչակման մասին: Հռչակելով այն՝ կառավարությունը նպատակ ուներ վերականգնել Հայաստանի ամբողջականությունը՝ կատարելով հայ ժողովրդի միահամուռ կամքն ու ցանկությունը:

Գարեգին Նժդեհ. 20-րդ դարի հայ նշանավոր պետական, քաղաքական և ռազմական գործիչ

Հանրապետությունն ուներ իր պետական խորհրդանիշները: 1918թ. Հայաստանի ազգային դրոշ հաստատվեց եռագույնը՝ կարմիր, կապույտ և ծիրանագույն հորիզոնական շերտերով: 1920թ. հուլիսին կառավարությունը հաստատեց ՀՀ զինանշանը, որի հեղինակներն էին ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը: Օրհներգ դարձավ Միքայել Նալբանդյանի խոսքերով ստեղծված «Մեր հայրենիք» երգը: Սահմանվեցին նաև ազգային պետական տոներ և բարձրագույն պետական պարգևներ, շքանշաններ:

Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական կապեր ուներ Պարսկաստանի, Վրաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի և այլ պետությունների հետ:

Հայաստանի Հանրապետությունը գոյություն ունեցավ երկուսուկես տարի: Հայտնվելով ծանր իրավիճակում՝ 1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի առաջին հանրապետության վերջին կառավարությունը իշխանությունը կամովին հանձնեց Հայաստանի հեղափոխական կոմիտեին: Հայաստանը հռչակվեց Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:

Խորհրդային Հայաստան (1920-1991թթ.)

Խորհրդային Հայաստանը գոյություն ունեցավ շուրջ 70 տարի: Այդ ընթացքում հանրապետությունն ուներ իր սահմանադրությունը, դրոշը, զինանշանը, օրհներգը և պետականության այլ խորհրդանիշներ: Սակայն Հայաստանը անկախ պետություն չուներ: Երկրի կյանքին վերաբերող բոլոր կարևորագույն հարցերը լուծվում էին Մոսկվայում, որը սկզբում Խորհրդային Ռուսաստանի, իսկ հետո միաժամանակ նաև Խորհրդային Միության մայրաքաղաքն էր:

Խորհրդային Հայաստանի զինանշանը

Հայաստանի Գերագույն խորհուրդը, այսինքն՝ օրենսդիր մարմինը, որևէ ինքնուրույնություն չուներ, և նրա կողմից ընդունված օրենքները չէին տարբերվում Խորհրդային Միության համանման օրենքներից: Կառավարությունը նույնպես բոլոր կարևոր հարցերը անպայման համաձայնեցնում էր ԽՍՀՄ կառավարության հետ:

Ալեքսանդր Մյասնիկյանի արձանը Երևանում

Չնայած դրան՝ խորհրդային տարիներին Հայաստանն ունեցել է տնտեսական, գիտական և մշակութային զարգացում, կառուցվել են բազմաթիվ գործարաններ, բնակելի շենքեր, դպրոցներ, կրթական և մշակութային այլ հաստատություններ: Խորհրդային Հայաստանի ղեկավար շատ գործիչներ ձգտել են զարգացնել Հայաստանը, նպաստել տնտեսության, գիտության, ազգային մշակույթի ծաղկմանը: Այդպիսի գործիչներ էին Ալեքսանդր Մյասնիկյանը, Աղասի Խանջյանը, Յակով Զարոբյանը և ուրիշներ:

Հայաստանի Հանրապետություն

1988թ. փետրվարին Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում սկիզբ առավ համաժողովրդական պայքար Արցախի ազատության համար:

Խորհրդային Միության ղեկավարությունը ձգտում էր ճնշել շարժումը, որն ի վերջո դարձավ պայքար նաև Հայաստանի անկախության համար: 1991թ. սեպտեմբերի 21-ին տեղի ունեցած հանրաքվեով Հայաստանի բնակչության բացարձակ մեծամասնությունը կողմ քվեարկեց անկախությանը՝ կրկին հաստատելով անկախ պետականություն ունենալու համազգային ձգտումը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի շենքը

Հայաստանի նորանկախ հանրապետությունը պիտի հաղթահարեր բազմաթիվ դժվարություններ: Դրանք զինված բախումներն էին Հայաստանի և Ադրբեջանի սահմաններին, Ադրբեջանից հարյուրհազարավոր հայ փախստականների առկայությունը և այլ հիմնախնդիրներ: Չնայած այդ ամենին՝ հայ ժողովուրդը կարողացավ հաղթահարել դժվարությունների ամենածանր փուլը և նոր պետականության կառուցման հաստատուն քայլեր անել: Հայաստանն ընդունեց սահմանադրություն, ձևավորեց խորհրդա-

ման, որը կոչվում է **Ազգային ժողով:** 1991թ. սահմանվեց նախագահական կառավարում: Պատմության մեջ առաջին անգամ մենք ընտրեցինք **հանրապետության նախագահ**: Փոխվեց նաև երկրի տարածքային կառավարումը. հանրապետությունը բաժանվեց մարզերի և համայնքների:

1988 թվականի համաժողովրդական ցույցերից մեկը

Անկախության տարիների ամենակարևոր ձեռքբերումներից մեկը **ազգային բանակի** ստեղծումն էր: Ուժեղ ու մարտունակ բանակը հայրենիքի սահմանների անվտանգության և տարածքային ամբողջականության երաշխավորն է:

Հայաստանի Հանրապետությունը անկախ պետականություն ունենալու հայ ազգի դարավոր իղձերի իրականացումն է: Այն պահպանելն ու զարգացնելը մեզանից յուրաքանչյուրի սրբազան պարտքն է:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է մայիսի 28-ը մեզ համար տոնական օր: Ի՞նչ կարևոր պատմական իրադարձություն է տեղի ունեցել այդ օրը: Ո՞ր թվականին:
2. Ինչպե՞ս էր կոչվում Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր մարմինը: Ե՞րբ սկսեց իր աշխատանքը:
3. Ի՞նչ հայտարարություն արեց Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունը անկախության առաջին տարեդարձի օրը: Ձեր կարծիքով՝ ինչո՞վ էր այն կարևոր:
4. Մինչև ե՞րբ գոյություն ունեցավ Հայաստանի առաջին հանրապետությունը: Ո՞ւմ և ի՞նչ ձևով փոխանցվեց իշխանությունը:
5. Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ կազմում ընդգրկված 15 հանրապետություններից մեկն էր: Արդյոք դա նշանակո՞ւմ է, որ Հայաստանը ինքնուրույն պետություն էր: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
6. 1991թ. տեղի ունեցած ո՞ր իրադարձությամբ կրկին հաստատվեց Հայաստանի անկախությունը: Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան դրանից հետո երկրի կառավարման բնագավառում:

ԴԱՍ 19
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Հարցեր և առաջադրանքներ «Մեր երկիրը», «Իմ լեզուն, իմ հավատը, իմ եկեղեցին», «Պատմություններ մեր հայրենիքի մասին» գլուխների վերաբերյալ

1. Բնութագրեք Հայկական լեռնաշխարհի նշանավոր լեռները, գետերը, լճերը, բուսական և կենդանական աշխարհը:
2. «Տեղանուն – օբյեկտ» սկզբունքով կազմեք զույգեր:
   Օրինակ՝ Մասիս – լեռ:
   Նեմրութ, լեռներ, Արևելապոնտական, Սևան, բույս, գետ, Արածանի, Վանա, Արաքս, Ծաղկանց, դաշտ, լիճ, Արարատյան, քարայծ, հաճարենի, կենդանի:
3. Ինչո՞ւ է Հայկական լեռնաշխարհը համարվում հայ ժողովրդի բնօրրանը:
4. Ներկայացրեք Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների բնության, բնակչության և տնտեսության հիմնական առանձնահատկությունները:
5. Ինչո՞ւ են մարդիկ կարևորում իրենց ծննդավայրը, նրա հետ կապված հուշերը:
6. Ի՞նչ գիտեք հայոց լեզվի մասին. մեր լեզուն անցյալում և հիմա, արևելահայերեն և արևմտահայերեն, բարբառներ:
7. Հայ ժողովրդական առասպելներ. ինչպե՞ս են դրանք մեզ հասել, առասպելական ո՞ր հերոսներն են ձեզ հարազատ, ներկայացրեք որևէ առասպել:
8. Թվարկեք հայոց արքայատոհմերը, նշեք մի քանի հզոր արքաների անուններ:
9. Ներկայիս Հայաստանում ի՞նչ բնակավայրեր, կառույցներ, շինություններ են կապված հայոց արքայատոհմերի և արքաների անվան հետ:
10. Ի՞նչ դեր են կատարել Արտաշես Ի-ը և Տիգրան Մեծը մեր ժողովրդի կյանքում:

11. Ինչ նշանավոր իրադարձություններ են տեղի ունեցել Հայոց երկրում Արշակունյաց և Բագրատունյաց արքայատոհմերի գահակալության օրոք:
12. Կիլիկյան Հայաստանի պատմության ինչ հետաքրքրական իրադարձություններ և կյանքի առանձնահատուկ կողմեր կարող եք ներկայացնել:
13. Ինչ գիտեք Հայաստանի երեք հանրապետությունների մասին:

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը

ԳԼՈՒԽ 4
ՄԵՐ ԵՐԿՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԴԱՍ 20
ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

Հայ ժողովրդի, նրա մշակույթի մասին խոսելիս հաճախ լսում ենք. հայ մշակույթը գալիս է դարերի խորքից, կամ՝ մենք՝ հայերս, ունենք հարուստ մշակույթ:

Իսկ ինչ է մշակույթը: Այս հարցին պատասխանելու համար եկեք հիշենք, թե ինչ զգացողություն ենք ունենում, երբ հանկարծ մեր ձեռքն է ընկնում որևէ հին լուսանկար: Եթե դա մեկնումեկիս փոքր տարիքի լուսանկարն է, բնականաբար հետաքրքրությամբ նայում ենք: Նույնքան հետաքրքրական են նաև մեր ծնողների, պապիկների ու տատիկների լուսանկարները: Բայց ինչն է մեզ գրավում, երբ նայում ենք բոլորովին անծանոթ, ասենք՝ հարյուր տարի առաջ ապրած մարդկանց նկարները: Մեզ դա հետաքրքրում է, որովհետև արտացոլում է անցյալի մարդկանց սանրվածքը, հագուստը և այլն: Մենք կարծես փորձում ենք հասկանալ այդ մարդկանց, իմանալ նրանց մասին: Նույն կերպ մեզ հետաքրքրում են անցյալում ստեղծված այլ իրեր, նյութական (կամուրջ, տուն, կավե կճուճ, հագուստ և այլն) և հոգևոր (գիրք, նկար, երգ, քանդակ և այլն) արժեքները: Այդպիսի զգացողություն մենք ունենում ենք հատկապես թանգարաններում: Այնտեղ պահվող յուրաքանչյուր իր մշակութային արժեք է: Բայց միշտ չէ, որ մշակութային արժեքները պահվում են թանգարաններում: Օրինակ՝ այդպիսի արժեքներ են երգը, երաժշտությունը, բանահյուսությունը, գրականությունը: Դրանք ժողովրդի հոգևոր արժեքներն են, որոնք ստեղծվում են տարբեր ժամանակներում, տարբեր սերունդների կողմից և մի տեսակ կապող օղակ են տարբեր ժամանակներում ապրած մարդկանց միջև: Օրինակ՝ մեզ բոլորիս էլ հետաքրքրում է, թե ինչ երգեր են երգել, ինչ գրքեր են կարդացել, ինչ զարդեր են կրել անցյալ ժամանակներում: Այդ բոլոր արժեքները ստեղծվել են, որպեսզի բանաստեղծության,

երգի կամ քանդակի լեզվով իրենց ժամանակակիցներին հաղորդեն մտքեր, տեսակետներ, գաղափարներ, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունը: Օրինակ՝ դարեր առաջ ստեղծված հայ բանաստեղծների տաղերը, որոնք պատմում են սիրո, հայրենիքի, ազնվության մասին, այսօր էլ թարմ են, հետաքրքրական: Եվ դեռ երկար ժամանակ կպահպանվեն որպես այդպիսիք: Իսկական մշակութային արժեքները երբեք չեն հնանում:

Հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ իր մեծագույն տեղն ունի բանահյուսությունը՝ ժողովրդի բանավոր ստեղծագործությունը: Այսինքն՝ բանահյուսության հեղինակը ժողովուրդն է: Նա պարզ, հասկանալի լեզվով հորինել և պատմել է իր կյանքում տեղի ունեցած տարբեր իրադարձությունների՝ ուրախության, վշտի, պայքարի, հաղթանակների ու պարտությունների մասին: Դարերի ընթացքում ձևավորվել է ժողովրդական բանահյուսության կարևոր տեսակներից մեկը՝ **էպոսը**: Այս կամ այն ժողովրդին կարելի է ճանաչել նրա էպոսով, քանի որ այնտեղ արտացոլվում են ազգային բնավորության գծերը, ոգին, նկարագիրը: Հայ մեծ գրող Հովհաննես Թումանյանը այսպես է ասել մեր էպոսի մասին. *«Ահա հայ ժողովուրդը՝ խտացած իր ազգային էպոսի՝ «Սասունցի Դավթի» մեջ»:*

Հայ ժողովրդի ազգային էպոսը կոչվում է «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ»: Ոչ ոք չի կարող ճշգրիտ ասել, թե երբ է ստեղծվել էպոսը: Հորինվել է շատ հին ժամանակներում և տարածվել ասացողների միջոցով: Դրանք այն մարդիկ են, որոնք գիտեն շատ երգեր, պատմություններ, որ լսել են իրենց պապերից և կարողանում են մեծ վարպետությամբ պատմել կամ արտասանել: Հետագայում, 19-րդ դարից սկսած, բանահավաքները[1]

1. Բանահավաքները այն մարդիկ են, որոնք, շրջելով քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, գրի են առնում այն ամենը, ինչ լսում են ասացողներից:

սկսեցին գրի առնել էպոսը: Առաջին անգամ գրի առավ հայ անվանի բանահավաք Գարեգին Սրվանձտյանցը, որի շնորհիվ պահպանվել ու մեզ են հասել էպոսը և ժողովրդական բանահյուսության շատ նմուշներ:

«Սասնա ծռեր» էպոսը վառ կերպով պատկերում է մեր ժողովրդի բնավորության հիմնական գծերը: Առաջին հերթին՝ **հերոսությունը**: Բոլոր հերոսները՝ Սանասարը, Մեծ Միհրը, Դավիթը, Փոքր Միհրը, քաջ են, անվախ, կարող են դիմանալ ամենատարբեր փորձությունների և դժվարությունների: Նրանք բոլորը ծառայում են հայրենիքին ու ժողովրդին: Հայրենի հողը պաշտպանելու համար պատրաստ են ամենահերոսական արարքների: Դավիթն, օրինակ, հաղթելով իր թշնամուն՝ Մելիքին, ոչնչացնում է նրան, սակայն զորքին տուն է ուղարկում՝ զգուշացնելով.

Բայց թե մին էլ զենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վրրա,
Հորում լինի քառասուն գազ խոր
Թե ջաղացի քարի տակին,–
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր,
Սասմա Դավիթ, Թուր Կեծակին:

Մեր էպոսի հերոսները նաև անսահման **բարի** ու **մեծահոգի են, շիտակ** ու **վեհանձն**: Դա հատկապես լավ է երևում էպոսի այն տեսարանում, երբ Դավիթը մեծահոգաբար զիջում է Մելիքին առաջին հարվածի իրավունքը. նա իր առաջին երկու զարկերը զիջում է Մելիքի մորն ու քրոջը, քանի որ վերջիններս իրեն պահել ու խնամել են: Դավիթն իր ժողովրդի նման երախտագետ է, այսինքն՝ երբեք չի մոռանում նրանց, ովքեր իրեն լավություն են արել:

Երբ ասում ենք Սասունցի Դավիթ, հասկանում ենք հայ ժողովուրդ, ճիշտ այնպես, ինչպես երբ ասում ենք Աքիլլես, հասկանում ենք հույն ժողովուրդ, երբ ասում ենք Իլյա Մուրոմեց, հասկանում ենք ռուս ժողովուրդ և այլն:

Գ. Գրիգորյան

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ են մեզ հետաքրքրում անցյալի մշակութային արժեքները:
2. Երբևէ տեսել եք որևէ հին լուսանկար. ի՞նչ զգացողություններ եք ունեցել:
3. Ի՞նչն է, ձեր կարծիքով, մշակութային արժեքների մշտապես հետաքրքրական մնալու գաղտնիքը:
4. Ի՞նչ է բանահյուսությունը:
5. Ո՞րն է հայ ժողովրդի էպոսը:
6. Ի՞նչ կապ կա ժողովրդի և նրա էպոսի միջև:
7. Բնավորության ի՞նչ գծեր ունեն մեր էպոսի հերոսները:

Սասունցի Դավթի արձանը Երևանում

ԴԱՍ 21
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵՎ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ

Գրերի գյուտ: Ոսկեդար

Մեր ժողովրդի անցած պատմական ուղու մի շատ կարևոր հատվածն է 5-րդ դարը, որն անվանում են Ոսկեդար: Հենց այս դարում տեղի ունեցան հայոց պատմության մեջ վիթխարի նշանակություն ունեցող դեպքեր: Առաջին հերթին՝ **հայոց գրերի** գյուտը:

Հայոց գրերը ստեղծողը Մեսրոպ Մաշտոցն է: Մաշտոցի անունն ու գործը սրբություն են ամեն մի հայի համար: Իր գործում Մաշտոցը միայնակ չէր. նրա անբաժան համախոհն ու ընկերն էր Հայոց կաթողիկոսը՝ Սահակ Պարթևը, իսկ մեծ հովանավորն ու օժանդակողը արքան էր՝ Վռամշապուհը:

Մեսրոպն իր առաջին իսկ քայլերից մի հզոր և հեղինակավոր աջակից ու հովանավոր ուներ՝ Վռամշապուհ թագավորը:

Վռամշապուհը նախավերջինն էր Արշակունի թագավորների մեջ: Կարծես բնազդով նա զգում էր, որ ժողովրդին պետք է տալ ապրելու, գոյատևելու մի այնպիսի միջոց, որ խախուտ չէ գահերի պես, քանի որ ապրում է սրտերի և մտքերի մեջ: Եվ նա իր իշխանությունն ու ամբողջ բարի կամեցողությունը դնում է Մեսրոպի ու Սահակի տրամադրության տակ՝ բարի գործը հաջողեցնելու համար:

Վռամշապուհը լսել էր, որ Միջագետքում՝ Դանիել անունով մի եպիսկոպոսի մոտ հայերեն տառեր կան: Սահակի և Մեսրոպի խնդրանքով թագավորը մարդ է ուղարկում Դանիելի մոտ և բերել տալիս այդ տառերը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ դանիելյան տառերը անկատար են, և դրանցով չի կարելի լեզու ավանդել: Ինքը՝ Մեսրոպը, ոչինչ չի կարողանում անել այդ դժվարության դեմ. անզոր էր և Սահակ կաթողիկոսը, և առ-

հասարակ ոչ ոք մայրաքաղաքում չի կարողանում օգնել: Բայց Մեսրոպը կանգ չի առնում այդ անհաղթահարելի արգելքի առջև. եթե հաջողություն չկա տանը, պետք է որոնել դրսում:

Վերցնելով իր հետ մի քանի աշակերտներ՝ Մեսրոպը ուղևորվում է արտասահման: Վռամշապուհը և Սահակը ճանապարհ են դնում նրան բարեմաղթություններով:

Ըստ Լեոյի

5-րդ դարի սկզբին՝ 405 թվականին, Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթև կաթողիկոսին ու Վռամշապուհ թագավորին հաջողվեց իրականացնել այբուբենի ստեղծման կարևոր գործը: Այդ այբուբենն այնքան կատարյալ է, որ մենք՝ հայերս, գործածում ենք մինչև օրս:

Մեր այբուբենը

Այբուբեն չէ սա՝
Բերդ է անմատույց,
Գանձ է անսպառ.
Դու՛ռ է փրկության,
Ելք, երբ հույս չկա,
Զարթոնքի նվագ:

Էությունն է մեր,
Ընթացքն ու ուղին,
Թագ ու զորավար.
Ժողովող մի կանչ,
Իմաստուն խորհուրդ,
Լինելու հնար:

Գևորգ Էմին

Նախորդ դասերից վերհիշեք, թե զարգացման ինչ ուղի է անցել հայոց լեզուն:

Յուրաքանչյուր ժողովրդի կյանքում հսկայական դեր և նշանակություն ունի սեփական գրի գոյությունը: Դա ազգի գոյատևման կարևոր նախապայման է: Գրի միջոցով են ստեղծվում, պահպանվում ու սերունդներին փոխանցվում պատմական, մշակութային և այլ արժեքներ:

Ամեն տարի Հայ եկեղեցին նշում է սուրբ թարգմանիչներին նվիրված տոնը (Թարգմանչաց տոն): Սուրբ թարգմանիչներին նվիրված տոնը նշվում է հոկտեմբերի 3-ից նոյեմբերի 7-ը ժամանակահատվածում:

Թարգմանիչ են անվանվել Սահակ Պարթև հայրապետը, Մեսրոպ Մաշտոցը, նրանց անմիջապես աշակերտած շուրջ 100 սաները, ինչպես նաև նրանց աշակերտների աշակերտները, ովքեր կոչվել են կրտսեր թարգմանիչներ: «Թարգմանիչ» նշանակել է նաև մեկնիչ, բացատրող:

Հորինելով հայկական տառերը՝ Մեսրոպ Մաշտոցը իր աշակերտների հետ թարգմանության առաջին փորձն է անում: Թարգմանված առաջին նախադասությունը Աստվածաշնչի Առակաց գրքից էր. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Ճանաչել իմաստությունը և խրատը, իմանալ հանճարի խոսքերը):

Սա նաև առաջին հայ ուսուցչի գրավոր պատգամն է իր աշակերտներին ու սերունդներին:

Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց

Մինչև Մաշտոցը մեր ժողովուրդը գրավոր խոսքում օգտագործում էր հունարեն, պարսկերեն, ասորերեն լեզուները:

Մաշտոցյան այբուբենի ստեղծումից հետո սկիզբ առավ մի հզոր շարժում, որն ընդունված է անվանել թարգմանչաց կամ թարգմանական շարժում:

Այդ շարժման գլուխ կանգնած էին մեր գրականության երկու մեծ այրերը՝ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը:

Նրանք իրենց աշակերտների հետ թարգմանեցին բազմաթիվ գրքեր: Հայտնի է, որ առաջինը թարգմանվեց Աստվածաշունչը: Հետագայում թարգմանվեցին շատ այլ գրքեր:

Թարգմանական շարժումից սկիզբ առավ նաև հայ առանձին գրականությունը: Սա նշանակում է, որ հայոց լեզվով գրվեցին ինքնուրույն ստեղծագործություններ. դրանք հիմնականում հայոց

պատմությունը ներկայացնող մատյաններ էին: Այս շրջանում ստեղծվեցին Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Կորյունի, Եղիշեի, Ղազար Փարպեցու և, իհարկե, Մովսես Խորենացու պատմությունները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ են 5-րդ դարն անվանում Ոսկեդար:
2. Ի՞նչ կարևոր իրադարձություններ տեղի ունեցան 5-րդ դարում:
3. Հանրագիտարանից կամ այլ լրացուցիչ աղբյուրներից տեղեկություններ գտի՛ր Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի մասին:
4. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է ժողովրդին անհրաժեշտ սեփական գիր ունենալ:
5. Ի՞նչ փողոցներ, դպրոցներ և այլ հաստատություններ գիտեք, որոնք կրում են Մաշտոցի անունը:
6. Շարունակե՛ք հետևյալ միտքը.
   Մեսրոպ Մաշտոցի կատարած գործն անգնահատելի է, քանի որ...

ԴԱՍ 22
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Մովսես Խորենացին որպես Պատմահայր և ազգային մշակույթի խոշոր ներկայացուցիչ

Մովսես Խորենացին բացառիկ ու հանճարեղ անուն է հայոց պատմության մեջ: Նրան անվանում են Պատմահայր, Քերթողահայր[1], փիլիսոփա: Նա սերունդներին է թողել ազգի պատմությունը՝ սկսելով անհիշելի ժամանակներից, առասպելական պատմություններից մինչև իր ապրած ժամանակաշրջանը՝ 5-րդ դարը: Նրանից առաջ որևէ մեկն այսպիսի պատմություն չէր գրել: Ընդունված է համարել, որ Խորենացին հայերին տվեց իրենց ծննդյան վկայականը: Նա բացատրեց, թե ովքեր են հայերը, ինչ ծագում ունեն, որտեղից են գալիս:

Ինչպես մի թռչուն այս ու այն տեղից հավաքելով մի ծեղ, մի տերև, մի սեզ, մի փետուր, միակ իր կտուցի օգնությամբ հյուսում է բույն ճագուկների համար, այնպես էլ Խորենացին՝ զանազան կցկտուր, անկապ, ավելի կամ պակաս հավանական տեղեկություններ այստեղից-այնտեղից հավաքելով, իր հմտության ու տաղանդի շնորհիվ կցկցել, միացրել, հարմարեցրել է իրար այդ նյութերը և ստեղծել է իր հոյակապ պատմագրական շենքը իր ազգի համար:

Ստեփան Մալխասյանց

Խորենացին իր ժամանակակիցներին և հետագա սերունդներին ցույց տվեց, որ հայերը ծագում են Նոյի Հաբեթ որդուց, այսինքն՝ աստվածաշնչյան ազգ են: Դրանով իսկ Պատմահայրը

1. **Քերթողահայր** – բանաստեղծների, գրողների մեջ երևելին՝ ամենանշանավորը:

հայ ժողովրդին դասեց ժամանակի քաղաքակիրթ ազգերի շարքը՝ միաժամանակ չկտրելով նրան իր դարավոր արմատներից (Հայկ, Արամ, Արա): Հայոց անցյալը հերոսական շատ էջեր ուներ: Խորենացին ցանկանում էր, որ իր հայրենակիցները լավ իմանան իրենց ազգի փառավոր անցյալը, հպարտանան իրենց հերոսներով և շարունակեն նախնիների արժանավոր գործերը:

Մովսես Խորենացին մեծ **հայրենասեր** էր: Նրա համար ամենամեծ երջանկությունը **փառավոր, անկախ, հզոր հայրենիք** ունենալն էր: Իսկ **հայրենիքին ծառայելը, այն շենացնելը** մարդկային ամենամեծ առաքելությունն է: Նա իր մատյանով հենց սա էր ցանկանում ուսուցանել ապագա սերունդներին:

Մովսես Խորենացու կենսագրության մասին որոշ տեղեկություններ մեզ հասել են շնորհիվ նրա «Հայոց պատմության»: Այդ տեղեկություններից էլ իմանում ենք, որ Մովսես Խորենացին եղել է Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից և նրանց կողմից ուղարկվել Ալեքսանդրիա՝ ուսում ստանալու: Ալեքսանդրիայում ապագա Պատմահայրը սովորում է մի շարք գիտություններ: Փայլուն կրթությունը հնարավորություն է տալիս նրան դառնալու իր ժամանակի կրթված և բազմակողմանի զարգացած գործիչներից մեկը:

Հայրենասեր պատմիչը հասկանում էր, որ հայ ազգի գոյատևման համար անհրաժեշտ են միաբանություն, համերաշխություն, ազգասեր թագավորներ, աշխատասեր ու ստեղծագործ ժողովուրդ:

> ...Թեպետ մենք փոքր ածու[1] ենք և թվով շատ սահմանափակ և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր երկրումն էլ քաջության շատ գործեր կան գործված՝ գրելու և հիշատակելու արժանի...
>
> ***Մովսես Խորենացի***

1. **Ածու** – մարգ, տնկարան, փոխաբերաբար՝ փոքր երկիր, ժողովուրդ:

Խորենացու «Հայոց պատմությունը» այն մշակութային արժեքներից է, որոնք երբեք չեն հնանում:

Խորենացու մեջ կա ինչ-որ արտակարգ, զարմացնող և կախարդող մի բան... Խորենացին հետագա բոլոր սերունդներին մոտ հեղինակ է: Ըստ երևույթին դա պետք է բացատրել խորաթափանց մտքով ու բացառիկ ներքնատեսությամբ, որոնք օգնել են նրան իր պատմության մեջ՝ դարերի փորձի վրա ստեղծել հայ ժողովրդի պատմական բախտի փիլիսոփայությունը և կռահումներ անել ոչ միայն անցյալի, այլ նաև գալիքի մասին:

Հ. Թամրազյան

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս են անվանում Մովսես Խորենացուն:
2. Ո՞րն է Խորենացու «Հայոց պատմության» առանձնահատկությունը:
3. Ի՞նչ գիտեք Խորենացու կենսագրության մասին:
4. Ո՞րն էր Խորենացու երազանքը, ինչպիսի՞ն էր նա ցանկանում տեսնել մեր ազգին:
5. Դուք ինչպիսի՞ն կուզենայիք տեսնել Հայաստանը տասը տարի հետո:

ԴԱՍ 23
ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ԵՎ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Դավիթ Անհաղթ

Նախորդ դասերից մենք իմացանք, թե ինչ բարձր զարգացման ու ծաղկունքի հասավ հայ մշակույթը 5-րդ դարում:

Վերհիշեք 5-րդ դարի հայ պատմիչներին:

Այս ժամանակաշրջանում զարգացավ նաև գիտությունը, հատկապես փիլիսոփայությունը: 5-6-րդ դարերի հայ փիլիսոփայական մտքի մեծագույն ներկայացուցիչը Դավիթ Անհաղթն է: Նրա անունը նույնացվում է նաև «իմաստուն փիլիսոփա» հասկացության հետ: «Անհաղթ» պատվավոր անունը նա ստացել է հունական քաղաքներում փիլիսոփայական բանավեճերի ժամանակ տարած հաղթանակների համար:

Դավիթ Անհաղթի կենսագրության մասին շատ քիչ բան է հայտնի. գիտենք միայն, որ նա ապրել և ստեղծագործել է 5-րդ դարի վերջերին և 6-րդ դարի սկզբներին: Հայտնի է նաև, որ Անհաղթը եղել է Մաշտոցի կրտսեր աշակերտներից և ուսման ուղարկվել Հունաստան: Որպես տաղանդավոր փիլիսոփա՝ նա հայտնի էր ոչ միայն Հայոց աշխարհում, այլև նրա սահմաններից դուրս:

Հայ եկեղեցին Դավիթ Անհաղթին դասել է սրբերի շարքը:

Անանիա Շիրակացի

Անանիա Շիրակացին միջնադարյան հայ իրականության մեջ բնական գիտությունների ամենանշանավոր ներկայացուցիչն է: Նա ծնվել է 7-րդ դարի սկզբին Շիրակ գավառի Անի ավանում: Շիրակացու գիտական հայացքները ձևավորվել են Տրապիզոնում հույն գիտնական Տյուքիկոսի մոտ ուսանելու տարիներին: Վերադառնալով հայրենի

գավառ՝ Շիրակացին բացում է դպրոց և մանկավարժական աշխատանքին զուգահեռ զբաղվում գիտական գործունեությամբ: Շիրակացուց մեզ են հասել արժեքավոր աշխատանքներ՝ նվիրված մաթեմատիկային, աստղագիտությանը, օդերևութաբանությանը, պատմությանն ու աշխարհագրությանը:

Ականավոր գիտնականի ինքնատիպ թվաբանության դասագրքում, ինչպես ընդունված է եղել հայկական մատենագրության մեջ, թվանշանները տրվել են հայկական տառերով.

Ա – 1	Ժ – 10	Ճ – 100	Ռ – 1000
Բ – 2	Ի – 20	Մ – 200	Ս – 2000
Գ – 3	Լ – 30	Յ – 300	Վ – 3000
Դ – 4	Խ – 40	Ն – 400	Տ – 4000
Ե – 5	Ծ – 50	Շ – 500	Ր – 5000
Զ – 6	Կ – 60	Ո – 600	Ց – 6000
Է – 7	Հ – 70	Չ – 700	Ւ – 7000
Ը – 8	Ձ – 80	Պ – 800	Փ – 8000
Թ – 9	Ղ – 90	Ջ – 900	Ք – 9000

Եթե որևէ մեկը ծնված լինի 1997թ., ապա այդ տարեթիվը Շիրակացին կգրեր այսպես՝ ՌՋՂԷ: Նա հայկական մեծ թվականության սկիզբ համարում է 552 թվականը: Երբ դուք 6-րդ դարից հետո ստեղծված որևէ պատմական հուշարձանի վրա վերոնշյալ աղյուսակի տառերով փորձեք վերծանել դրա կառուցման թվականը, ապա պետք է տվյալ տարեթվին գումարեք 551:

Իր աշխատություններում Անանիա Շիրակացին անդրադարձել է Երկրի գնդաձևությանը, Լուսնի ու Արեգակի խավարումներին, օրացուցային հաշվումներին: Շիրակացուն է վերագրվում մի արժեքավոր աշխատություն՝ «Աշխարհացույցը», որն ավելի քան 1500 տարի առաջվա Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի մի շարք երկրների աշխարհագրության վերաբերյալ մեզ հասած եզակի ուսումնասիրություն է: «Աշխարհացույցի» ամենաինքնատիպ ու արժեքավոր բաժինը Հայաստանի 15 նահանգների (աշխարհների) նկարագրությունն է, որի համար հիմք է ծառայել Արշակունյաց ժամանակաշրջանի վարչական բաժանումը:

Վերհիշեք Արշակունյաց արքայատոհմի նշանավոր թագավորներին, նրանց գահակալության ժամանակաշրջանը:

Ամեն մի նահանգի մասին խոսելիս տրվում են նրա աշխարհագրական սահմանները, նահանգի նշանավոր լեռները, խոշոր գետերը, հանքային հարստությունները, բուսականությունը:

Անանիա Շիրակացու այս աշխատությունն իր արժեքը պահպանում է նաև մեր օրերում: «Աշխարհացույցի» միջոցով գիտնականները դեռ շարունակում են հստակեցնել մեր պատմական հայրենիքի առանձին հատվածների սահմանները, բնակավայրերի ճիշտ տեղադիրքը, բնական մի շարք օբյեկտների անվանումները և այլն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ տեղեկություններ են մեզ հայտնի Դավիթ Անհաղթի կենսագրությունից:
2. Ինչպե՞ս է բացատրվում «Անհաղթ» մականունը:
3. Ո՞վ է Անանիա Շիրակացին: Գիտության ո՞ր բնագավառներում է նա ուսումնասիրություններ կատարել:
4. Ո՞րն է Շիրակացու ամենանշանավոր աշխատությունը և ինչի՞ մասին է:
5. Գրե՛ք ձեր ծննդյան տարեթիվը ըստ Շիրակացու տառերի աղյուսակի:
6. Տառերով արտահայտե՛ք հետևյալ տարեթվերը՝ 885, 1045, 1722, 1991, 2014:
7. Ըստ հայկական մեծ թվականության՝ Անիի Մայր տաճարի կառուցումն ավարտվել է ՆԾ թվականին: Հաշվե՛ք, թե որ թվականն է դա ներկայիս թվականությամբ:
8. Ուսուցչի օգնությամբ փորձե՛ք պարզել, թե համաձայն «Աշխարհացույցի»՝ Հայաստանի որ նահանգի տարածքում է ձեր բնակավայրը:

Անանիա Շիրակացու մեդալ. Հայաստանի Հանրապետության պետական պարգև: Շնորհվում է տնտեսության, ճարտարագիտության, ճարտարվեստի, գիտության ու տեխնիկայի բնագավառներում ակնառու գործունեության, նշանակալի գյուտերի և հայտնագործությունների համար:

ԴԱՍ 24
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՆՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա:

Եղիշե Չարենց

Նախորդ դասերից մենք իմացանք, որ մաշտոցյան գրերի գյուտից և թարգմանական հզոր շարժումից հետո ձևավորվեց հայ ինքնուրույն գրականությունը: Մեր առաջին հեղինակները պատմիչներն են, որոնք գրքեր, մատյաններ գրեցին հայոց պատմության մասին: Արդեն գիտենք, որ Մովսես Խորենացին առաջինը գրեց հայ ազգի ամբողջական պատմությունը, իսկ Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Ղազար Փարպեցին և մյուսները գրեցին մեր ազգի պատմության որոշակի ժամանակահատվածներ ներկայացնող պատմություններ: Այդ բոլոր պատմությունները շատ արժեքավոր են, քանի որ ներկայացնում են մեր ժողովրդի անցյալը, հերոսական դրվագները, հաղթանակները, պարտությունները: Սակայն այդ պատմությունները արժեքավոր են նաև որպես գրական ստեղծագործություններ: Հենց դրանք էին այն ամուր հիմքը, որի վրա հետագայում կառուցվեց հայ գրականությունը:

Հայ գրականությունը հարուստ է, բազմազան ու հետաքրքրական: Յուրաքանչյուր հայ մարդ պետք է կարդա, սիրի և արժևորի երկար դարերի պատմություն ունեցող այդ գրականությունը:

Գրիգոր Նարեկացի

Հայ գրականության պատմության մեջ բացառիկ ու անկրկնելի երևույթ է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը: Նա ապրել է 10-րդ դարում Ռշտունյաց աշխարհի գողտրիկ ու գեղատեսիլ մի վայրում: Դա բնության մի հրաշալի անկյուն էր Վանա լճի հարավային ափի մոտ, Աղթամար և Առտեր կղզիների դիմաց, շրջապատված էր Մոկաց և Ռշտունյաց բարձրագագաթ

լեռներով: Հենց այդտեղ էր սպիտակ, սրբատաշ քարերով կառուցված Նարեկավանքը, որտեղ ապրել ու ստեղծագործել է Նարեկացին:

Քիչ հեռու կար ինը սենյակներով մի քարաժայռ, որը, ըստ ավանդության, համարվում է Նարեկացու աղոթատեղին:

Նարեկացին մեզ թողել է բազմաթիվ տաղեր, կրոնական բնույթի գործեր և մի հանճարեղ պոեմ, որի վերնագիրն է «Մատյան ողբերգության»: Այս պոեմը մեր ժողովուրդը սիրով անվանում է «Նարեկ»: Հայ ժողովուրդը մի առանձին սիրով է վերաբերվել «Նարեկին»: Այն համարվել է հրաշագործ գիրք, որը կարող է փրկել մարդու և՛ հոգին, և՛ մարմինը: «Նարեկը» համարվում էր փրկարար միջոց. դնում էին հիվանդի գլխի տակ, նրանից տարբեր հատվածներ կարդում և հավատում, որ հիվանդը կապաքինվի: Նարեկացին հավատում էր, որ յուրաքանչյուր մարդ, ով կկարդար իր մատյանը, կարող էր փրկության հույս ունենալ: Դեռևս իր ապրած ժամանակներից Նարեկացու անունն ու գործը սրբացվել են:

Սայաթ-Նովա

Տաղով եկավ,
Ափով գնաց Սայաթ-Նովան.
Երգով եկավ,
Վերքով գնաց Սայաթ-Նովան.
Սիրով եկավ,
Սրով գնաց Սայաթ-Նովան.
Սիրով մնաց Սայաթ-Նովան:

Հովհաննես Թումանյան

Հայ գրականության ինքնատիպ ու հանճարեղ անուններից է Սայաթ-Նովան: Նա սիրո և իմաստության երգիչ է, աշուղ-բանաստեղծ: Ծնվել է 1722թ., իսկական անունն է Հարություն Կարապետի Սայադյան: Սայաթ-Նովա աշուղական կեղծանունը պարսկերենից թարգմանած նշանակում է «երգի որսորդ»: Սայաթ-Նովան ինքն իրեն համարում էր «խալխի նոքար», այսինքն՝ ժողովրդի ծառա:

Դեռևս անհիշելի ժամանակներից ժողովուրդների մեջ մեծ սեր են վայելել իրենց սեփական երգ ու նվագով հանդես եկող երգիչները (աշուղները): Նրանք ոչ միայն գրում էին երգի բառերն ու երաժշտությունը, այլև իրենք էլ կատարում էին այդ երգերը որևէ երաժշտական գործիքի նվագակցությամբ: Սայաթ-Նովայի գործիքը քամանչան էր, որը նա գովերգում է իր խաղերից մեկում («Ամեն սազի մեջը գոված») և համարում լավագույնը բոլոր նվագարանների մեջ:

Աշուղների երգերի հիմնական թեման սերն է. սերը կնոջ նկատմամբ, սերը արդարության, ճշմարտության, բարու և գեղեցիկի նկատմամբ: Սայաթ-Նովայի ստեղծագործության հիմնական թեման նույնպես սերն է: Նրա ստեղծագործությունը հայ գրականության մնայուն արժեքներից է, անցած դարերը չեն կարողացել հնացնել այն:

Տիրամոր պատկերի առջև

Քուռը վշշոցով գլորում է իր պաղ ջրերը: Իսկ Օրթաճալայի այգիներում հարսանիք է անում նախշքար Սաքուլը՝ Սայաթ-Նովայի մտերիմն ու բարեկամը: Թիֆլիսի սիրուններից է հարսնացուն՝ Նաթելլան: Եվ Սաքուլը բախտավոր է իր հարսնացուով, և որ Սայաթ-Նովան է զարդարում իր հարսանեկան սեղանը: Դեռ լույսը չբացված՝ այգում սկսել են ուրախ բոցով վառվել խարույկները: Բարակ ծուխ է բարձրանում նրանցից՝ ցրելով խորովածի հոտը: Իսկ Քուռը վշշոցով գլորում է իր պաղ ջրերը: Երգիչն ինչ իմանա, որ ամբողջ Թիֆլիսն այսօր եկել է Օրթաճալա, բռնել հարևան այգիները՝ իրեն լսելու և երգը հազար բերանով թոցնելու քաղաք: Հիմա բազմաթիվ ճամփաներով Թիֆլիս են գալիս ոչ միայն ապրանքով բեռնված քարավանները, այլև փառքի տենչով

տարված և արդեն փառավորված երգասացներ, աշուղներ՝ իրենց մեծությունը Սայաթ-Նովայով ստուգելու համար: Երեք լեզվով և աստվածային շնորհներով հարուստ երգիչը իրեն խալխի նոքար է կոչում, և նրան նոքարանում են երգի արքաները:

Երգ էր տենչում, փառք՝ երբեք: Բայց փառքը կույր է և իր ոտքով եկավ ու գտավ նրան:

Մկրտիչ Սարգսյան

Հովհաննես Թումանյան

Հովհաննես Թումանյանը հայ ժողովրդի ազգային մեծ բանաստեղծն է: Ժողովուրդը նրան անվանում է «Ամենայն հայոց բանաստեղծ»: Նա ծնվել է 1869թ. Լոռու Դսեղ գյուղում: Թումանյանը գրել է բանաստեղծություններ, պոեմներ, զրույցներ ու հեքիաթներ, քառյակներ, պատմվածքներ, ակնարկներ և այլն:

Թումանյանը անսահման հարազատ է յուրաքանչյուր հայի: Քանի որ նա գրել է և՛ մեծերի, և՛ փոքրերի համար, նրա ստեղծագործությունները հայ մարդուն ուղեկցում են իր ամբողջ կյանքի ընթացքում:

Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում...
Տարիներ հետո նա պիտի դառնա
Մի ժողովրդի ազնիվ կենսագիր...

Պարույր Սևակ

Թումանյանը անսահման հայրենասեր մարդ և բանաստեղծ էր: Նա իրենն էր համարում հայրենիքի և՛ վիշտը, և՛ ուրախությունը:

Հայ անվանի գրող Ավետիք Իսահակյանը իր հուշերում պատմում է մի դրվագ Թումանյանի կյանքից: Նա ներկայացնում է իրենց այցելությունը Անի: «Մոտենում ենք Անիի հոյակապ պարիսպներին,– գրում է Իսահակյանը,– Օհաննեսը հուզված է, ոչինչ չի ասում, միայն արագացնում է քայլերը՝ հայացքը շարունակ

պարիսպներին: Նա հիացմունքով դիտում էր ամեն մի բեկոր՝ արվեստի կնիք կրող: Լուռ, մտասույզ թափառում էր՝ անցյալի հետ ներքին խոսակցությամբ տարված, կանգնում էր հրաշակերտ շենքերի առաջ, հայացքը լարած նայում էր սյուներին, կամարներին, քանդակներին, ապա աչքերը գոցում, կարծես մի երաժշտություն էր լսում՝ ոչ սովորական, ոչ այս աշխարհից:

....Երբ պարիսպներից դուրս էինք գալիս արդեն, Օհաննեսը վերջին անգամ նայեց Անիին և ասաց. «Ինչքան մարդ պիտի անբան-անասուն լինի, որ ձեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա: Մի՞թե այս գեղեցկությունը պիտի մեռնի առանց հետք թողնելու հայկական և ուրիշ ժողովուրդների արվեստի վրա»:

Եղիշե Չարենց

Եղիշե Չարենցը 20-րդ դարի հայ գրականության ամենամեծ անուններից է: Նրա ստեղծագործությամբ սկսվեց հայ գրականության նորագույն շրջանը: Եղիշե Չարենցը (Սողոմոնյան) ծնվել է 1897թ. Կարս քաղաքում: Նրա առաջին գիրքը լույս է տեսել, երբ բանաստեղծն ընդամենը 17 տարեկան էր: Չարենցի կյանքը շատ բարդ ու ողբերգական է եղել. նա ապրել է ընդամենը 40 տարի և թողել հարուստ գրական ժառանգություն: Եղիշե Չարենցի մեծ ժառանգության մեջ կա մի բանաստեղծություն, որը գիտե յուրաքանչյուր հայ մարդ: Դա «Ես իմ անուշ Հայաստանի…» տաղն է: Հայ մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանն այս բանաստեղծությունը համեմատում էր էպոսի հետ և համարում մեր ազգի կենսագրությունը: Իսկ Վիլյամ Սարոյանն այն համարում էր մինչև այժմ «...մեր երկրին, մեր հողին, մեր պատմությանը նվիրված ամենեն գեղեցիկ երգը» և համեմատում էր աղոթքի հետ:

Վիլյամ Սարոյան

Վիլյամ Սարոյանը ծնվել է 1908թ. ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում: Նրա ծնողները այնտեղ էին գաղթել Արևմտյան Հայաստանի Բիթլիս քաղաքից: Սարոյանը գրում էր անգլերեն: Նա մեծ թվով գրքերի հեղինակ է, շատ գրվածքներն էլ մնացել են չհրատարակված: Սարոյանը կարճ պատմվածքի և նորավեպի (նովել) մեծ վարպետ է, գրել է նաև թատերգություններ, վեպեր և վիպակներ: Նա համաշխարհային ճանաչում ունի: Չնայած գրում էր անգլերեն, նա իրեն ոչ միայն հայ էր համարում, այլև հայ գրող:



Թեև անգլիերեն կը գրեմ ու հակառակ անոր, որ ծնունդով ամերիկացի մըն եմ, ինքզինքս կը նկատեմ հայ գրող մը: Գործածած բառերս անգլիերեն են: Միջավայրը, որու մասին կը գրեմ, ամերիկյան է: Ոգին, որ կ՚ստիպե ինձ գրել, սակայն, հայ է: Ուրեմն հայ գրող մըն եմ: Խորապես կը սիրեմ հայ գրողներու մեծ ընտանիքին պատկանելու պատիվը:

Վիլյամ Սարոյան

Վիլյամ Սարոյանը օտարագիր, այսինքն՝ օտար լեզվով ստեղծագործող հայ գրող է: Օտարագիր հայ գրականության գոյությունը կապված է հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետ: Մենք արդեն գիտենք, թե ինչու էին հայերը հեռանում իրենց պատմական հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից: Ստիպված լինելով ապրել օտար ժողովուրդների ու ազգերի մեջ՝ հայերն աստիճանաբար ընդունում են նրանց սովորույթներն ու լեզուն: Նրանցից շատերը սկսեցին ստեղծագործել օտար լեզուներով: Հատկապես 20-րդ դարում հանդես եկան մի շարք հայ գրողներ, որոնք ապրում էին հայրենիքից դուրս և գրում էին օտար լեզուներով: Չնայած դրան՝ մենք նրանց հայ գրողներ ենք համարում, կարդում ենք նրանց ստեղծագործությունները և հպարտանում նրանցով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ ձևավորվեց հայ ազգային գրականությունը, ովքեր էին առաջին հայ հեղինակները:
2. Փորձեք նկարագրել Նարեկավանքը:
3. Նարեկացու ո՞ր ստեղծագործությունն է սրբացրել հայ ժողովուրդը և ինչո՞ւ:
4. Ինչ է Սայաթ-Նովայի իսկական անուն-ազգանունը, ինչ է նշանակում նրա աշուղական կեղծանունը:
5. Ինչ գիտեիք Սայաթ-Նովայի մասին մինչև դասը կարդալը և ինչ նոր բան իմացաք:
6. Երբ և որտեղ է ծնվել Հ. Թումանյանը:
7. Կարդացել եք Թումանյանի հեքիաթները. եթե կարող եք, թվարկեք դրանք և պատմեք որևէ մեկը:
8. Ինչ ապրումներ է ունենում Հ. Թումանյանը՝ տեսնելով Անիի ավերակները:
9. Ինչ գիտեք Ե. Չարենցի մասին:
10. Ինչ գիտեք օտարագիր հայ գրողների մասին:
11. Ինչո՞ւ ենք Վ. Սարոյանին անվանում հայ գրող. չէ՞ որ նա ստեղծագործել է անգլերեն:

ԴԱՍ 25
ՀԱՅ ԵՐԳԻ ՄԵԾԵՐԸ

Կոմիտաս

Ամեն անգամ, որ լսում եմ այս անունը, իմ առջև պատկերանում են մեր անզուգական լեռներն ու մաքուր աղբյուրները, նրանց պաղպաջուն ջրերը:

Այդ ջրերի պես հստակ ու պայծառ է Կոմիտասի երաժշտությունը, որի ակունքները հայ ժողովրդի հոգու խորքերում են:

Կոմիտասը մեր երաժշտության հոգևոր հայրն է:

Արամ Խաչատրյան



Կոմիտասի դիմանկարը. գործ՝ Եղիշե Թադևոսյանի

...1881 թվականն էր: Էջմիածնի Մայր տաճարի վեհարանում, կաթողիկոսի դիմաց, կանգնած է թախծոտ ու խելացի աչքերով մի տղա: Ասում են, որ նա որբ է, նրան բերել են թուրքական հեռավոր հայաշատ քաղաքից՝ Գևորգյան ճեմարան ընդունելու հույսով: Բայց... բոլոր հարցերին նա պատասխանում է թուրքերեն: Կաթողիկոսը չգիտե ինչ անել: Ամեն ինչ փոխվում է, երբ տղան սկսում է երգել: Նրա զրնգուն, հիասքանչ ձայնը ստիպում է բոլոր ներկաներին հուզվել: Կաթողիկոսի աչքերից արցունք է կաթում: Եվ տղան՝ Սողոմոն Սողոմոնյանը, դառնում է Էջմիածնի հոգևոր ճեմարանի սան: Դառնալով հոգևորական՝ Սողոմոնը ստանում է 7-րդ դարի բանաստեղծ ու երաժիշտ Կոմիտաս կաթողիկոսի անունը: Իսկ 1895թ. դառնում է վարդապետ և այնուհետև կոչվում Կոմիտաս վարդապետ:

Կոմիտասը՝ Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը, ծնվել է 1869թ. սեպտեմբերի 26-ին Օսմանյան կայսրության Կուտինա (Քյոթահիա) քաղաքում: Նրա նախնիներն այդ քաղաք էին եկել պատմական Հայաստանի Գողթն գավառից:

Հետաքրքրական է, որ ծագումով այդ նույն գավառից էին նաև հայ մեծ երգահան Արամ Խաչատրյանի նախնիները:

Կոմիտասի հայրը՝ Գևորգ Սողոմոնյանը, կոշկակար էր, միևնույն ժամանակ երգեր էր հորինում և օժտված էր գեղեցիկ ձայնով: Երաժշտական վառ ունակություններով աչքի էր ընկնում նաև մայրը:

Յոթ տարեկանում Կոմիտասն ընդունվեց տեղի չորսդասյա դպրոցը, որն ավարտելուց հետո հայրը նրան ուղարկեց ուսումը շարունակելու: Սակայն Կոմիտասին չհաջողվեց ուսումն ավարտել, և չորս ամիս անց նա տուն վերադարձավ բոլորովին որբացած. վախճանվել էր հայրը, իսկ Սողոմոնն ընդամենը 11 տարեկան էր....

Հայ երաժշտության պատմության մեջ Կոմիտասի վաստակն անգնահատելի է: Դա կարելի է համեմատել միայն Մեսրոպ Մաշտոցի գործի հետ: Եթե Մաշտոցի շնորհիվ հայ ժողովուրդն ունեցավ սեփական գիր ու գրականություն, ապա Կոմիտասի շնորհիվ վերագտավ իր սեփական երգն ու երաժշտությունը: Լինելով հանճարեղ արվեստագետ՝ նա կարողացավ ողջ աշխարհին ապացուցել, որ հայն ունի ինքնուրույն երաժշտություն: Եվ այդ երաժշտությունը մաքուր է ու զուլալ, ինչպես մեր լեռներից բխող աղբյուրներն ու գետերը, հստակ է ու շիտակ, ինչպես մեր լեռները:



Սարգիս Մուրադյանի՝ Կոմիտասին նվիրված նկարը («Անտունի», 1969թ.)

Կոմիտասի մեծագույն ծառայությունն այն էր, որ նա հավաքեց և ուսումնասիրեց շուրջ չորս հազար ժողովրդական երգ, խմբագրեց, մշակեց ու հղկեց դրանք և վերադարձրեց ժողովրդին: Լսելով «Ծիրանի ծառը», «Կռունկը», «Կալի երգը» և ժողովրդական այլ երգերի կոմիտասյան մշակումները՝ մենք կարող ենք պատկերացնել, թե ինչպիսի վարպետությամբ է դրանք կատարել Կոմիտասը:

Կոմիտասի աճյունը ամփոփված է Երևանում՝ նրա անունը կրող զբոսայգու պանթեոնում:

Կոմիտասի անունն են կրում նաև Երևանի պետական կոնսերվատորիան, մեր մայրաքաղաքի գլխավոր պողոտաներից մեկը, բազմաթիվ երաժշտական խմբեր հայրենիքում և սփյուռքում:

Արամ Խաչատրյան

Հայ մեծ երգահան Արամ Խաչատրյանը ծնվել է 1903թ. Թիֆլիսում: Նրա անունը հայտնի է ամբողջ աշխարհում: Խաչատրյանի ստեղծագործությունները ծանոթ են բոլոր ազգերին, դրանք հնչում են ռադիոյով, հեռուստատեսությամբ, կինոֆիլմերում: Դժվար թե գտնվի մեկը, որ չի լսել Խաչատրյանի «Սուսերով պարը» «Գայանե» բալետից: Ա. Խաչատրյանի երաժշտական ընդունակությունները նկատվել են շատ վաղ հասակում, սակայն նոտաները նա սովորել է 19 տարեկանում: Դա 1922 թվականն էր, երբ ապագա մեծ երաժիշտն ընդունվում է Մոսկվայի Գնեսինների անվան երաժշտական ուսումնարան (թավջութակի դասարան): Դրա հետ միաժամանակ նա սովորում է Մոսկվայի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում: Սակայն երաժշտությունն ավելի է գրավում Խաչատրյանին. նա շատ կարճ ժամանակում դառնում է ուսումնարանի լավագույն սաներից մեկը և հնա-

ռավորություն ստանում համերգներով հանդես գալու Մոսկվայի կոնսերվատորիայի դահլիճներում: Շուտով նա ընդունվում է Մոսկվայի պետական կոնսերվատորիա:

Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները արդեն համամարդկային արժեք են. նրա «Գայանե», «Սպարտակ» բալետները բեմադրվել և բեմադրվում են աշխարհի շատ երկրներում: Հայտնի են նաև կոմպոզիտորի սիմֆոնիաները, կոնցերտները և այլ երաժշտական ստեղծագործություններ: Խաչատրյանը բարձր էր գնահատում նաև երաժշտության դերը կինոյում: Նա գտնում էր, որ լավ երաժշտությունը նպաստում է ֆիլմի գաղափարի ամբողջական ընկալմանը: Հենց այս սկզբունքով էլ նա գրել է «Պեպո» և «Զանգեզուր» կինոնկարների երաժշտությունը:

Արամ Խաչատրյանը կենդանիներ շատ էր սիրում: Գերմանիայում նրան արքայական պուդել էին նվիրել, որի անունը Լյադո էր դրել (ըստ լյա և դո նոտաների): Կոմպոզիտորը հաճույքով էր զբոսնում Լյադոյի հետ: Վերջինիս հանդեպ տածած սիրո մասին է վկայում Խաչատրյանի «Լյադոն լուրջ հիվանդացել է» պիեսը՝ նվիրված շանը:

Արամ Խաչատրյանի վաստակը մեծ գնահատականի է արժանացել. նրա անունը կրում են Հայաստանի ֆիլհարմոնիայի մեծ դահլիճը, դաշնակահարների և կոմպոզիտորների ամենամյա մրցույթը: Նրա անունով փողոց կա Երևանում, իսկ արձանը կանգնեցված է Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի դիմաց:

Դրվագ Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետի բեմադրությունից

Շառլ Ազնավուր

Շառլը կդառնա հայ ժողովրդի պատիվը և Ֆրանսիայի փառքը:
Միսաք Մանուշյան

Վաղինակ Միքայելի Ազնավուրյանը ծնվել է 1924 թվականին Փարիզում: Նա ամբողջ աշխարհին հայտնի է որպես Շառլ Ազնավուր՝ ֆրանսիացի տաղանդավոր երգիչ, երգահան, բանաստեղծ ու դերասան: Այն մեծագույն փառքը, որն այսօր ունի հայազգի մեծ երգիչը, ձեռք է բերվել համառ աշխատանքի ու երկար տարիների տառապանքի միջոցով:

Ելույթս ունեցավ այն ավարտը, ինչ տենչում ու սպասում էի այդքան տարիների դժվարությունների, նվաստացումների ու բոլոր տեսակի թշնամիների միջով: Ինձ նորից ու նորից են կանչում: Ես կանգնած եմ՝ չիմանալով ինչ անել: Մինչ փառքի թևերը գրկում են ինձ, ժողովուրդն ինձ վերցնում է իր սրտի վրա, իսկ իմ սիրտը հալչում է հուզմունքից: Ես կանգնած եմ ծափերի տարափի տակ, անշարժ, շվարած, արցունքներն աչքերիս: Այո՛: Այդ երեկո ես նվաճեցի Փարիզը:

Շառլ Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուրի մասին» գրքից

Ամբողջ աշխարհին հայտնի է, որ Ազնավուրը հայ ժողովրդի զավակն է: Ճիշտ է, նա ծնվել, մեծացել, կրթություն ստացել ու որպես երգիչ կայացել է Ֆրանսիայում, սակայն մշտապես հպարտանում է, որ իրեն բախտ է վիճակվել լինելու հայ ժողովրդի զավակը: 1976 թվականին գրած «Նրանք ընկան» բանաստեղծության մեջ Ազնավուրը ողջ աշխարհին հայտնում է, որ ինքը հայ է. զավակն է այն ժողովրդի, որը դարձավ 1915թ. Մեծ եղեռնի զոհը: Բանաստեղծը համոզված է, որ անմեղ զոհերի հիշատակը միշտ պետք է վառ պահել, և ողբերգությունը երբեք չպիտի մոռացվի.

Անապատում խառնախոիվ ու
մոլորյալ հոտի նման,
Հուր ու սրից կոտորվեցին՝ ծարավ, սոված:
……
Նրանք ընկան՝ քաջեր դառնալ չհաացրին,
Առանց տարիք հարցնելու, մահը
կանգնեց նրանց շեմին,
Քանզի նրանց մեղքը մեկն էր՝
զավակներն էին Հայաստանի:

Ազնավուրը հայ ժողովրդի հետ էր նաև 1988թ. դաժան երկրաշարժի ժամանակ: Այդ օրերին նա գրեց «Քեզ համար, Հայաստան» ազդեցիկ երգը: Այն ասես սպեղանի լիներ մեծ ողբերգության մեջ հայտնված հայ ժողովրդի համար.

Եթե քո բախտն ես անգամ անիծում,
Քո աչքերի մեջ, Հայաստան երկիր,
Հույսի մի շող եմ ես ուզում տեսնել,
Ուզում եմ տեսնել ցանկություն, ձգտում,
Ճակատագիրդ ձեռքդ առնելու,
Ճակատագիրդ ամուր պահելու:

Շառլ Ազնավուրը իր ժողովրդի հետ է նրա և՛ տխրության, և՛ ուրախության պահերին: Հայ ժողովուրդն էլ իր հերթին իր անսահման սերը մեծ երգահանի նկատմամբ արտահայտել է նրա անունով կոչելով Երևանի հրապարակներից մեկը, արձանը կանգնեցնելով Գյումրիում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Համառոտ պատմեք Կոմիտասի կենսագրությունը:
2. Ինչ դեր է խաղացել Կոմիտասը հայ ժողովրդի կյանքում:
3. Ձեզ ծանոթ են Կոմիտասի երգերը: Եթե լսել եք որևէ մեկը, պատմեք ձեր տպավորությունների մասին:
4. Ո՞վ է Արամ Խաչատրյանը: Ինչ ստեղծագործություններ է նա գրել:
5. Ինչ գիտեք Ազնավուրի կենսագրության մասին:
6. Լսե՞լ եք Ազնավուրի երգերը. պատմեք այդ մասին:

ԴԱՍ 26
ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԽՈՇՈՐ ԴԵՄՔԵՐԸ

Եկած՝ օվկիանի անզուսպ ալիքներ,
Ծանրը հորձանքով զարկելով դեպ վեր,
Լեռնանում էին, գոռալով ահեղ,
Եվ մրրիկն ուժգին շընչում էր այնտեղ
Անեզր ու անվերջ
Տարածության մեջ:

«Կանգնեցե՛ք»,– գոչեց վրրձինը ձեռքին
Կախարդ ծերունին հուզված տարերքին.
Ու լուռ, հընազանդ հանճարի ձայնին,
Մութ ալիքները, փոթորկի ժամին,
Կրպակի վրա
Կանգնած են ահա:

Հովհաննես Թումանյան, «Այվազովսկու նկարի առջև»

Հովհաննես Այվազովսկի

Ղրիմի Թեոդոսիա քաղաքի հայկական տոհ-միկ ընտանիքում է ծնվել Հովհաննես Այվազովս-կին: Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան ավարտելուց հետո Այվազովսկին վերադարձավ իր հարազատ քաղաք: Մինչև կյանքի վերջը Այվազովսկին անդադար աշխատում էր և թողեց մոտ 6 հազար նկար: Դրանց մեծ մասում պատ-կերված է ծովը՝ փոթորկուն, խաղաղ, հազարավոր երանգներով:

Գրեթե ամեն տարի Այվազովսկու նկարները ցուցադրվում էին Ռուսաստանի, Եվրոպայի և Ամերիկայի խոշոր քաղաքներում կազմակերպվող ցուցահանդեսներում: Այվազովսկու անունը հռչակված է աշխարհով մեկ:

Այվազովսկին հայտնի է որպես ռուսական արվեստի ներկայա-ցուցիչ, բայց նա միաժամանակ հայ մարդ էր, որը երբեք չօտա-րացավ իր ժողովրդից: Հայկականությունը մեծ նկարչի համար ոչ միայն մայրենի լեզու էր, միջավայր, այլև ստեղծագործության անսպառ աղբյուր: Հայաստանի բնությունը պատկերող մի շարք գործեր («Արարատ», «Սևանա լիճ» և այլն) կարևոր դեր են ունեցել հայ բնանկարչության զարգացման համար: Հայրենասեր նկարիչը ցավով է արձագանքել 19-րդ դարի 90-ական թթ. հայկական կոտորածներին. իր վերաբերմունքը նա արտահայտել է մի շարք կտավներում:

Այվազովսկին Թեոդոսիա քաղաքի և Ղրիմի հայության հովանավորն էր: Նրա նախաձեռնությամբ Թեոդոսիայում բացվել են պատկերասրահ, թանգարան, գեղարվեստի դպրոց և մշակու-թային այլ հաստատություններ: Նկարչի տանը հյուրընկալվել և ելույթ են ունեցել հայ մեծ դերասան Պետրոս Ադամյանը, երգահան Ալեքսանդր Սպենդիարյանը և ուրիշներ:

Արշիլ Գորկի

Նյու Յորքի «Ուիթնի» պատկերասրահում է ցուցադրվում «Նկարիչն ու իր մայրը» հրաշալի նկարը: Նկարիչը Ոստանիկ Ադոյանն է, որն աշխարհին հայտնի է Արշիլ Գորկի կեղծանունով: Նա ծնվել է 1904 թ. Արևմտյան Հայաստանի Վան նահանգի Խոր-գոմ գյուղում, որը Հայոց ձոր գավառում էր, Վանա լիճ թափվող

Խոշաբ գետի հովտում: Հենց այդ տարածքում՝ Խոշաբի դաշտում է հազարամյակներ առաջ մեր նախահայր Հայկը հաղթել Բելին:

Շատ գեղեցիկ էր ապագա նկարչի ծննդավայրը: «Մեր գյուղը երփներանգ գույների մի ծաղկավան էր»,– գրում է իր մանկության տարիները Գորկու հետ անցկացրած նրա զարմիկ Ադո Ադոյանը և պատմում, որ ընկուզենու տերևներից թիթեռներ, կրիաներ կտրելը Ոստանիկի սիրած խաղն էր:

Արշիլ Գորկի,
«Նկարիչն ու իր մայրը»

1915 թվականը գլխիվայր շրջեց ամեն ինչ: Իր հազարավոր հայրենակիցների հետ պատանի Ոստանիկը անցնում է Արաքս գետը և հանգրվան գտնում Արևելյան Հայաստանում: Մի քանի տարի հետո նա հայտնվում է հեռավոր Ամերիկայում:

Տասնամյակներ շարունակ, մինչև իր կյանքի վերջը, Արշիլ Գորկին պահպանեց հայրենի երկրի պատկերները իր հիշողության մեջ:

«Ես մշտապես երազումս տեսնում եմ մեր հայրենիքը, և կարծես իմ մեջ բույն դրած մի հայկական ոգի շարժում է ձեռքս՝ մեր հայրենիքից հեռավոր մի վայրում ստեղծելու Խորգոմում մեր Ադոյան ընտանիքի պարտեզների, մեր սիրած բնության ուրվանկարները, մեր գեղեցիկ Հայաստանը...»: Այս տողերը քրոջն ուղղված Գորկու նամակներից են:

Արշիլ Գորկի, «Ինքնանկար»

Հայկական ոգին օգնեց Արշիլ Գորկուն՝ ուժ առնել, հաղթահարել բոլոր դժվարությունները և ստեղծել այնպիսի նկարներ, որոնք հասկանալի ու գրավիչ են բոլոր ազգերի մարդկանց: Արշիլ Գորկու անունը հայտնի է աշխարհով մեկ:

«Հայաստանի բնությունը անսպառ աղբյուր է: Բավական է վրձինդ թաթախես նրա մեջ, և վրձիններդ կպարեն գույների նվագից... Միթե զարմանալի

է, որ Հայաստանն այդքան շատ նկարիչներ է տվել: Ոչ, զարմանալի չէ: Զարմանալին այն է, որ նրանց չեն ճանաչում հայրենիքի սահմաններից դուրս»,– գրում է Գորկին իր նամակներում:

Մարտիրոս Սարյան



Մ. Սարյան, «Ինքնանկար»

20-րդ դարի հայ կերպարվեստը շատ նշանավոր դեմքեր է տվել: Նրանք ժողովրդական ճանաչում ու հարգանք են ունեցել հայրենի երկրում: Կան նկարիչներ, որոնց անունը ոչ պակաս հայտնի է եղել նաև հայրենիքից դուրս: Այդ նկարիչների մեջ իր առանձին տեղն ունի Մարտիրոս Սարյանը:

Մարտիրոս Սարյանը ծնվել է 1880թ. Նոր Նախիջևան քաղաքում: Այդ փոքրիկ քաղաքն այժմ Դոնի Ռոստով քաղաքի մի մասն է: Նորնախիջևանցիները ղրիմահայեր էին, որ դրանից 100 տարի առաջ վերաբնակվել էին այստեղ: Ղրիմի Թեոդոսիա քաղաքից էր, ինչպես հայտնի է, նաև Հովհաննես Այվազովսկին: Այնպես որ, Մարտիրոս Սարյանի պապերն էլ ղրիմահայեր էին:

Սովորելով Մոսկվայում և հաղորդակցվելով ժամանակի ռուս հայտնի նկարիչների հետ՝ Սարյանը կատարելագործում է իր վարպետությունը: Շուտով երիտասարդ նկարչի աշխատանքները տեղ են գտնում Մոսկվայում, Պետերբուրգում, Փարիզում, Նյու Յորքում և այլ քաղաքներում կազմակերպված ցուցահանդեսներում: Առաջին անգամ Սարյանը Հայաստան եկավ 1901թ., երբ արդեն 21 տարեկան էր:

Ձյունագագաթ, փայլատակող լեռներ, պողպատյա ժայռեր, արագահոս գետերով ձորեր և խորխորատներ, կանաչազարդ բլուրներ, որոնք մեկը մյուսի հետևից շարժվում են դեպի լեռնապարերը և հալվում երկնքի կաթնավունի մեջ:

Հայրենիքի թողած այս տպավորությունները այնքան ուժեղ էին, որ երիտասարդ նկարչին ստիպեցին խոստովանել՝ ուսման տարիներին ստացած գիտելիքները շատ քիչ են: «Պետք է ունենալ սեփական լեզուն,– մտորում էր Սարյանը,– ներքին մղումը ինձ

հանգիստ չէր տալիս, ստիպում էր փնտրել. քիչ է ասել՝ փնտրել, այլ գտնել, անպայման գտնել: Այդ մեծ ճանապարհին ամենից կարևոր ուղենիշն ու կռվանը, իհարկե, իմ Հայաստանն էր»:

Այնուհետև Մարտիրոս Սարյանը բազմիցս այցելեց Հայաստան, իսկ 1921թ. վերջնականապես հաստատվեց հայրենիքում: Սարյանին, Թամանյանին և նշանավոր այլ մտավորականների հայրենիք էր հրավիրել Խորհրդային Հայաստանի ղեկավար Ալեքսանդր Մյասնիկյանը: Մարտիրոս Սարյանը դրանից հետո ստեղծագործեց ևս հինգ տասնամյակ, արդեն հայրենի հողի վրա: Այդ ընթացքում նա ստեղծեց հազարավոր նկարներ:

Մ. Սարյան, «Հայաստան»

Սարյանի գեղանկարչությունը հայտնի է ողջ աշխարհում: Նա դարձավ նորագույն ժամանակների հայ մշակույթի խորհրդանիշը, ինչպես Արամ Խաչատրյանը՝ երաժշտության մեջ, իսկ Տիգրան Պետրոսյանը՝ շախմատային արվեստում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ գիտեք Այվազովսկու մասին.
   – որտեղ է ծնվել,
   – որտեղ է սովորել,
   – ինչ թեմաներով է նկարել:
2. Ո՞րն է Արշիլ Գորկու ծննդավայրը և ինչ դեր ունեցավ նկարչի ստեղծագործական կյանքում:
3. Դիտելով Սարյանի նկարները կարող եք ասել, թե որ գույներն են գերիշխում:
4. Ինչ ընդհանրություններ եք տեսնում երեք հայ նկարիչների կենսագրության մեջ, ինչ դեր է խաղացել հայրենիքի պատկերը նրանց ստեղծագործություններում:

ԴԱՍ 27
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հայկական վիշապագորգ

Հայաստանը հարուստ և հին մշակույթ ունի: Սովորաբար դա ասելով մենք հասկանում ենք ճարտարապետական հուշարձանները, եկեղեցիներն ու խաչքարերը, մանրանկարչությամբ զարդարված ձեռագիր մատյանները: Այդ ամենն, իհարկե, հայ մշակույթի անբաժան մասն է և մեր հպարտության առարկան: Ազգային մշակույթի մաս կարող է կազմել նաև այն, ինչ շրջապատում է մարդուն նրա առօրյա կյանքում: Դա կարող է լինել մի կավե սափոր, երկաթյա մոմակալ և, վերջապես, գեղեցիկ մի գորգ, որի վրա հետաքրքրական նախշեր կան:

Այդ բոլորը ստեղծել են իրենց գործի վարպետ-արհեստավորները՝ դարբինը, բրուտը, գորգագործը և ուրիշներ: Ի տարբերություն հայտնի նկարիչների, քանդակագործների, երաժիշտների՝ ժողովրդական վարպետների անունները քիչ են հայտնի, բայց դա չի նշանակում, թե նրանց ստեղծածը պակաս արժեքավոր է: Պատահական չէ, որ իր գործը լավ իմացողին անվանում են **վարպետ**, ինչպես ժողովուրդն է կոչել իր մեծանուն զավակներին՝ Մարտիրոս Սարյանին, Ավետիք Իսահակյանին, ուրիշ մեծերի: Ժողովրդական վարպետները նույնպես ստեղծագործողներ են և իրենց աշխատանքով պահպանում ու զարգացնում են այն, ինչը մեկ ընդհանուր անունով կոչում են **ժողովրդական մշակույթ**:

Գորգագործություն

Գորգագործությունն ու կարպետագործությունը արհեստի տարածված և կարևոր ճյուղերից են: Կարպետը օգտագործվել է որպես փռոց, ծածկոց, վարագույր: Կարպետն ու գորգը տաք են պահել և զարդարել բնակարանը: Միջին դարերում հայ առևտրականները տարբեր երկրներ են արտահանել բազմատեսակ կարպետներ և գորգեր: Հայերեն «կարպետ» բառը, և՛ *գորգ*, և՛

կարպետ իմաստով, ժամանակի ընթացքում անցել է անգլերենին, սերբերենին և եվրոպական այլ լեզուների: 13-րդ դարի իտալացի ճանապարհորդ Մարկո Պոլոն եղել է Հայաստանում: Իր ուղեգրություններում խոսելով հայերի մասին՝ նշանավոր ճանապարհորդը գրում է. «Նրանք հյուսում են աշխարհի ամենագեղեցիկ գորգերը»: Հետագա ժամանակներում էլ հայկական գորգերը մեծ համբավ ունեին:

Գորգագործը դազգահի մոտ

Գորգերը մշտապես երիտասարդ մնալու մի զարմանալի հատկություն ունեն. մեկ անգամ ստեղծվելով՝ նրանց զարդանախշերը չեն մոռացվում, այլ, շարունակ ընդօրինակվելով, փոխանցվում են սերնդից սերունդ: Հայկական զարդանախշերը ժողովրդական հնագույն պատկերացումներ են արտահայտում: Ուշադիր դիտողի համար բացվում է զարդերի լեզվով ներկայացվող առասպելների ու հեքիաթների աշխարհը: Այդպիսին են, օրինակ, «վիշապագորգերը», որոնց վրա ոչ միայն ոլոր-մոլոր վիշապներ են պատկերված, այլև կայծակներ, «չար ուժերին» զսպելու պատրաստ արծիվներ, ցուլեր, առյուծներ:

Հայկական գորգերը նշանավոր էին նաև իրենց սքանչելի գույների շնորհիվ: Այդ գույները ստացվել են տարբեր ծառերի կեղևներից ու տերևներից, բույսերի արմատներից ու ծաղիկներից և այլ բնական նյութերից: Ամենաարժեքավոր գունանյութը որդան կարմիր կոչվող ներկն էր: Ժամանակակից գորգագործները շարունակում են հայ գորգարվեստի տոհմիկ ավանդույթները:

Որդան կարմիր

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագիր մատյանների էջերին վառ կարմիր գույնի շատ գեղեցիկ մանրանկարներ կան: Դրանց գույներն այնքան պայծառ են, որ թվում է, թե նկարվել են հենց վերջերս, այլ ոչ թե դարեր առաջ: Այդ նկարների համար օգտա-

գործված ներկը ստացել են փոքրիկ միջատից, որը հայտնի է հայկական որդան կարմիր անունով և տարածված է եղել Արարատյան դաշտում:

Հայկական որդան կարմիրը համարվել է աշխարհի ամենագեղեցիկ ներկերից մեկը: Կոչվել է «արքայական ծիրանի», քանի որ դրանով էին ներկում արքայական հանդերձները: Այս ներկով է դրվել «կարմիր թանաքով» ստորագրությունը, որն արքաների և կաթողիկոսների մենաշնորհն էր: Որդան կարմրից պատրաստում էին նաև դեղամիջոցներ:

Միջատը, որից ստանում են որդան կարմիր ներկը

Որդան կարմրի ներկատներ են եղել Արտաշատ ու Դվին քաղաքներում: 13-րդ դարից որդան կարմիր ներկի արդյունահանումը նվազում է, ապա՝ դադարում: Հետագայում միջատից ներկ ստանալու եղանակները մոռացվում են: Այժմ փորձեր են արվում վերականգնելու դրանք: Գաղտնիքը, սակայն, դեռևս լրիվ վերծանված չէ:

Մեզ լավ ծանոթ է Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթը: Հեքիաթում հասարակ նախարապանի աղջիկը՝ Անահիտը, թագավորի տղայի հետ ամուսնանալուց առաջ որևէ արհեստ սովորելու պայման է դնում: Հեքիաթը մեզ այդպիսով ասում է՝ պետք է հարգալից վերաբերվել արհեստին, քանի որ այն միշտ անհրաժեշտ է:

Դարբնի և բրուտի (խեցեգործի), որմնադրի և փայտագործի (հյուսնի) արհեստները հնուց ի վեր հայտնի են: Դարբինը արոր ու գութան է պատրաստել շինականի համար, նաև զենք է կռել ու կոփել զինվորի համար, որպեսզի նա կարողանա պաշտպանել հայրենի հողը: Իսկ բրուտը կավե ամաններ է պատրաստել, որոնց մեջ մարդիկ կերակուր են եփել, հողագործն իր ցորենն է մշակել, գինեգործն իր պատրաստած գինին է պահել, որ տոնական օրերին և այլ առիթներով դրվում էր սեղանին:

Գինեգործություն

Գինեգործությունը հնուց ի վեր տարածված է եղել Հայաստանում: Հայ և օտարազգի շատ հեղինակներ Հայաստանը համարել են անուշահոտ, սքանչելի գինիների երկիր: Հայկական գինեգործության հնամյա ավանդույթների մասին են վկայում պատմիչների տեղեկությունները, ինչպես նաև՝ խաչքարերի և այլ ճարտարապետական հուշարձանների քանդակներն ու արձանագրությունները, տարբեր հնավայրերում հայտնաբերված հնձանները:

Գինի ստանում են խաղողից, նաև՝ պտուղներից ու հատապտուղներից: Գինեգործության հիման վրա հետագայում առաջ է եկել օղու և կոնյակի արտադրությունը:

Գինուն նվիրված բազմաթիվ քառյակներ ու բանաստեղծություններ են ստեղծվել հայկական, պարսկական, արաբական և այլ ժողովուրդների գրականության մեջ:

Որոշ դեպքերում գինի խմելը ոչ սովորական, խորհրդանշական իմաստ է ունենում: Օրինակ՝ պատարագի արարողության ժամանակ ներկաները քահանայի ձեռքից գինու մեջ թաթախված հաց են ընդունում: Կամ՝ եկեղեցում պսակադրության ուխտ կատարելիս նորապսակները միևնույն բաժակից գինի են խմում:

Չնայած դրան՝ գինու չարաշահումը, մշտապես գինովցած լինելը հայերի, ինչպես և այլ ժողովուրդների մեջ ամոթալի, պարսավանքի արժանի սովորություն է համարվել:

Տոնական սեղանին գինու հետ տարբեր ուտելիքներ են դրվում: Որո՞նք են ձեր սիրելի ճաշատեսակները: Ի՞նչ ուտելիքներ եք նախընտրում սովորական և ոչ սովորական, տոնական օրերին: Ուրիշ ի՞նչ հայկական կերակրատեսակներ գիտեք:

Տետրում առանձին այունակներով գրեք հարցերի պատասխանները: Առաջադրանքը կատարելիս խորհրդակցեք մայրիկի, տատիկի և ընտանիքի մյուս անդամների հետ: Հնարավորության դեպքում օգտվեք լրացուցիչ այլ տեղեկատու աղբյուրներից:

Ոսկերչություն, արծաթագործություն, տարազ

Սովորաբար մարդիկ հարսանիք գնալիս կամ որևէ այլ արարողության մասնակցելիս զարդարվում են, իրենց տոնական հագուստի հետ կրում այդ հագուստին հարմար զարդեր: Հագուստը և զարդերը (մատանի, ապարանջան, վզնոց և այլն) տարազի մաս են:

Զարդերը կարող են տարբեր նյութերից պատրաստված լինել, բայց ընդունված է դրանք ավելի հաճախ ոսկուց և արծաթից պատրաստել: Ոսկերչությունն ու արծաթագործությունը կարևոր, տարածված արհեստներ են: Թանկարժեք, գեղեցիկ, բոլորի ուշադրությունը գրավող զարդեր շատերն են ցանկանում ունենալ:



Արծաթյա վզնոց, 19-րդ դար

Ոսկերիչներն ու արծաթագործները միայն զարդեր ու հարդարանքի իրեր չեն պատրաստում: Գեղեցիկ իրերով զարդարում են նաև տները, եկեղեցիներն ու այլ շենքեր, անցյալում՝ արքայական ու իշխանական պալատները:

Անցյալի հայ ոսկերչության լավագույն նմուշները մենք կարող ենք տեսնել Հայաստանի թանգարաններում:

Ոչ միայն ոսկերչական իրերը, այլև խեցեղենը, գործվածքեղենը, գորգերը և մարդու առօրյա կյանքում օգտագործվող, նրա

կենցաղը հարմար և գեղեցիկ դարձնող իրերը նաև արվեստի բարձրարժեք նմուշներ կարող են լինել: Այդ պատճառով ժողովրդական մշակույթի այդ մասը **կիրառական արվեստ** է կոչվում:

Այսօր էլ թանգարաններում, տարբեր ցուցասրահներում, բնակարաններում, նաև պուրակներում ու զբոսայգիներում կարելի է տեսնել կավից, մետաղից, փայտից պատրաստված այդպիսի իրեր: Դրանք գուցե չեն օգտագործվում իրենց նախկին նշանակությամբ, բայց շարունակում են հիացնել մարդկանց:

Հայ մշակույթի շատ տարբեր միջազգային ճանաչում են ստացել՝ դառնալով մարդկության ընդհանուր մշակութային հարստության մի մասը: Այսպես, 2012 թվականին «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ժառանգության ցանկում: Դրանից առաջ այդ ցանկում ընդգրկվել են դուդուկը և խաչքարային արվեստը:

Աշխարհի ամենահին կոշիկը

2008 թվականի սեպտեմբերին Հայաստանի Վայոց ձորի մարզում, Արենի գյուղից արևմուտք, Արփա գետի ձախ ափին գտնվող քարայրում հնագետները կոշիկ են հայտնաբերել՝ զարմանալիորեն լավ պահպանված վիճակում: Հայտնաբերված կոշիկը 1000 տարով ավելի հին է, քան եգիպտական բուրգերը, և

շուրջ 400 տարով ավելի հին, քան Քարահունջը: Այսպիսով, 5500 տարվա պատմություն ունեցող կոշիկը աշխարհի ամենահին կաշվե ոտնամանն է:

Կոշիկի փոքր չափսից ենթադրվում է, որ կանացի է, թեև, գիտնականների հավաստմամբ, այդ դարաշրջանում փոքր չափսի ոտնաման կարող էր կրել նաև արական սեռի ներկայացուցիչը:



Ոտնամանի լավ պահպանմանը նպաստել են սառը եւ չոր եղանակային պայմանները: Բացի դրանից՝ քարանձավի հատակը պատված է եղել ոչխարի կաշվով ու գոմաղբի հաստ շերտով, ինչը նույնպես պաշտպանիչ դեր է կատարել:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ւմ է ժողովուրդը անվանում վարպետ:
2. Ժողովրդական ո՞ր վարպետին են անվանում բրուտ:
3. Բնակարանը զարդարելուց բացի՝ ուրիշ ի՞նչ կիրառական նշանակություն են ունեցել կարպետն ու գորգը:
4. Զարդերից բացի՝ ինչե՞ր էին պատրաստում ոսկերիչներն ու արծաթագործները:

Հայկական տարազի քարտեզ

ԴԱՍ 28
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայ մշակույթի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի ճարտարապետությունը: Հայաստանը հաճախ են անվանում բացօթյա թանգարան, որտեղ ամենուրեք կարելի է տեսնել տարբեր դարերում ստեղծված ճարտարապետական հուշարձաններ:

Միջնադարյան ճարտարապետական կառույցները վկայում են, որ դրանք կառուցել են մեծ փորձ և հմտություն ունեցող բարձրակարգ վարպետներ: Այս կամ այն կառույցի վրա աշխատող վարպետների ղեկավարը ճարտարապետն էր: Նա ոչ միայն անմիջականորեն վերահսկում էր շինարարական աշխատանքը, այլև պետք է կազմեր կառույցի կարևոր հատվածների մանրակերտը: Ճարտարապետի ցուցումով էր տեղադրվում ամեն մի հանգույց, ամեն մի զարդանախշ:

Իսկ ովքե՞ր են կառուցել այս կամ այն կոթողը, ի՞նչ է մեզ հայտնի Հռիփսիմեն ու Զվարթնոցը, Աղթամարն ու Անիի տաճարները կառուցող ճարտարապետների և շինարար-վարպետների մասին: Իրենց մատյաններում հայ պատմիչները, ցավոք, քիչ տեղեկություններ են հաղորդում այդ հրաշալի կառույցները ստեղծած վարպետների մասին: Ընդամենը մի քանի տասնյակ անուններ են մեզ հասել: Միջնադարի հայ նշանավոր ճարտարապետներ էին Մանուելը, Տրդատը, Մոմիկը և ուրիշներ:

Մանուել, Տրդատ, Մոմիկ

Մանուելը Վասպուրականի Արծրունյաց թագավորական տան գլխավոր ճարտարապետ-քանդակագործն էր: 10-րդ դարի սկզբին, Գագիկ Արծրունի թագավորի օրոք, Ոստան և Աղթամար

քաղաքներում նա կառուցում է նավահանգիստներ և պալատներ, տաճարներ ու զբոսավայրեր: Ոստան քաղաքում նա հիմնադրում է մի շքեղ պալատ, որն ուներ ընդարձակ, նկարազարդ և լուսավոր դահլիճներ, բազմաթիվ սենյակներ, որոնցից հիանալի տեսարաններ էին բացվում դեպի հեռավոր հորիզոնն ու լիճը: Մի ընդարձակ պալատ էլ Մանուելը կառուցում է Աղթամարում:

Ոստան քաղաքի պալատը

Ամրոցի գագաթը ծովահայաց է և շատ վայելուչ: Երբ հողմերից հուզված ալեկոծվում է ծովը, նրա ծաղկաձև ալիքները հաճելի և վայելուչ են երևում, իսկ երբ օդը հստակ է լինում, գրավում է բոլորին՝ իր ծավալումը տեսնելու համար: Որի պատճառով և թագավորը ձեռնարկում է նրա մեջ կառուցել ապարանքներ, սենյակներ և փողոցներ հրաշալի, պատկերավոր և տեսակ-տեսակ հորինվածքով, որը չեմ կարող պատմել: Պարսպում է նաև ծովակողմը զորավոր վեմերով, հիմքերը դնելով անհնարին խորության մեջ, իսկ պարսպի վերևում, ծովի առջև շինում է մի ճեմադահլիճ՝ զարդարված ոսկեզարդ և պես-պես ներկերով, հույժ լուսավոր: Կազմում է կամարաձև, օդաբեր, զովացնող դռներ, միաժամանակ նաև շողարձակ լուսամուտներ, որոնք արեգակի ծագման և մայրամուտի պահերին փայլատակելով ծովի վրա, դահլիճի սրտի մեջ են գցում իրենց շողերը, և պես-պես գույներով շրջշրջելով դրոշմված պատկերներն ու զանազան հորինվածքները, ապշեցնում են դիտողներին:

Մնանուն Արծրունի

Պալատից քիչ հեռու Սուրբ Խաչ հրաշալի եկեղեցին էր, որը կանգուն է մնացել մինչև մեր օրերը: Տաճարի պատերը քանդակված են հրաշալի զարդանախշերով:

Աղթամարի տաճարի կառուցումից տասնամյակներ անց Հայաստանի հյուսիսում՝ Բագրատունյաց Անի մայրաքաղաքում,

հռչակվեց մեկ ուրիշ մեծ վարպետի՝ Տրդատ ճարտարապետի անունը: Տրդատի անունը հայտնի էր ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս:

Սուրբ Սոֆիայի տաճարի գմբեթը

Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի տաճարի գմբեթը երկրաշարժից փլվել էր: Վիթխարի, ավելի քան 31 մետր տրամագիծ ունեցող գմբեթը վերականգնելու դժվարին և պատվաբեր գործը հանձնարարվեց Տրդատին: Այսօր դժվար է ասել, թե ինչպիսի միջոցներ, շինարարական տեխնիկայի ինչ հնարներ կիրառեց Տրդատը գմբեթը վերականգնելիս, բայց մի բան հաստատ է. արդեն հազար տարի տաճարի գմբեթը կանգուն է՝ դիմանալով բոլոր փորձություններին:

Անիի Մայր տաճարը

1001թ. Տրդատն ավարտեց Անիի Մայր տաճարի կառուցումը: Այնուհետև նա ձեռնամուխ եղավ զվարթնոցատիպ Սուրբ Գրիգոր կամ Գագկաշեն տաճարի կառուցմանն Անիում: Մայրաքաղաքի այդ նշանավոր տաճարը նման էր Զվարթնոցին, բայց նույնությամբ չէր կրկնում:

Տրդատի ստեղծագործությունն իր որոշակի ազդեցությունն ունեցավ հայ ճարտարապետական արվեստի հետագա զարգացման վրա:

13-14-րդ դդ. հայ ճարտարապետության նշանավոր դեմքերից է Մոմիկը: Նա Սյունյաց Օրբելյան իշխանական տան ճարտարապետն էր: Մոմիկը միաժամանակ նաև քանդակագործ էր և նկարիչ: Մոմիկի ուշագրավ գործերից են Օրբելյանների ամառային

Խաչքար.
գործ՝ Մոմիկի

նստավայրում՝ Եղեգիսում կառուցված Զորաց եկեղեցին, Նորավանքի երկհարկ դամբարան-եկեղեցին, ինքնատիպ խաչքարեր և մանրանկարներ: Իր վերակառուցած Նորավանքում Մոմիկի հիշատակը հավերժացնող մի համեստ խաչքար կա՝ կանգնեցված նրա աշակերտների կողմից:

Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի շենքը Երևանում

Ալեքսանդր Թամանյան

Բոլորին է հայտնի այս հրաշալի կառույցը Երևանի կենտրոնում: Այդ շենքից քիչ հեռու մի գողտրիկ փողոց-զբոսայգի կա, որ կրում է մեծ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի անունը: Այդ ոչ մեծ փողոցում էլ կանգնած է նրա բազալտե հուշարձանը: Արձանը նման չէ մյուսներին. կարծես մի քիչ կռացած լինի, խորասուզված իր գծագրերի մեջ: Իսկ գծագրերը շատ-շատ էին: Օպերայի շենքից բացի՝ Թաման-

Ալեքսանդր Թամանյանի արձանը Երևանում

յանի նախագծով են կառուցվել նաև Կառավարական տունը Հանրապետության հրապարակում և բազմաթիվ այլ շենքեր:

Թամանյանի թերևս ամենակարևոր գործը Երևանի գլխավոր հատակագծի կազմումն էր: Հատակագծի մտահղացումը շատ պարզ է և միաժամանակ ինքնատիպ: Եթե Հաղթանակի զբոսայգու բարձունքից նայենք Երևանի կենտրոնին, նրա պողոտաների դասավորությանը, մեզ կթվա, թե մենք թատրոնում ենք, հանդիսատեսները այդ փողոցներն ու հրապարակներն են, իսկ բեմում վեհորեն բազմած է հայոց սրբազան լեռը՝ Մասիսը:

Մինչև իր կյանքի վերջը Թամանյանն անընդհատ անդրադառնում էր քաղաքի գլխավոր հատակագծին, լրամշակում, բայց այդպես էլ ավարտին չհասցրեց: Դժվար էր հասնել քաղաքի արագ զարգացման ընթացքին:

Թամանյանի մասին

Նա մեր աչքերը բացեց, նա ուղի ցույց տվեց՝ լայն, մեծ, իսկական: Իհարկե, Կառավարական տունը, օպերայի թատրոնը հոյակապ կառույցներ են, բայց հարցը դա չէ, այլ այն, որ նա մեր քարերին ստիպեց խոսել հայերեն, ինչպես եղել է դարեր առաջ: Մի շենք է կառուցել, թե տասը, նշանակություն չունի: Նա քաղաք ստեղծեց: Երևանը նրա անվան հետ է կապված:

Ռաֆայել Իսրայելյան

Թամանյանը ստեղծեց հայ ճարտարապետության նոր դպրոց, այսինքն՝ համախոհների խումբ, որը պատրաստ էր շարունակել ճարտարապետական արվեստի թամանյանական ավանդույթները: Այդ ավանդույթների իսկական ժառանգորդն ու զարգացնողներից մեկը Ռաֆայել Իսրայելյանն էր:

Ռաֆայել Իսրայելյան

Ռաֆայել Իսրայելյանի ինքնատիպ ստեղծագործությամբ կարծես միավորվեցին շինարարական տեխնիկայի ժամանակակից նվաճումներն ու հայ ճարտարապետության հազարամյա ավանդույթները: Դրանում համոզվելու համար մենք պարզապես պետք է ուշադիր դիտենք Հրազդանի ձորափին կառուցված Արարատ գինու կոմբինատի մառանները: Դրանք հեռվից բերդապարսպի տպավորություն են թողնում և այնպիսի ներդաշնակությամբ են միաձուլվում տեղանքին, որ կարծես բնության ստեղծագործություն լինեն: Շրջապատի հետ նույնպիսի ներդաշնակություն ունի նաև Հրազդան գետի վրա կառուցված ջրատար կամուրջը:



Ռաֆայել Իսրայելյանը բազմաթիվ փոքր ու մեծ ստեղծագործությունների հեղինակ է: 1942թ. Էջմիածնի Փարաքար գյուղի համար նախագծելով աղբյուր-հուշարձան՝ նա փաստորեն սկիզբ դրեց զոհվածների հիշատակին աղբյուր-հուշարձաններ կառուցելու ազգային գեղեցիկ ավանդույթի վերականգնմանը:

Ռաֆայել Իսրայելյանը ստեղծել է փոքր ու մեծ ծավալի շատ գործեր: Ճարտարապետի մեծածավալ գործերի մեջ առանձնանում են Հաղթանակի զբոսայգում կանգնեցված Մայր Հայաստան հուշարձանի պատվանդանը, որը միաժամանակ նաև թանգարանի շենք է, և, իհարկե, Սարդարապատի հուշահամալիրը: Հուշահամալիրի ամենամեծ կառույցը ազգագրության թանգարանի շենքն է: Շենքի տանիքը կառուցված է անցյալի մեր ժողովրդական բնակելի տների նմանությամբ. այսինքն՝ լուսավորվում է բնական լույսով: Թանգարանի շենքի արտաքին պատերը փակ են, բայց երկու տեղում

դրանք նեղլիկ պատուհաններ ունեն: Այդ պատուհաններից մեկը նայում է Արագածին, մյուսը՝ Արարատին:

Սարդարապատից բացի՝ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով կառուցվել են նաև Մուսա լեռան, Հաճընի, Ապարանի հերոսամարտերին նվիրված հուշարձանները և տասնյակ այլ կառույցներ:

Ռաֆայել Իսրայելյանը ամբողջական խառնվածք էր: Ինչ էլ որ անում էր, անում էր ներքին մղումով, համոզված... Հոգեկան այն կապը, որ ուներ հայրենի երկրի, նրա պատմության, հոգևոր գանձերի նկատմամբ, բացառիկ ուժի էր հասնում: Թղթի մի կտորի վրա նախշ նկարեր, թե հսկայական մի շենք կառուցեր, գինու մի գավ պատրաստեր, թե մոնումենտ կառուցեր, նպատակը նույնն էր՝ հաստատել մեր ժողովրդի հոգեկան բարձր կերտվածքը:

Ռուբեն Զարյան

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ դեր ուներ ճարտարապետը միջնադարյան կառույցների ստեղծման աշխատանքում:
2. Միջնադարի ինչ նշանավոր հայ ճարտարապետների գիտեք: Համառոտ պատմեք նրանց գործերի մասին:
3. Նշանավոր ինչ կառույցներ է նախագծել Ալեքսանդր Թամանյանը: Ո՞րն է, ձեր կարծիքով, նրա ամենագլխավոր գործը:
4. Թվարկեք Ռաֆայել Իսրայելյանի մի քանի ստեղծագործություն: Ինքներդ տեսել եք դրանցից որևէ մեկը: Պատմեք այդ մասին:

ԴԱՍ 29
ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ

Իր պատմության ընթացքում Հայաստանը տասներկու մայրաքաղաք է ունեցել՝ Վան, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Շիրակավան, Կարս, Անի և Երևան:

Վան

Ք. ա. 9-րդ դարի երկրորդ կեսին, ինչպես հայտնի է, Սարդուրի I արքան հիմնադրեց Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքը:

Քաղաքի հիմնադիր արքայի օրոք Վանի կենտրոնում վեր խոյացող լեռան լանջերին կառուցվում են բազմաթիվ զինանոցներ, պահեստներ, դիտակետեր, իսկ միջնաբերդի ստորոտում՝ հզոր պարիսպ:



Վանի բերդը

Դրանից հետո էլ՝ Երվանդունիների օրոք, Վանը դարձյալ Հայաստանի մայրաքաղաքն էր: Արքայանիստ քաղաքը որոշ ժամանակ կրում էր Երվանդավան անունը: Քաղաքի բուռն զարգացումը շարունակվեց նաև Արտաշեսյանների ժամանակ: Տիգրան Մեծն այստեղ բազմաթիվ արհեստավորների ու առևտրականների բնակեցրեց: Քաղաքը ծաղկում էր նաև 10-11-րդ դարերում՝ Վասպուրականի Արծրունյաց թագավորության օրոք:

19-րդ դարում Վանը Արևմտյան Հայաստանի կարևոր կենտրոն-ներից էր, այստեղ հատկապես զարգացած էին արհեստները: Մեծ համբավ ունեին վանեցի ոսկերիչներն ու արծաթագործները: Մեծ եղեռնի ժամանակ հայկական Վանը ոչնչացվեց:

Այժմ Վանը գավառական ոչ մեծ քաղաք է ներկայիս Թուր-քիայի տարածքում:

Արմավիր

Պեղումներ Արմավիրում

Ներկայիս Արմավիրի մարզի Հայկավան գյուղի մոտ մի մեծ բլուր կա: Բլրի գագաթին պա-րիսպների, պալատների, տա-ճարների և այլ շինությունների մնացորդներ կան: Դրանք բոլորն ի հայտ են եկել պատմական Հայաստանի Արմավիր քաղաքի՝ մեր օրերում կատարված պե-ղումների հետևանքով: Գրեթե երեք մետր բարձրությամբ հողա-գույն պատերն ու աղյուսաշեն սենյակները վկայում են, որ ժամանակին այստեղ ծաղկուն քաղաք է եղել: Մովսես Խորենացին Արմավիրի հիմնադրումն ու անվան ծագումը կապում է Հայկ Նահապետի թոռ Արամայիսի անվան հետ:

Արմավիրը մշակութային ու կրոնական խոշոր կենտրոն էր: Այստեղ բազմաթիվ մեհյաններ և հեթանոսական այլ սրբավայրեր կային: Իսկ քաղաքի շրջակայքում Սոսյաց անտառն էր, որի ծառերի տերևների սոսափյունով քրմերը գուշակություններ էին անում: Ք. ա. 3-րդ դարի վերջերին, երբ Հայաստանի նոր մայ-րաքաղաք դարձավ Երվանդաշատը, Արմավիրի դերը նվազեց:

Արմավիր մայրաքաղաքն այժմ չկա: Բայց նրա անունով կան Արմավիր մարզկենտրոնը, Հայաստանի այլ բնակավայրեր և Արմավիր հայաշատ քաղաքը Հյուսիսային Կովկասում:

Երվանդաշատ

Ք. ա. 220թ. գահ բարձրացավ Երվանդունյաց արքայատոհմի վերջին ներկայացուցիչը՝ Երվանդ Վերջինը: Այնտեղ, ուր Արաքս և Ախուրյան գետերը միախառնվում են, Երվանդ Վերջինը կառուցում է նոր մայրաքաղաք՝ Երվանդաշատը: Երվանդ արքան իր ունեցած գրեթե ողջ հարստությունը կուտակում է Երվանդաշատում, իսկ հեթանոսական աստվածների արձանները տեղափոխում դրանից հյուսիս՝ Ախուրյանի ափին կառուցած Բագարան քաղաք: Մայրաքաղաքից ոչ հեռու նա կառուցել է տալիս նաև Երվանդակերտ դաստակերտը:

Ինձ համար քաղցր է պատմել նաև գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտի մասին, որ նույն Երվանդը շինեց գեղեցիկ և չքնաղ հորինվածքով: Որովհետև մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչությամբ և պայծառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիբը, իսկ բնակության շուրջը կազմում է ծաղկանոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շուրջը աչքի մյուս բոլորակը: Իսկ այգիների բազմությունը նմանվում էր խիտ արտևանունքի գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարաձև դիրքը իսկապես համեմատվում էր գեղեցիկ կույսերի հոնքերի հետ: Իսկ հարավային կողմից հարթ դաշտերը հիշեցնում էին ծնոտների գեղեցիկ ողորկությունը: Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով պատկերանում էր մի բերան՝ իր երկու շրթունքներով:

Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»

Արտաշատ

Արտաշատը, ինչպես և Արմավիրը, Հայաստանի Հանրապետության ներկայիս քաղաքներից է, մարզային կենտրոն: Ի տարբերություն Արմավիրի, որը նույնանուն մարզի կենտրոնն է, Արտաշատը Արարատի մարզկենտրոնն է, և դա պատահական չէ: Այդ քաղաքները, ինչպես և նրանց հնամենի անվանակիցները, Արարատի հավերժական հայացքի տակ են: Հայոց սրբազան լեռան աչքի առաջ շատ քաղաքներ են ծնունդ առել. դրանցից են



Ժամանակակից Արտաշատ քաղաքի մուտքը

Վաղարշապատը, որն առ այսօր գոյություն ունի նույն անունով և նույն տեղում, Դվինը, որը շուրջ կես հազարամյակ Հայաստանի մայրաքաղաքն էր, և ներկայիս մայրաքաղաք Երևանը:

Արտաշատը հիմնադրել է Արտաշես Ի-ը Հին աշխարհի հռչակավոր զորավար Հաննիբալի խորհրդով: «Հայկական Կարթագենը»[1], ինչպես Արտաշատն անվանեցին ժամանակակիցները, միասնական հատակագիծ ունեցող մեծ ու գեղեցիկ քաղաք էր:

Տիգրանակերտ քաղաքի մասին մենք արդեն զրուցել ենք Տիգրան Մեծի մասին պատմող դասում:

Վաղարշապատ

Հայոց **Վաղարշ Ի** թագավորը (117-140թթ.), պարսպապատելով Վարդգեսավան հին բնակավայրը՝ վերանվանում է Վաղարշապատ և հռչակում մայրաքաղաք:

Վաղարշապատի միջնաբերդը համարյա համընկնում էր Էջմիածնի վանքի ներկայիս տարածքին: Այնտեղ էին թագավորական պալատը, զորանոցները և այլ շինություններ: Վաղարշապատի դերը հատկապես մեծացավ 4-րդ դարի սկզբին, երբ քրիստոնեության ընդունումից հետո՝ 303թ. այստեղ կառուցվեց Էջմիածնի Մայր տաճարը: Նրա անունով էլ հետագայում քաղաքը կոչվեց Էջմիածին:

Դարեր շարունակ Վաղարշապատը հայոց հոգևոր կենտրոնն էր: 1441թ.՝ հազարամյա ընդմիջումից հետո այստեղ վերահաստատվեց Ամենայն հայոց կաթողիկոսական աթոռը:

---

1. **Կարթագեն** – Աֆրիկայի հյուսիսում եղած հնադարյան նշանավոր քաղաք-պետություն, որը երեք անգամ պատերազմի մեջ է եղել հռոմեացիների հետ: Կարթագենի ամենանշանավոր զորավարը Հաննիբալն էր:

Դվին

4-րդ դարի 30-ական թթ. հայոց **Խոսրով Կոտակ** թագավորը Արտաշատից ոչ հեռու, բլրի վրա հիմնեց երկրի նոր մայրաքաղաքը՝ Դվինը (քաղաքն այդպես էր կոչվում համանուն բլրի անունով): Արշակունյաց թագավորության անկումից հետո Դվինը մարզպանական Հայաստանի կենտրոնն էր: 5-րդ դարի երկրորդ կեսին, երբ կաթողիկոսական աթոռը Վաղարշապատից տեղափոխվեց այստեղ, Դվինը դարձավ նաև Հայաստանի հոգևոր, մշակութային կենտրոնը: Այդ ամենի հետ Դվինը ևս մի կարևոր դեր կատարեց: 4-5-րդ դարերում Հայաստանի քաղաքների մեծ մասն ավերվել էր: Իսկ Դվինը, ընդհակառակը, վարչական կենտրոն լինելու շնորհիվ շարունակում էր մնալ որպես արհեստների և առևտրի խոշոր կենտրոն: Արհեստագործության շատ ճյուղեր, որոնք այլ քաղաքներում գրեթե վերացել էին, Դվինում պահպանվեցին: Այսպիսով, Դվինը դարձավ արհեստագործության ավանդույթները պահպանողն ու փոխանցողը: Դվինի ավերակներն այժմ փռված են Արտաշատի Վերին Դվին, Ներքին Դվին, Հնաբերդ և այլ գյուղերի տարածքներում:



Դվինի կենտրոնական թաղամասը

Բագարան, Շիրակավան, Կարս

Բագրատունյաց թագավորության օրոք Հայաստանը չորս մայրաքաղաք է ունեցել՝ Բագարան, Շիրակավան կամ Երազգավորս, Կարս և Անի:

885թ. Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք դարձավ **Բագարանը:** Այստեղ էր Բագրատունիների տոհմական դամբարանը:

Աշոտ Ի-ին հաջորդած Սմբատ Ի Բագրատունու օրոք մայրաքաղաք դարձավ **Շիրակավանը,** որը մինչ այդ նրա նստա-

վայրն էր: Ինչպես և Բագարանը, այն Շիրակում էր, Անիից ոչ հեռու, Ախուրյան գետի աջ ափին:

Բագրատունյաց հաջորդ գահակալը՝ Աշոտ Երկաթը, իր թագավորության վերջում եղբորը՝ Աբասին, նշանակեց Կարս քաղաքի կառավարիչ: Աշոտ Երկաթից հետո թագավոր դարձած Աբասը չտեղափոխվեց Շիրակավան: Բագրատունյաց Հայաստանի նոր մայրաքաղաք դարձավ Կարսը: Կարսում Աբաս արքան մեծ շինարարություն սկսեց: Կառուցապատվեց քաղաքի միջնաբերդը, որտեղ թագավորական պալատն ու այլ շինություններ էին: Կարսագետի ափին կառուցվեց Ս. Առաքելոց Մայր եկեղեցին: Դրանից հազար տարի հետո Եղիշե Չարենցն իր «Երկիր Նաիրի» վեպում հայրենի քաղաքի մասին կգրի. «Առաքելոց եկեղեցին ամենամեծ ու ամենանվիրական հրաշալիքն է, զարդն է, զարմանքն է այդ հնամյա քաղաքի»:



Տիգնիս ամրոցը Շիրակում

Առաքելոց եկեղեցին և Կարսի բերդը

Անի

Պատմիչներն Անի քաղաքն անվանել են «մեծ», «տիեզերահռչակ»: Այդ անուններին Անին արժանացել է իր հրաշալի պալատների, տաճարների, կամուրջների և այլ կառույցների համար: Տպավորիչ են անգամ նրա ավերակները:

Անին Բագրատունյաց Հայաստանի չորրորդ և վերջին մայրաքաղաքն էր: Մայրաքաղաք դառնալուց հետո Անին այնպիսի թափով է զարգանում և ընդարձակվում, որ Սմբատ II արքան ստիպված է լինում կառուցել նոր պարիսպներ: «Սմբատյան» կոչված այդ պարիսպների շուրջը երկուսուկես կիլոմետր և մինչև 10-12 մետր լայնությամբ խանդակ էր փորված, որը լցվում էր ջրով: Պաշտպանական նպատակներից բացի՝ այն օգտագործվում էր նաև ոռոգման համար: Պարիսպներն ունեին քանդակներ և արձանագրություններ: Անիի գլխավոր դարպասի՝ Ավագ դռան վրա քաղաքի զինանշանն էր՝ վազող հովազի բարձրաքանդակը: Պաշտպանական կարևոր նշանակություն ունեին նաև Անիի կամուրջները: Դրանցից մեկը ափերի հետ կապվում էր շարժական տախտակամածների միջոցով: Վտանգի դեպքում տախտակամածը բարձրացվում էր: Կար նաև քարանձավային և ստորգետնյա Անի՝ իր բնակարաններով, սրահներով ու խորշերով, որոնք հիանալի թաքստոցներ ու ծուղակներ էին:

Ճարտարապետ Թ. Թորամանյանը Անիում

Անիի գլխավոր փողոցը 4-5 մետր լայնություն ուներ: Այս փողոցով էր անցնում ջրմուղի հիմնական գիծը: Ջրմուղը ոչ միայն կավե, այլև երկաթե խողովակներ ուներ:

Անին եկեղեցաշատ քաղաք էր: Քաղաքի մասին խոսելիս հաճախ ասվում էր՝ Անին հազար ու մեկ եկեղեցի ունի: Քաղաքն ուներ իր համալսարանը, մատենադարանը:

Հայոց հռչակավոր մայրաքաղաքն արհեստի և առևտրի խոշորագույն կենտրոն էր: Անեցի վաճառականները առևտուր էին անում Բյուզանդիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Չինաստա-

նի և այլ երկրների հետ: Հետագա դարերում Անին բազմիցս հարձակումների է ենթարկվել, ավերվել է և դարձյալ վերակառուցվել: Պատերազմները, երկրաշարժերն ու այլ աղետները կամաց-կամաց քայքայեցին քաղաքը: 16-րդ դարում այն սովորական մի գյուղ էր, իսկ երկու դար հետո այնտեղ այլևս բնակիչներ չկային:

Անին միջնադարյան Հայաստանի ամենալավ ուսումնասիրված քաղաքներից է: Հայոց հռչակավոր մայրաքաղաքի մասին գրվել են տասնյակ գրքեր, բազմաթիվ երգեր, բանաստեղծություններ և գեղարվեստական այլ գործեր:

Անիի Սմբատյան պարիսպները

Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկեք պատմական Հայաստանի մայրաքաղաքները:
2. Երբ և ո՞ւմ օրոք է Վանը դարձել մայրաքաղաք: Ուրիշ ինչ անուններով է հայտնի:
3. Արմավիր անունով ժամանակակից ինչ քաղաքներ գիտեք:
4. Ո՞ւմ անունն են կրում Երվանդաշատը, Արտաշատը, Տիգրանակերտը, Վաղարշապատը:
5. Հաջորդաբար թվարկեք Բագրատունյաց Հայաստանի չորս մայրաքաղաքները:
6. Ինչն է վկայում, որ Անին իր ժամանակի մեծ և զարգացած քաղաքներից էր:

ԴԱՍ 30
ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԵՐԵՎԱՆԸ

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր Դվին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք:

Պարույր Սևակ

Երևանի զինանշանը

Վարդագույն քարե ծաղկեփնջի է նման մեր հանրապետության մայրաքաղաքը: Այդ ծաղկեփնջի ամենագեղեցիկ «ծաղիկը» Երևանի կենտրոնն է՝ բազմաթիվ հրաշալի շենքերով ու շինություններով: Հանրապետության հրապարակը օղակող շենքերի մոտով քայլելիս մարդկանց ուշադրությունն են գրավում կամարաձև պատշգամբները, սլացիկ խոյակները, խաղողի, նռան, տարբեր թռչունների զանազան զարդանախշերը: Յուրօրինակ է Երևանը իր ճարտարապետական կոթողներով: Հատկապես առանձնանում են Կառավարության տունը, Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը, Մարզահամերգային համալիրը և այլն: Ծիծեռնակաբերդի բլրի վրա հայրենի հողի ճեղքված վերքի նման վեր է խոյանում Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողը: Մայրաքաղաքի մյուս բարձրադիր վայրում՝ Հաղթանակի զբոսայգում, սուրը ձեռքին կանգնած է «Մայր Հայաստան» հուշարձանը: Քաղաքի բարձունքներից մեկում՝ Եռաբլուր պանթեոնում հանգչում են հայոց նորօրյա՝ Արցախյան ազատամարտի հերոսների աճյունները:

Մերօրյա Երևանը ներառել է Հայաստանի անցյալի մայրաքաղաքների փառքն ու հիշատակները: Դրանք ապրում են փողոցների, հյուրանոցների անվանումներում՝ Էրեբունի, Դվին, Անի և այլն: Պատմական Հայաստանի հիշատակներն ապրում են Զեյթուն, Մալաթիա-Սեբաստիա, Կիլիկիա, Արեշ և այլ թաղամասերի անվանումներում:

Երևանը տարածված է Արարատյան դաշտի կենտրոնական մասում: Նրա տարածքը հատում է Հրազդան գետը, որի գեղատեսիլ կիրճը, հորիզոնի տարբեր կողմերում գտնվող Մասիսների և Արագածի համայնապատկերը առանձնակի գեղեցկություն են հաղորդում քաղաքին:

Երևանը խոշորագույնն է ոչ միայն մեր երկրի ներկայիս քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում: Այն աշխարհի հնագույն քաղաքներից է:

Արգիշտի Առաջինի արձանագրությունը

Երևանի հիմնադիրը, ինչպես հայտնի է, Արգիշտի I թագավորն է, որը ներկայիս Երևանի տարածքում գտնվող Արինբերդ բլրի ստորոտում կառուցեց Էրեբունի ամրոցը: Այստեղ հայտնաբերված քարե սալի վրա, Ք. ա. 782թ. Արգիշտիի անունից արված արձանագրության մեջ նշված է. «Խալդ աստծո մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս անառիկ ամրոցը կառուցեց և անվանեց Էրեբունի քաղաք՝ ի հզորություն Բիայնայի և ի սարսափ թշնամիների»: Ամրոցի պեղված միջնաբերդը, թագավորական պալատի ավերակների հետ, վերածվել է բացօթյա թանգարանի, որին կից ստեղծվել է «Էրեբունի» թանգարանը:

Ամեն տարի աշնանը մեր մայրաքաղաքը տոնական եռուզեռի մեջ է լինում. այդ օրերին անցկացվում է Երևանի ծննդյանը նվիրված Էրեբունի-Երևան տոնակատարությունը:

Երևանի տարածքի հնագույն բնակավայրերից է Շենգավիթը, որը գտնվում է այժմյան Երևանյան լճի ձախ ափին գտնվող բլրի վրա:

Հիշե՛ք, թե ինչով էր հայտնի Շենգավիթը:

Ժամանակակից Երևանը մայրաքաղաք է դարձել 1918թ., երբ վերականգնվեց հայոց պետականությունը և հիմնադրվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Հետագայում այն անընդհատ կառուցապատվել է, ընդարձակվել, ներառելով ոչ միայն Արարատյան դաշտի մշակովի և անմշակ ընդարձակ հողատարածքներ, այլև հարակից շատ գյուղական բնակավայրեր: Դրանցից են Նորքը, Առինջը, Ավանը և այլ բնակավայրեր: Երևանում ապրում է ավելի քան 1 մլն 200 հազ. մարդ: Այն աշխարհի խոշոր շատ քաղաքների նման անընդհատ բարեկարգվում է: Վերջին տարիներին մեր մայրաքաղաքի առանձին հատվածներ հիմնովին վերափոխվել են, կառուցվել են նոր թաղամասեր: Դրանցից են Հյուսիսային պողոտան, Վահագնի թաղամասը և այլն:

Երևանում են հանրապետության խորհրդարանը (Ազգային ժողովը), Կառավարությունը, բոլոր նախարարությունները և համապետական հաստատությունները: Երևանը ՀՀ նախագահի նստավայրն է: Այստեղ են արտասահմանյան երկրների դեսպանատները, միջազգային կազմակերպությունների գրասենյակները:

Երևանի Հանրապետության հրապարակը

Երևանը Հայաստանի տնտեսական և մշակութային գլխավոր կենտրոնն է և յուրօրինակ խաչմերուկ: Այստեղ հատվում են Հայաստանի խոշոր քաղաքները միմյանց և հարևան պետություններին կապող ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհները: Միաժամանակ Հայաստանի գլխավոր օդային դարպասն է՝

«Զվարթնոց» և «Էրեբունի» միջազգային օդանավակայաններով: Երևանում կան բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ, մշակութային կենտրոններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, գիտական հիմնարկներ: Երևանը իր թանգարաններով, տեսարժան վայրերով, ժամանակակից հյուրանոցներով դեպի իրեն է ձգում բազմաթիվ զբոսաշրջիկների:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երևանի ինչ ճարտարապետական կոթողներ կարող եք նշել:
2. Ո՞վ և ե՞րբ է հիմնադրել Երևանը: Հաշվե՛ք.
   – քանի՞ տարի է անցել Երևանի հիմնադրումից մինչ այսօր,
   – քանի՞ տարեկան կլինի Երևանը 2018, 2033 թվականներին:
3. Նշե՛ք Երևանի հին ու նոր թաղամասերի, փողոցների անուններ: Փորձե՛ք ճշտել դրանցից մի քանիսի ծագումը:
4. Բնութագրե՛ք Երևանի աշխարհագրական դիրքը:
5. Պետական կառավարման ինչ մարմիններ կան մեր մայրաքաղաքում:
6. Ինչպիսի՞ տնտեսական, մշակութային, տրանսպորտային նշանակություն ունի Երևանը Հայաստանի համար:

Երևանն այսօր

ԴԱՍ 31–32

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ինչ է ժողովրդական բանահյուսությունը և ինչ դեր ունի:
2. Ինչ դեր է կատարել Մեսրոպ Մաշտոցը հայ ժողովրդի կյանքում:
3. Ինչով է առանձնահատուկ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:
4. 5-7-րդ դարերում գիտության որ ճյուղերն էին հատկապես զարգացած Հայաստանում. այդ ժամանակաշրջանի ինչ նշանավոր գիտնականների գիտեք:
5. Գրիգոր Նարեկացու որ ստեղծագործությունն է ժողովուրդը համարել բուժիչ զորությամբ օժտված, ինչու:
6. Ովքեր էին աշուղները: Ինչ գիտեք նրանց մասին:
7. Հովհաննես Թումանյանի և Եղիշե Չարենցի ինչ ստեղծագործություններ գիտեք: Ո՞րն է ձեր ամենասիրելի ստեղծագործությունը կամ հերոսը:
8. Կոմիտասին հաճախ համեմատում են Մեսրոպ Մաշտոցի հետ, ինչու:
9. Արամ Խաչատրյանը հայտնի է ամբողջ աշխարհում: Իսկ Հայաստանում ինչ է կապված նրա անվան հետ:
10. Դասագրքում նշված նկարիչներից բացի՝ ուրիշ ինչ հայ գեղանկարիչների գիտեք: Պատմեք նրանց մասին:
11. Ժողովրդական մշակույթի որ ճյուղերն են կոչվում կիրառական արվեստ:
12. Միջնադարյան և ժամանակակից ինչ նշանավոր հայ ճարտարապետների գիտեք: Թվարկեք նրանց ստեղծագործություններից մի քանիսը: Ինքներդ տեսել եք դրանցից մեկերկուսը: Պատմեք այդ մասին:
13. Թվարկեք հայոց մայրաքաղաքներ, որոնք հիմնվել են՝
    – Արարատյան դաշտում,
    – Շիրակում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Վանա լիճ

Վանա լիճը (հնում՝ Տոսպա, Ռշտունյաց, Բզնունյաց, Վասպուրականի ծով, Աղթամար, Նաիրի երկրի ծով) անհոսք աղի լիճ է Հայկական Տավրոսի հյուսիս-արևելքում, ծովի մակարդակից 1720 մ բարձրության վրա: Լճի երկարությունը մոտ 125 կմ է, առավելագույն լայնությունը՝ մոտ 51 կմ, իսկ առավելագույն խորությունը 451 մ է: Վանա լճի հայելին ավելի քան երկու անգամ մեծ է Սևանա լճի հայելուց: Լիճն ունի անկանոն քառանկյան տեսք, խիստ կտրտված է, հաճախ՝ զառիթափ ափերով: Լճում կան կղզիներ՝ Լիմ, Առտեր, Կտուց, Աղթամար:

Լիճը սնվում է մթնոլորտային տեղումներից, ստորերկրյա ջրերից և գետերից: Վանա լիճ են թափվում Բերկրի, Արճեշ, Մարմետ, Խոշաբ և այլ մանր գետեր: Լիճը, նույնիսկ խիստ սառնամանիքների դեպքում, ամբողջությամբ չի սառցակալում և մեղմացնում է շրջապատի կլիման: Սառցակալում են միայն նրա հյուսիսարևելյան և հարավարևելյան ծայրամասային ծանծաղ շրջանները:

Վանա լճի օրգանական աշխարհն աղքատ է: Ձկներից միայն տառեխն է: Թռչնաշխարհին բնորոշ են որորներն ու ջրագռավները, որոնք այստեղ են գալիս հարևան Նազիկ լճից: Վանա լճին բնորոշ են մակարդակի տատանումները: Ներկայումս լճի մակարդակը բարձրանում է, որի պատճառով որոշ բնակավայրեր մնացել են ջրի տակ: Մերձափնյա բնակչությունը զբաղվում է ձկնորսությամբ և աղի արդյունագործությամբ: Լճափերին զարգացած են այգեգործությունը, պտղաբուծությունն ու ձիթենու մշակությունը:

Հնագույն ժամանակներից Վանա լիճը նավարկելի է եղել:

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ»
Ավետիք Իսահակյանի հուշերից

Լոռիում եմ. Սարոյի, Սաքոյի, Անուշի հայրենիքում. Օհաննեսի հետ, նրա հարկի տակ: Ինչ կար ավելի քաղցր, քան այդ ժամերը: Օհաննեսի հետ շրջում ենք Դսեղ գյուղում, նրա շրջակայքում: Հին, հնադարյան գյուղ է Դսեղը, ամեն կողմում՝ անցյալի բեկորներ: Գնում ենք գերեզ-մանատուն. այցելում ենք Օհաննեսի հոր շիրիմին. Օհաննեսի աչքերն արցունքոտվում են. ութ տարի է անցել հոր մահից, բայց վիշտը չի անցել: Եվ նորից պատմում է նա ինձ իր սքանչելի հոր մասին. ազնվական, բարի, սիրող սրտով մարդ, բանաստեղծական հոգով:

«Ինչ որ կա իմ մեջ լավ բան՝ հորիցս է», - ասում է նա:

Գնում ենք բարձրաքաշ Ս. Գրիգորի հոյակապ վանքը տեսնելու, մեր միջնադարյան ճարտարապետության մի փառավոր կոթող:

Գնում ենք լիճը տեսնելու, որ դսեղցիները, լոռեցուն հատուկ չա-փազանցությամբ, ծով են կոչում: Բարձրանում ենք մի զառիվեր, որտեղից սկսվում են Մարցի չքնաղ անտառները:

Օհաննեսի մանկության և խաղերի վայրերն են սրանք:

Ամեն կողմից դեպի երկինք են մխրճվում լեռնագագաթները. լան-ջերը՝ անտառապատ, բարձր ժայռերի վրա հսկա ծառեր կան, ավելի բարձր՝ արծվի բներ: Ձորակներից ծուխ է բարձրանում. հովիվների բինաներն են, ուր ապրում են աժդահա սաքոները:

...Գյուղի շուրջը բազկատարած շառաչում են «կանաչ, վիթխարի ընկուզենիները». և արդյոք որի՞ տակ Օհաննեսը օրհնություն ստացավ գյուղի մեծերից:

Ձիեր նստած թափառում ենք Լոռվա գյուղերում: Գնացինք Օձուն, Սանահին, Հաղպատ և այլուր:

Շրջեցինք Լոռվա գրեթե մեծ մասում:

«Մի գրողի ճանաչելու համար պետք է լինել նրա հայրենիքում»,- այսպիսի մի միտք է հայտնել գերմանացի բանաստեղծ Գյոթեն:

Լոռին նահապետական մի ինքնամփոփ աշխարհ է. հեքիաթի, առասպելի մի վիպաշխարհ, դյուցազնական աշխարհ. նրա ամեն մի անկյունը՝ ավանդավեպ, ամեն մի քարը՝ խոսող հերոսական անցյալից:

...Քաջությունը, իգիթությունը լոռեցու հատկություններն են: Օհան-նեսի նախահայր պապը Լոռվա ձորերի և անտառների նահապետ քաջ Հովակիմն է՝ Մեհրաբյան-Թումանյան Հովակիմը, որի մասին հոմե-րական ոճով գրում է Խաչատուր Աբովյանը:

Մի հսկա, ժայռեղեն տղամարդ, որը պաշտպանում է Լոռին անթիվ հաղթանակող կռիվների մեջ:

Ինքը՝ Օհաննեսը, քաջ մարդ էր, լավ հրացանաձիգ, որսկան:

Երբ շրջում էինք գյուղերում, բոլոր գյուղացիները ճանաչում էին Օհաննեսին և խորին հարգանքով վերաբերվում նրան: Օհաննեսն էլ ճանաչում էր գրեթե բոլորին, մանավանդ տարեց լոռեցիներին, զրույց էր անում նրանց հետ, կատակում Լոռվա համով-հոտով բարբառով:

…Լոռիում Օհաննեսն իր տարերքի մեջ էր: Այս հոյակապ բնության մեջ, այս՝ ավանդություններով, առասպելներով, հիշատակներով լի չքնաղ սարերում ու ձորերում նա բազմապատկվել էր կյանքով:

…Դյուցազնական-նահապետական Լոռին իր շքեղ բնությունով, իր ավանդներով ու սովորույթներով, նրա հինավուրց ժողովուրդն իր կենսահայացքով, իր ցավերով, նաև իր պայքարով եղան Օհաննեսի ներշնչարանը: Այստեղից է հորդահոս գալիս Օհաննեսի ստեղծագործության աննախընթաց ժողովրդայնությունը:

Կոմիտասի հուշերից

1881թ. եկա Ս. Էջմիածին և ընդունվեցի Գևորգյան ճեմարանի Ա դասարան:

Մտանք վեհարան: Բազմած էր Հայոց հայրապետը՝ պատկառելի մի ծերունի: Սկսեց ինձ հարցուփորձ անել: Ես չէի հասկանում, թե ինչ էր ասում, որովհետև խոսում էր հայերեն, իսկ ես, ինչպես և մեր քաղաքացիները, տաճկախոս էի: Թեև հայերեն գրել-կարդալ գիտեի, բայց բոլոր առարկաներն անցել էի թուրքերեն, ուստի չէի հասկանում կարդացածս ու գրածս հայերենը: Վեհը տեսավ, որ ես հայերեն չեմ իմանում, ասաց տաճկերեն լեզվով. «Դու զուր ես եկել այստեղ, որովհետև մեր ճեմարանում ամեն բան հայերեն են անցնում»: Ես էլ, առանց քաշվելու, մանկական միամտությամբ համարձակվեցի և ասացի. «Ես էլ եկել եմ հայերեն սովորելու»:

- Էհ, լավ, ձայն ունե՞ս, երգել գիտե՞ս:

- Այո՛, ունեմ և գիտեմ:

- Ի՞նչ երգեր գիտես:

- Ինչ ասես գիտեմ՝ հայերեն, տաճկերեն, եկեղեցական, աշխարհական:

- Շատ լավ, «Լույս զվարթ» գիտե՞ս:

- Գիտեմ:

«Լույս զվարթ»-ը երգելիս նկատեցի, թե ինչպես արցունքները գլորվում էին և թավալվելով երկար, ճերմակ մորուսի վրայով՝ կորչում էին վերարկուի ծալքերի մեջ:

– Ասոր ճեմարան տարեք,– հրամայեց Վեհը իր դիվանապետին:

Մելիքություններ

16-րդ դարից Արցախի իշխանները մելիք տիտղոսն էին կրում: Մելիք բառացի նշանակում է թագավոր: Հասկանալի է, որ նրանք թագավոր չէին, այլ՝ գավառական կառավարիչներ:



Արցախում ազատագրական ձգտումները արթուն էր պահում Գանձասարի կաթողիկոսությունը:

Մելիքական պաշտոնը ժառանգական էր: Մելիքին փոխարինում էր ավագ որդին, իսկ ժառանգ չունենալու դեպքում՝ եղբայրը: Սակայն ամեն մի նոր մելիք իր պաշտոնը կարող էր ստանալ միայն պարսից շահի հրովարտակից հետո: Մելիքները պարտավոր էին ժամանակին վճարել պետական հարկերը, մելիքության սահմանները պաշտպանել արտաքին հարձակումներից, պատերազմի ժամանակ իրենց զորքով ներկայանալ շահին: Մնացած հարցերում նրանք ինքնուրույն էին:

Մելիքներն իրավունք ունեին պատժելու և պարգևատրելու իրենց հպատակներին: Դատավարության իրավունքը նույնպես նրանց ձեռքին էր:

Մելիքության գյուղերն ունենում էին գյուղացիների կողմից ընտրված տանուտերեր: Այդ ընտրությունը հաստատում էր մելիքը: Տանուտերը հետևում էր գյուղի կարգուկանոնին, հավաքում հարկերը, դատում մանր հանցագործներին:



Մելիքական իջևանատուն Սյունիքի Խնածախ գյուղում. 17-րդ դար

Զինվորական պարտադիր ծառայություն չկար, և մելիքները մշտական բանակ չունեին: Բայց մելիքներից յուրաքանչյուրը՝ որպես թիկնապահների, իր մոտ մշտապես պահում էր մոտ 300 զինվորի: Պատերազմի ժամանակ զենք կրելու ընդունակ բոլոր չափահաս տղամարդիկ պարտավոր էին ներկայանալ մելիքին: Զորքը ղեկավարում էին մելիքի նշանակած հարյուրապետներն ու հազարապետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մեր հայրենիքը Հայաստանն է 3

ԳԼՈՒԽ 1. ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

2. Հայկական լեռնաշխարհ 5
3. Հայոց բնօրրանը 13
4. Հայաստանի Հանրապետություն 17
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն 23
6. Իմ հայրենիքի փոքր անկյունը 27

ԳԼՈՒԽ 2. ԻՄ ԼԵԶՈՒՆ, ԻՄ ՀԱՎԱՏԸ, ԻՄ ԵԿԵՂԵՑԻՆ

7-8. Մեր լեզուն հայերենն է 35
9. Իմ հավատը, իմ եկեղեցին 41

ԳԼՈՒԽ 3. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

10. Պատմություն և առասպել 44
11. Առասպելներ 48
12. Բիայնա երկրի արքաներ 54
13. Արտաշեսյաններ 59
14-15. Արշակունիներ 66
16. Բագրատունիներ 76
17. Կիլիկիայի հայոց պետությունը 81
18. Հայոց պետականության վերածնունդը 87
19. Կրկնություն 93

ԳԼՈՒԽ 4. ՄԵՐ ԵՐԿՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

20. Հայ մշակույթի անցյալն ու ներկան 95
21. Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև 99
22. Մովսես Խորենացի 103
23. Դավիթ Անհաղթ և Անանիա Շիրակացի 106
24. Հայ գրականության մեծանուն ներկայացուցիչները 109
25. Հայ երգի մեծերը 116
26. Հայ կերպարվեստի խոշոր դեմքերը 122
27. Հայ ժողովրդական մշակույթը 127
28. Ճարտարապետություն 134
29. Հայոց մայրաքաղաքները 141
30. Քաղաքամայր Երևանը 149
31-32. Ամփոփում 153
Լրացուցիչ նյութեր հայրենագիտությունից 154

ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԱՌԱՔԵԼ ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ
ՆԱԻՐԱ ՏՈՂԱՆՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

5-րդ դասարանի դասագիրք

Շապիկի ձևավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Համակարգչային
ձևավորումը և էջկապը՝ Միքայել Աբրահամյանի

Սրբագրիչ՝ Պ. Հակոբյան

«ՄԱՆՄԱՐ» ՀՁ ՓԲԸ
Ղ. Փարպեցու 9/7, հեռ. 53-79-82, 53-79-83
Էլ-փոստ. manmar@arminco.com
www.manmar.am